տրեմն 6%-ով կլինի 6,66 կ.×2=13,32 կ., 30 օրում, 3½-ով=19,44 կ.; տրեմն 7% կլինի 19,44 կ.×2=38,88 կ. և այլն: Երկարդ պրոցեսով էլ նոյն չափ դրամագլուխ, կարելի է հաշուել 100 ր. տոկոսը նաև 7, 8, 9, 10, 11%-ից:

ՓՈՔՐԻԿ ԽՆԱՅՈՂՈՒԹԻՒՆԻՑ ՄԵԾ ԳՈՒՄԱՐ

Իւրաքանչիւր տարի 1 ր. խնայելով և տոկոսով տալով կարելի է ստանալ հետևեալ գումարները.

Տարի.	3%		4%		4½%		5%		5½%	
	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.	ր.	կ.
1	1	00.0	1	00.0	1	00.0	1	00.0	1	00.0
2	2	03.0	2	04.0	2	04.5	2	05.0	2	05.5
3	3	09.1	3	12.2	3	13.7	3	15.3	3	16.7
4	4	18.4	4	24.6	4	27.8	4	31.0	4	34.1
5	5	30.9	5	41.6	5	47.1	5	52.6	5	58.0
6	6	46.8	6	63.3	6	71.7	6	80.2	6	88.0
7	7	66.2	7	89.8	8	01.9	8	14.2	8	26.5
8	8	89.2	9	21.4	9	38.0	9	54.9	9	71.9
9	10	15.9	10	58.3	10	80.2	11	02.7	11	25.3
10	11	46.4	12	00.6	11	28.8	12	57.8	12	87.2
15	18	59.9	20	02.4	20	78.4	21	57.9	22	40.4
20	26	87.0	29	77.8	31	37.1	33	06.6	34	90.0
25	36	45.9	41	64.6	44	56,5	47	72.7	51	19.3
30	47	57.5	56	08.5	61	00.7	66	43.9	72	48.7
35	60	46.2	73	65.2	81	49.7	90	32.0	100	21.8
40	75	40.1	95	02.6	107	03.0	120	80.0	136	61.0
45	92	72.0	121	02.9	138	85.0	159	70.0	184	12.4
50	112	79.7	152	66.7	178	50.3	209	34.8	246	22.1

ԲԱՆԻՒՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Օրավարձի հաշուարար:

Փող վճարելու կամ ստանալու ժամանակ բաւական դժուար է լինում արագ կերպով հաշուել, թէ օրական ո՛րքան պէտք է ստանայ ամսական ռոճիկով աշխատող բանուորը: Այդ դժուարութիւնը դիւրի չափով թեթևացնել կարելի է հետևեալ աղիւսակի միջոցով:

Ամսա-կան	Օրա-վարձ	Ամսա-կան	Օրավար-ձր պէտք է լինի			Ամսա-կան	Օրավար-ձր պէտք է լինի			Ամսա-կան	Օրավար-ձր պէտք է լինի		
Ր.	Կոպ.	Ր.	Ր.	Կոպ.		Ր.	Ր.	Կոպ.		Ր.	Ր.	Կոպ.	
5	16²/₃	23	—	76²/₃		41	1	36²/₃		59	1	96²/₃	
6	20	24	—	80		42	1	40		60	2	—	
7	23¹/₃	25	—	83¹/₃		43	1	43¹/₃		61	2	3¹/₃	
8	26²/₃	26	—	86²/₃		44	1	46²/₃		62	2	6²/₃	
9	30	27	—	90		45	1	50		63	2	10	
10	33¹/₃	28	—	93¹/₃		46	1	53¹/₃		64	2	13¹/₃	
11	36²/₃	29	—	96²/₃		47	1	56²/₃		65	2	16²/₃	
12	40	30	1	—		48	1	60		66	2	20	
13	43¹/₃	31	1	3¹/₃		49	1	63¹/₃		67	2	23¹/₃	
14	46²/₃	32	1	6²/₃		50	1	66²/₃		68	2	26²/₃	
15	50	33	1	10		51	1	70		69	2	30	
16	53¹/₃	34	1	13¹/₃		52	1	73¹/₃		70	2	33¹/₃	
17	56²/₃	35	1	16²/₃		53	1	76²/₃		71	2	36²/₃	
18	60	36	1	20		54	1	80		72	2	40	
19	63¹/₃	37	1	23¹/₃		55	1	83¹/₃		73	2	43¹/₃	
20	66²/₃	38	1	26²/₃		56	1	86²/₃		74	2	46²/₃	
21	70	39	1	30		57	1	90		75	2	50	
22	73¹/₃	40	1	33¹/₃		58	1	93¹/₃		76	2	53¹/₃	

ԶԻՆՀՈՐԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Ռուսահպատակ բոլոր տղամարդիկ անխտիր կեր պով ենթակայ են զինուորագրութեան։ Յօդ. 1-ին. Ծառայութեան մտնելը որոշւում է վիճակով։ Վիճակ հանելու կանչւում են այն երիտասարդները, որոնք մինչև վիճակահանութեան տարեայ հոկտեմբերի 1-ը արդէն լրացրել են 21 տարին։

Ձևսօնաթիւն։ *Զինուրական կանոններով սահմանուած է երեք տեսակի պատօնութիւն— ընտանեկան դրութեան համեմատ (յօդ. 48)։*

Ա.ռաջին կարգի տրսօնաթիւն *տրւում է՝ ա) մէկուհատ որդուն, երբ հայրը մեռած է կամ աշխատանքի անընդունակ է *), բ) միակ աշխատաւոր եղբօրը, երբ բոլոր միւս եղբայրներն ու քոյրերը որբ ու փոքրահասակ են, գ) միակ աշխատաւոր թոռին, երբ պապն ու մամը աշխատանքի ընդունակ որդի չունին, դ) ընտանիքի մի հաւիկ որդուն և ե) ապօրինի ծնուած որդուն, երբ նա մօր միակ խնամողն է։*

Երկրորդ կարգի տրսօնաթիւն *տրւում է միակ աշխատաւոր որդուն, երբ նրա եղբայրները փոքրահասակ են (18 տարեկանից փոքր), իսկ հայրը աշխատանքի անընդունակ։*

Երրորդ կարգի տրսօնաթիւն *տրւում է այն զինուրացուին, որի մի եղբայրը արդէն զինուրական ծառայութեան մէջ է, կամ մեռել է այդ ծառայութեան ընթացքում։ Բայց եթէ զինուրների թիւը չլրանայ, այն ժամանակ այդ արտօնութիւնները կորցնում են իրենց ոյժը. ծառայութեան կանչւում են նախ 3-րդ կարգի արտօնութեան երիտասարդները և ապա 2-րդ կարգինը։*

Վիճակ հանելուց յետոյ զինուրացուները ենթարկւում են **բժշկական ննջուրեան.** *ընդունակ են համարւում միայն նրանք, որոնք բոլորովին առողջ են (յօդ. 45) և որոնց հասակը 2 արշ. 2½ վերշոկից պակաս չէ (յօդ. 46)։ Բայց հասակին պիտի համապատասխանէ կուրծքը, այսինքն կրծքի վանդակի շրջապատը պիտի լինի հասակի կէսը +¼ վերշոկ (յօդ. 46, յաւելուած VII). օրինակ եթէ հասակը 2 արշ. 4 վերշոկ է, կրծքի վանդակը պիտի լինի 1 արշ. 2 վերշոկ+¼ վերշ.=1 արշ. 2¼ վ. և այլն։ Կրծքի վանդակը չափւում է 7 կողի վրայից, թևակների տակից։*

Եթէ զինուրացուն մի որ և է հիւանդութեան կամ ֆիզիքական պակասութեան պատճառով բոլորովին անընդունակ է ծառայութեան, այն ժամանակ ազատւում է, իսկ եթէ նա վատառողջ է կամ կրծքի վանդակը պա-

*) Աշխատանքի անընդունակ են համարւում այն մարդիկ, որոնք հիւանդոտ են կամ արդէն լրացրել են 55 տարեկան հասակը։

հանձած չափից պակաս *) է, այն ժամանակ նրան մի տարի ժամանակ է տրւում կազդուրուելու համար (յօդ. 47). եթէ հետևեալ տարին նոյն պակասութիւնն ունենայ, դարձեալ մի տարի ժամանակամիջոց կտրուի, իսկ եթէ երրորդ տարին էլ նոյնը նկատուի, այն ժամանակ նա բոլորովին կազատուի:

Ցեւոձգումներ (отсрочки). Եթէ գինուորացուն իր անունով գործ ունի կամ սովորում է, այն ժամանակ կարող է ժամանակ խնդրել՝ գործերը կարգի բերելու կամ ուսումը վերջացնելու համար: Առաջին դէպքում նրան ամենաշատը ժամանակամիջոց կտրուի 2 տարի, իսկ երկրորդ դէպքում ծառայութիւնը կր յետաձգուի (յօդ. 61)՝ ա) մինչև 22 տարեկան հասակը 2-րդ կարգի դպրոցներում սովորողներին, բ) մինչև 24 տարեկան հասակը հոգևոր սեմինարիաներում. . . և երկրագործական դպրոցներում սովորողներին, գ) մինչև 27 տարեկան հասակը բարձրագոյն դպրոցներում սովորողներին և այն անձանց, որոնք թէև ուսումը վերջացրել են, բայց պատրաստւում են ուսուցչութեան համար և դ) մինչև 28 տարեկան հասակը՝ հոգևոր ճեմարաններում սովորողներին և այն անձանց, որոնք պատրաստւում են պրօֆեսորական պաշտօնի համար:

*) Երբեմն գինուորագրական վարչութիւնը կարող է ուշադրութիւն չդարձնել կրծի չնչին պակասի վրա, եթէ գինուորագուն բոլորովին առողջակազմ է: Սակայն այդ դէպքում պակասը ամենաշատը կէս վերսկից աւել չպիտի լինի:

Բողոք: Քաղաքային կամ գաւառական «գինուորագրական վարչութեան» մի որ և է վճռից կամ կարգադրութիւնից դժգոհ եղողը կարող է բողոք ուղարկել «նահանգական գինուորագրութեան վարչութեանը»—վճիռը կայանալուց յետոյ, չորս շաբաթուայ ընթացքում (յօդ. 228). բողոքը պէտք է ուղարկել անպատճառ այն «գինուորագրական վարչութեան» միջոցով, որի դէմ ուղղուած է նա: Հակառակ դէպքում բողոքը անհետևանք կմնայ: Քաղաքային կամ գաւառական «գինուորագրական վարչութիւնը» այդ բողոքը ստանալուն պէս 7 օրուայ ընթացքում պիտի ուղարկէ ըստ պատկանելոյն իր բացատրութեան հետ միասին (յօդ. 229): Գինուորութեան վերաբերեալ բոլոր խնդիրներն ու բողոքները ազատ են դրոշմաուրքից, այսինքն առանց մարկայի:

Կամաւոր գինուոր (вольноопредѣляющійся). Որոշ կրթութիւն ունեցող երիտասարդները կարող են կամաւոր գինուոր դառնալ: Այդ դէպքում նորա կծառայեն 1 տարի, եթէ աւարտել են բարձրագոյն կամ միջնակարգ դպրոց, (գիմնազիայի և բէալականի 6-րդ դաս. ոչ պակաս) և 2 տարի, երբ համապատասխան ծրագրով ստոմանած քննութիւնն են բռնել:

Կամաւոր գինուոր դառնալու համար պէտք է խնդիր տալ ամենաուշը վիճակահանութեան օրից 2 ամիս առաջ:

Ահա մի աղիւսակ, որ ցոյց է տալիս, թէ որքան պիտի լինի կրծքի վանդակի շրջագաւառը դանազան հասակների համեմատ (յօդ. 46, յաւելուած VII).

Հասակը		Կուրծքի վանդակը	
արշ.	վերշօկ.	արշ.	վերշօկ.
2	$2^1/_8$	1	$1^4/_8$
2	$2^6/_8$	1	$1^5/_8$
2	3	1	$1^6/_8$
2	$3^2/_8$	1	$1^7/_8$
2	$3^4/_8$	1	2
2	$3^5/_8$	1	$2^1/_{16}$
2	$3^6/_8$	1	$2^1/_8$
2	$3^7/_8$	1	$2^1/_8$ և $1/_{16}$
2	4	1	$2^2/_8$
2	$4^1/_8$	1	$2^2/_8$ և $1/_{16}$
2	$4^2/_8$	1	$2^3/_8$
2	$4^3/_8$	1	$2^3/_8$ և $1/_{16}$
2	$4^4/_8$	1	$2^4/_8$
2	$4^5/_8$	1	$2^4/_8$ և $1/_{16}$
2	$4^6/_8$	1	$2^5/_8$
2	$4^7/_8$	1	$2^5/_8$ և $1/_{16}$
2	5	1	$2^6/_8$
2	6	1	$3^2/_8$

ԲԺՇԿԻ ԿՈՉԸ ՍՆԱՊԱՇՏ ՄԱՐԴԿԱՆՑ *)

Ի՞նչեր չի անում մնապաշտութիւնը. լինչ փորձանքներ ասես, որ առաջ չեն գալիս մարդկային մտքի մոլորութիւնից։ «Մնապաշտութիւնը, իբրեւ ցաւ կերպով ասում է մի գիտնական, սաւանի նման ծածկում է մարդու աչքերը և թոյլ չի տալիս տեսնելու իսկական իրողութիւնը...»։ Սակայն մեր լուսաւոր դարում խելահաս մարդիկ արդէն ամէն կերպ աշխատում են ոչնչացնել այդ սաւանը, հեռացնել տգիտութեան այդ քամահր քողը։

Դեռ շատ հին ժամանակներից սկսած մնապաշտ մարդիկ կարծում են, թէ աշխարհում գոյութիւն ունին «չար ոգիներ», որոնք աշխատում են ամէն տեսակ չարիքներ հասցնել մարդկանց՝ հիւանդացնել, դժբաղդացնել։ Եւ մարդկային զարգացման մակերեսոյթի հասմեամբ միջոցներ են մշակւում այդ քշնամուն դուրս արտաքսելու համար։ Սկզբում նա պատկերացնում էր մարդանման յատկութիւններով, իսկ վերջին ժամանակներում—աւելի վերացական ձեւով իբրև «դև», «սատանայ»,

*) **Ծանօթ.** Այս նիւթի մասին աւելի մանրամասն գրուած է յբ. Ա. Բուդուղեանի «Սնապաշտութիւն եւ կախարդութիւն» գրքոյկում, որից եւ հաղուածօրէն, հեղինակի խմբագրութեամբ, առաջ է բերուած ներկայ գրուածքը։

«մոլորեցնող», իբրև մի որև է յանցանք կամ հիւանդութիւն։

Սկզբում փորձում են հեռացնել չար ոգին հիւանդի մարմնից ծխատով, զանգակի ձայնով կամ բղաւոցով։ Այսպէս օրինակ. Կալիֆօրնիայում չար ոգուն վախեցնել են աշխատում զանազան շարժուձեւերով, ծամածռութիւններով, հիւանդի վրա հայհոյով և այլն։ Ամերիկայի վայրենիները նոյն նպատակի համար տրաքեցնում են մի բան, հրացան են արձակում, թմբկահարում են և այլն և այլն։ Կիրզիզները բղաւում են հիւանդի վրա, ծխծխում են մարգոով, կծոտում են նրան, թքում են երեսին, նրա առաջ զանակ են շարժում և այլն և այլն։

Ռուսաստանի շատ տեղերում էլ «հեքիմները» երկու բռունցքով պինդ սեղմում են հիւանդի փորը, որպէսզի չար ոգին դուրս գայ։

Ծառայութիւնից ազատուած գիւղական մի զինուոր տենդ ունեցող հիւանդներին բժշկելու համար մի ամբողջ ժամ անդադար փողոցային հայհոյանքներ էր թափում...

Եթէ չար ոգին արդէն բուն է դրել մարդու մէջ և վախեցնելը նրա վրա չէ ազդում, այն ժամանակ աշխատում են զանազան միջոցներով «թունաւորել նրա գոյութիւնը», զզուեցնել նրան իր բնակավայրից։ Նրան «ծուխ են տալիս», հիւրասիրում են զզուելի նիւթերով և այլն։

—

Խուլ գիւղերից մէկում ապրում էր մի

պառաւ հեքիմ, որը գեղձախտաւոր երեխաներին կերակրում էր բադի ձուի դեղնուցից և հաւի աղբից բաղկացած խառնուրդով։ Հիւանդներին ծուխ տալու համար գործ էին ածում ոչխարի ապր և ուրիշ նիւթեր, որոնք ծանր-կծու ծուխ էին առաջացնում։

Չափազանցութիւն չէ դա, այլ դառն իրականութիւն, որին ականատես եմ եղել անձամբ, երբ դեռ գիմնազիստ ժամանակ որսի էի գնացել և հանգստանալու համար գիւղ մտել։

Այդպիսով ուզած ժողովրդի մէջ արմատացած է այն կարծիքը, թէ շատ ու շատ հիւանդութիւններ առաջ են գալիս չար ոգու ազդեցութիւնից։ Եթէ մի որև է դեղ կամ միջոց բժշկում է այդ հիւանդութիւնը, նրանք այդ դեղն ու միջոցն էլ գերբնական զօրութիւն են վերագրում։

Օրինակ. շատ բոյսեր բուժիչ ազդեցութիւն ունին և դա բնական մի երեւոյթ է, բայց անտաշաշա ժողովուրդը այդ ազդեցութիւնը գերբնական է համարում և ոգիներին վերագրում։

Հասարակ մարդիկ կարծում են, թէ բոլոր դեղերը գերբնական ոյժ, մի ինչ որ խորհրդաւոր ազդեցութիւն ունին։ Նրանց կարծիքով հիւանդը որոշ դեղ ընդունելուց յետոյ իսկոյն պէտք է առողջանայ, որովհետև չար ոգին անկարող է իր համար անտանելի մթնոլորտում մնալ. նա հիւանդանում է։

Հէնց այդ պատճառով էլ դեղը որքան

զգուելի է, նոյնքան ուժեղ է լինումնրա ազդեցութիւնը. այդպէս է համոզուած ազգա ժողովուրդը։

Թերթերունքների բորբոքում ունեցող մի հիւանդ կին պատմում է, թէ մի անգամ մորի է կերել և իսկոյն թարախ է հոսել ականջից։ Այդ հիւանդի նման ազգանունը հաւատացրել են նրան, թէ գեղձախտը չէ սիրել մորին և այդ պատճառով էլ թարախ է հոսել։

Բայց միայն մեզանում չէ, որ գոյութիւն ունի մնապաշտութիւն։ Ուրիշ երկիրներ էլ ազատ չեն նրա ազդեցութիւնից։

Գերմանիայի խուլ անկիւններում շատ անգամ կարում են հիւանդի մազերն ու ներդունները և մի առանձին կապոց շինելով՝ զբաղում են փողոցի մէջ տեղ։ Ով որ վերցրեց կապոցը, նա էլ կհիւանդանայ։

Ռուսաստանում և առհասարակ մեր ժողովրդի մէջ այդ միևնոյն միջոցը գործածւում է գորտնուկի վերաբերմամբ։ Թելի վրա գորտնուկի թոռի համեմատ հանգոյցներ են անում և փողոցի մէջ տեղ գցում. ով որ վերցրեց թելը, նրան էլ կանցնի գորտնուկը։

Ցան ունեցող հիւանդութիւնների ժամանակ՝ մի փալասով սրբում են հիւանդի կաշու վրայի ցանը—(երբ որ սպասելի է)—և փալասը դուրս են գցում, ենթադրելով, թէ ով որ վերցնէ փալասը, նրան էլ կփոխուի հիւանդութիւնը։

Կախարդութեան պատմութիւնը ուսումնասիրող բոլոր հեղինակները յիշատակում են

թալիսմանների և խորհրդաւոր խօսքերով մարդկանց հմայելու մասին, որոնցով շատերը զառնում են անզգայ դէպի տանջանքները։

Դրանք նոյն իսկ ամենասարսափելի տանջանքների ժամանակ պահպանում են կատարեալ հանգստութիւն և ոչ մի շարժումով, ոչ մի նշանով չեն արտայայտում, թէ ցաւ են զգում։

Այժմ գիտնական փորձերի շնորհիւ կարելի է այդ երևոյթը ճիշտ կերպով բացատրել։ Եւ իսկապէս, ներկայումս նոյն տեսակ փորձեր կարելի է կատարել հիպնոտիզմի միջոցով։

Եթէ թալիսման ունեցող մի քանի մարդիկ բոլորովին չեն զգացել տանջանքները, այդ նրանից է, որ նրանք իսկապէս համոզուած են եղել, թէ իրանց մօտ թալիսմանը գերբնական զօրութիւն ունի և այդ համոզմունքը նրանց անզգայ է դարձրել։

Հիպնոսի ազդեցութեան շնորհիւ կարելի է առաջացնել զգացողութեան որոշ փոփոխութիւններ։ Օրինակ վիրաբոյժ բժիշկը ասում է հիւանդին. «Ձեր ձեռքը կաթուածահար է եղել» և դրանից յետոյ, առանց տանջանքներ պատճառելու, սկսում է ծակծկել հիւանդի ձեռքը, դժուարին օպերացիաներ կատարել։

Այդ միևնոյն ձևով կարելի է ներշնչել, որ հիւանդը խինինը քաղցր շաքարի տեղ ընդունէ, հասարակ ջուրը—գառը օղիի կամ լիկիօրի փոխարէն և այլն։

Վերջապէս հիպնոսի միջոցով կարելի է

այնպէս անել, որ հիւանդը չտեսնի իր աչքի առաջ գանուած առարկան կամ ընդհակառակը, տեսնի նրա միւս կողմի առարկաները։

Հիպնոսելու ձևերը բաւական նման են այն ձևերին, որ գործ են ածւում կախարդանքի ժամանակ։

Բացի դրանից նեարդային ու հոգեկան հիւանդութիւններն էլ միշտ մեծ դեր են խաղացել նախապաշարմունքների հարցում։

Հնագոյն պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ երևոյթները ամեն տեղ համարուել են մի գերբնական ոյժի՝ դևերի ու սատանաների ազդեցութեան հետևանք։

Հին ձեռագիրների մէջ, որտեղ որ պատահում է յիշատակութիւն սատանայի ազդեցութիւնից առաջացած գլխի կամ ճակատի հիւանդութեան մասին—այդ բոլորը պէտք է վերագրել մեծ մասամբ հոգեկան հիւանդութեան։

Եւ առհասարակ, երբ մեր շուրջը մի արտակարգ դէպք, մի անհասկանալի երևոյթ է տեղի ունենում, միշտ էլ պէտք է դիմենք գիտութեան օգնութեանը. պէտք է բացատրութիւնը զարգացած մարդկանցից հարցնենք և ոչ խաբեբայ «փաղիններից» ու տգէտ «հեքիմներից»։

Առհասարակ պէտք է անպայման հաւատալ, որ գիտութիւնը առաջ է տանում մարդկանց ուղիղ ճանապարհով, որ գիտութեան իւրաքանչիւր քայլը ոչնչացնում է մոլորութեան «մի հրէշ» և «մաքրում է» մարդուն։

Ուրեմն ժողովրդի բոլոր խաւերի համար անհրաժեշտ են գիտութեան գիւտերը։

Այժմ գիւղերում պէտք է գործեն քահանաները, ուսուցիչները և բժիշկները, բոլորն էլ գիտութեան լուսով զինուած։

Դրանց կամ դրանց նման կրթուած մարդկանց խորհրդին պէտք է դիմել կեանքի ծանր րոպէներում, մի որ և է փորձանքի կամ դժուարութեան ժամանակ, որովհետև դրանք շատ բան են կարդացել, շատ բան սովորել...

Միայն դրանք կարող են խակապէս փերկարար ու առողջարար խորհուրդներ տալ ասանց խաբելու կամ վախեցնելու։

Իսկ հմայքի և կախարդութեան բոլոր միջոցները, որ գործադրում են «հեքիմները» ու «փաղիները», ջրով, եղունգներով, մազերով կամ մի այլ բանով «թլիսմ» անելը, «նզովքի կամ չարի դէմ» դէր անելը, «թլիսմներով» հիւանդութիւն բժշկելը—այդ բոլորը խաբեբայութիւն է։ Դրանց հաւատալ կարող են միայն տգէտ մարդիկ։

Իսկ հասկացող մարդիկ, կրթուած, ուսում առած մարդիկ երբէք չեն հաւատում այդպիսի յիմար բաներին, այլ աշխատում են եկեղեցական քարոզներով, դպրոցական դասերով, խորհրդներով ու գրքերով, թերթերով ու ամսագիրներով ազդել ժողովրդի վրա և հասկացնել, որ անխելքութիւն է կախարդութիւնից, դևերից ու սատանաներից վախենալը։ Եւ եթէ գիւղերում ու քաղաքներում զարգանայ գիտութիւնը, դպրոցներ ու թատրոններ բա-

յուին, գոնէ շաբաթական գրաղարանները հիմնուին և կարգացած ու կրթուած մարդիկ առաջ գան, այն ժամանակ ազիւութեան և խաւարի այժը կոչնչանայ գիտութեան լոյսի առաջ։

Միշտ գիտութեան վէնքը պահէք ձեր ձեռքում։ Միշտ գիտութեան ջահը թող լուսաւորէ ձեր կեանքի ճանապարհը, որպէս զի չընկնէք նախապաշարմունքի ու մնապաշտութեան կրատաբերը անդունդը։

Բժ. Ա. Բուդուղեան

ԲԺՇԿԱՐԱՆ

Այս կամ այն հիւանդութեան առաջն առնելու ամենալաւ միջոցն է դիմել բժշկի խորհրդին, խնդրել նրա օգնութիւնը, որովհետև միայն նա կարող է ճշտութեամբ որոշել հիւանդութիւնը և գտնել նրա դարմանը։ Իսկ եթէ մի որև է պատճառով դա անհնարին է, այն ժամանակ մի քանի դէպքերում կարելի է օգտուել հետևեալ խորհուրդներից։

1. **Այրուածք։** *Եթէ այրած տեղը միայն կարմրել է, զովացնել անմիջապէս սառուցով կամ սառը ջրով և յետոյ վրան դնել քերած դեանախնձոր։ Եթէ վէրքեր են գոյացել, քսել ձէթ, իւղ, կրի ջուր ձէթի հետ հաւասար չափով խառնած և յետոյ բամբակով փաթաթել։ Երբ այրուածքը ձեռքի կամ ոտի վրա է լինում, լաւ է վիրաւորուած անդամը բարձր պահել, որ արիւնը այրած տեղից հեռանայ։*

2. **Աղիքի** *հիւանդութիւնները մեծ մասամբ լուծողութեամբ են արտայայտուում, նեարդերը թուլանում են, հիւանդը դունատուում ու լղարում է, անդադար ծարաւ է լցուում, ախորժակը կորցնում է և այլն։*

Պատճառները բազմաթիւ են, որոնցից անկասկած մնուղը և մրսելը ամենից յաճախ են պատահում։

Խնամք։ Բացի դեղերից, որոնք կարելի է միայն բժշկի միջոցով ձեռք բերել, մնացած բժշկականութիւնը նոյնն է, ինչ որ առաջորսի հիւանդութիւնների ժամանակ։ Փորը լաւ է տաք պահել և առնասարակ զգուշանալ ցրտից։

3. **Սկիզբը**։ Նորածին երեխաները ծնուելուց 1—2 օր յետոյ յաճախ աչքացաւ են առանում, վարակուելով մօրից, դայեկից կամ մէկ ուրիշից։ Աչքերը կարմրում են, կոպերը ուռչում և թարախով լցւում են։ Այդ հիւանդութիւնը վարակիչ է և մեծերին էլ կարող է վարակել, եթէ նրանք կեղտոտ ձեռքերով իրանց աչքերը տրորեն։

Հիւանդութիւնը չափազանց վտանգաւոր է և նրանից շատերը կուրանում են, եթէ կանոնաւոր կերպով չեն բժշկւում։

Խնամք։ Մինչև բժշկի գալը հարկաւոր է աչքերը աղի ջրով կամ ջրախառն բորայի թթուտով—борная кислота—(1 թէյի գդալ՝ ջրի մեծ բաժակին) լուանալ և այնպէս չորն ածել, որ աչքի մէջը մանի և բոլոր թարախը միջից հանէ։ Լուանալ հարկաւոր է շատ յաճախ, ժամը 1 անգամ։ Եթէ աչքերից միայն մէկն է ցաւում, աշխատել, որ լուանալիս ջուրը միւս աչքի մէջ չմտնի, եթէ ոչ առողջ աչքն էլ կհիւանդանայ։ Ուստի լուանալիս գլուխը կախել այնպէս, որ հիւանդ աչքը ներքև լինի, իսկ առողջը—վերև։

4. **Արիւնհոսութիւն**։ Փորը վէրքերից հոսող արիւնը դադարեցնելու համար հարկաւոր է նախ և առաջ վէրքը մաքուր ջրով լուանալ և յետոյ բամբակով կամ մաքուր շորի կտորով պինդ սեղմել և պահել այդպէս մի քանի րոպէ, մինչև որ արիւնը դադարի։ Երբ արիւնահոսութիւնը բոլորովին կանգնում է, հարկաւոր է վէրքը կապով փաթաթել։

Մեծ վէրքերից հոսող արիւնը միայն բժիշկը կարող է կանգնեցնել, սակայն մինչև նրա գալը անհրաժեշտ է գոնէ թուլացնել արեան կորուստը, հուպ տալով վէրքի վրա բամբակի կտորներով. երբ արիւնը չափազանց առատ է հոսում և բարձր ցայտում, անհրաժեշտ է վիրաւորուած անդամը կապերով պինդ սեղմել, բայց անպատճառ վէրքից բարձր։

5. **Ցնցում**։ Հիւանդը կուլ տալիս ցաւ է զգում, ձայնը թանձրանում է, երբեմն ջերմ է լինում, իսկ ականջի առջևի խուլերը ուռչում են։ Բերանը հետազօտելիս երևում են կարմրացած և ուռած քիմքը, նշենիկները, կատիկը և ըմպանը. տեղ-տեղ երևում են սպիտակ թաղանթներ. լեզուն ուռչում է և սպիտակով ծածկուում։ Հասարակ բկացաւը երբեմն կարելի է շփոթել դիֆտերիտի հետ, ուստի խոհեմութիւնը պահանջում է դիմել բժշկի խորհրդին, որպէսզի յետոյ ցաւալի թիւրիմացութիւն չպատահի։

Հիւանդութեան պատճառը դիտաւորապէս մրսելն է, բայց և ուրիշ հիւանդութիւններն էլ են բկացաւ պատճառում, օր. քութեշը, ծաղիկը և այլն։

Խնամք։ Անկողնի պահել. վիզը կապով

փաթաթել, կոկորդը ողողել աղաջրով, բորակի կամ բերտոլեաի թթուտով (1 թեյի դդալ մեծ բաժակ ջրի համար). ջերմի դեմ քինա ընդունել (1—2 անգամ օրական), փորկապութեան դէմ լուծողականներ։ Երբեմն լաւ է ներգործում և քրտնելը։

6. **Դիֆտերիտ—վարակիչ բնացաւ**։ Հիւանդը կուլ տալու ժամանակ ցաւ է զգում։ Գլուխը ցաւում է և ջերմ է լինում, բուկը ուռչում և կարմրում է և սպիտակաւուն փառով ծածկւում. այդ փառը երբեմն պոկ է գալիս և նրա տակը վէրքեր են բացւում։ Հիւանդութիւնը տարածւում է նոյնպէս քթի, ականջների և կոկորդի մէջ։ Շնչառութիւնը սկսում է դժուարանալ, և հիւանդը կարող է մինչև անգամ բոլորովին խեղդուել օդի պակասութիւնից։ Դիֆտերիտը վտանգաւոր է նոյնպէս սրտի համար. սրտի թուլութիւն է առաջացնում, որից հիւանդը կարող է յանկարծամահ լինել։

Խնամք.—Բժշկութեան գլխաւոր միջոցն է՝ հակադիֆտերիտական սրսկումը։ Սրսկումը միայն բժշկի ձեռքով կարելի է անել և որքան շուտ, այնքան լաւ, որովհետև նրա աղդեցութիւնը թուլանում է, եթէ հիւանդութեան սկզբից չէ արուած։ Անհրաժեշտ է նոյնպէս քթի և բերանի մաքրութեան վրա հսկել (տես քութէշ)։

Սնունդը պիտի լինի թեթև՝ ջրալի կերակուրներ, բուլիօն։ Սրտի թուլութեան դէմ—գդալով գինի։

Առողջները պիտի հեռացած լինեն հիւանդից, որ չվարակուեն։ Երբ հիւանդութիւնը վերջանայ, հիւանդի սենեակը և շորերը լաւ մաքրել (տես «Մաղիկ»)։

7. **Թունաւորութիւններ**։—Թոյները լինում են զանազան տեսակի, քիմիական կամ բուսական։ Կան թոյներ, որոնք ընդունելիս այրում են այն օրգանները, որոնց միջով անցնում են (բերանը, առամոքսը և այլն) և դառնով մարդուն մահացնում։ Մի ուրիշ թոյները միայն մէջ մտնելով են ներգործում, ազդելով սրտի, ուղեղի և այլ օրգանների վրա։

Խնամք։ Զանազան թոյների դէմ միջոցներն էլ տարբեր են, այնպէս որ բոլորի համար անկարելի է խորհուրդ տալ. սակայն իբրև ընդհանուր կանոն հարկաւոր է իմանալ, որ պէտք է աշխատել որքան կարելի է շուտ կամ դուրս հանել, կամ թուլացնել ընդունած թոյնը.

Թունաւորուածին նախ և առաջ խմացնել տաք(եթէ չկայ—սառը) ջուր և ապա հաւի փետուրով կոկորդը խտտեցնել, որպէսզի փսխանք առաջանայ։ Եթէ հիւանդը արդէն ուշագնաց է, ջրել ամբողջ մարմինը ձեռքերով և երեսին սառը ջուր սրսկել։ Այրուած օրգանների ցաւը մեղմացնելու համար ընդունել տալ սառը խմիչքներ, սառուցի մանր կտորներ, ձուի սպիտակուց ջրի մէջ հարած (6—10 ձու մի շիշ ջրի համար)։ Ինչպէս վերևում ասացինք, թոյնի տեսակից է կախուած

բժշկութեան միջոցը։ Այսպէս օրինակ։

—Մկան դեղով թունաւորուածին պէտք է տալ կաթ և ջրի մէջ հարած ձուի սպիտակուց։

—Ծոպիոյով (լուցկիներից) թունաւորուածին արգելուած է կաթ և իւղալի խմիչքներ։ Ծմայնել սկիպիտար (10—12 կաթիլ) ջրի մէջ խառնած։

Օպիումով (խաշխաշ) թունաւորուածին սև սուրճ (պայֆէ) խմացնել։

—Թունաւոր սունկերով թունաւորուածը պէտք է զգուշանայ քացախից։

—Կարբոլայով թունաւորուածին խմացնել մանրացրած կաւիճ ջրի հետ, կաթ, ձուի սպիտակուց ջրախառն։

8. **Փակուլ** (չուանով) խեղդուածին ազատել որքան կարելի է շուտ կապից, զգեստներն արձակել և շնչառութիւնը գրգռել, ինչպէս վերևն է ասած։

9. **Խեղդուած**։ — Ջրի մէջ խեղդուած մարդուն ջրից հանելուց յետոյ, զգեստները հանել, որպէսզի նրան ոչինչ չճնշէ. բերանը սրբիչից և քարից մաքրել (մատով) և բաց պահել. ապա սկսել շնչառութիւնը գրգռել։ դրա համար նախ և առաջ դնում են մէջքի տակ մի բարձ, շորի փաթեթ կամ փայտի կտոր, որպէսզի կուրծքը վերև և գլուխը յետ ընկնի. ապա վերցնում են խեղդուածի ձեռքերը, մէկը գլխի յետևն են քաշում (որ կուրծքը լայնանայ և օդը մէջը մտնի), մէկը փորի վրա են ճնշում (որ օդը դուրս գնայ կուրծքից); այդպէս շարունակում են առանց շտա-

պելու, նոյն արագութեամբ, ինչպէս որ մարդը սովորաբար շնչում է և մինչև այն ժամանակ, երբ խեղդուածը կըսկսէ կանոնաւոր կերպով և ինքնաբերան շնչել։ Դրա համար հարկաւոր է լինում երբեմն շատ երկար աշխատել, մի ժամ և աւել, սակայն երբէք չպէտք է յուսահատուել. եթէ խեղդուածը կեանքի մի որևէ նշոյլ է ցոյց տալիս, այն ժամանակ կարելի է նրան ուշքի բերել։ Երբ խեղդուածը ուշքի եկաւ, հարկաւոր է նրան փախցնել կուլ տուած ջուրը և յետոյ պինդ, կամ թէյ, օղի խմացնել և տաք անկողնում պառկեցնել։

10. **Ծադիկը** վարակիչ հիւանդութիւն է. նա երկու ձև ունի—ծանր և թեթև. սկսւում է սաստիկ ջերմով, փսխանքով, մէջքի և գլխացաւով. 2-րդ, 3-րդ օրը երեսը և ամբողջ մարմինը ծածկւում է բշտիկներով (պալարներով), 7-րդ, 8-րդ օրը բշտիկները լցւում են թարախով կամ արիւնով (ամենավտանգաւոր ձևը). 10—13-րդ օրի բշտիկները սկսում են չորանալ, իսկ 5—6 շաբաթը նրանք թափւում են, չնչեր թողնելով իրանց տեղը (վարակութեան ամենավտանգաւոր ժամանակը)։

Խնամք։ Ծադիկի դէմ ամենալաւ միջոցը պատուաստումն է. ծադիկ ազատ մնալու համար հարկաւոր է կրկնել պատուաստումը ամեն 7—8 տարին մի անգամ։ Պատուաստած երեխաները կամ ամենևին չեն հիւանդանում, կամ հիւանդանում են շատ թեթև կերպով, ուստի հէնց որ մի տեղ ծաղիկ է յայտնւում, անմիջապէս հարկաւոր է առողջներին հիւան-

դից բաժանել և բոլորի ծավիկը պատուաստել։ Հիւանդին անկողինը դնել. դխացաւի դէմ սառուց դնել ճակատին, փսխանքի դէմ— սառուցի մանր կտորներ կուլ տալ։ Ջերմի ժամանակ չպիտի քորել և պոկել. մարմինը և երեսը լաւ է ձէթով կամ իւղով (վազելինով) ծածկել։

Երբ մարմինը սկսում է թէփոտուել, հիւանդին պէտք է տաք վաննա նստացնել և կրկնել այդ մի քանի անգամ։ Երբ թէփոտուելը բոլորովին վերջացած է, այն ժամանակ միայն կարելի է հիւանդին տանից դուրս բերել և առողջների մօտ տանել։ Հիւանդի բոլոր շորերը անհրաժեշտ է տաք ջրի և սապօնի մէջ լաւ եփ տալ, որպէսզի հիւանդութիւնը ուրիշներին չփոխուի. անկանկ էլ պէտք է լաւ մաքրել և երկար ժամանակ պատուհանները բաց պահել։

11. **Կատրոակը** վարակիչ հիւանդութիւն է և գրեթէ անխուսափելի է երեխայական հասակում։ Հիւանդութեան նշաններն են՝ հազ, հարփուռ, բկացաւ, աչքացաւ, ջերմ. 3-րդ կամ 4-րդ օրը կաշին դուրս է տալիս բծեր և մի քանի օր այդպէս մնում։ Վերջը բծերը անհետանում են, իսկ կաշին սկսում է թէփոտուել։

Խնամք։ Հիւանդին հէնց սկզբից անկողնում պահպանել և մրսելուց պահպանել, լուսամուտի վերքերը կիսափակ անել. որովհետև լոյսը ցաւեցնում է աչքերը. հազի դէմ տաք կաթ խմացնել գէլաերի ջրի հետ խառնած։ Կերակուրը պիտի լինի թեթև՝ թեթխաշ ձու,

կաթ, սպիտակ հաց, շորվայ. ծարաւը յագեցնելու համար—լիմոնով և շաքարով ջուր կամ լիմոնադ և այլն։

Եթէ հիւանդը շուտ չի առողջանում—դիմել բժիշկի օգնութեանը։

12. **Սկարդի բարբոնուն**։ Հիւանդը հազում է, ձայնը խռպոտ է դառնում կամ բոլորովին կորչում. կոկորդի մէջ խռպոտում է. ընդհանուր առողջութիւնը քիչ է տուժում։

Հիւանդութիւնը առաջ է գալիս երկար խօսելուց կամ երգելուց, մանաւանդ բացօդեայ կամ ձիով և փաշիով լի սենեակում. յաճախ միաժամանակ լինում է և հարբուխ ու բկացաւ։

Խնամք։ Նառել տանը (երեխաներին անկողնում պահել), քիչ խօսել, չծխել, տաք խմիչքներ ընդունել (կաթ գէլաերի ջրով), վիզը փաթաթել կապով, շնչել ազաջրի գոլորշի։

Երբեմն պատահում է, մանաւանդ գիշեր ժամանակ, որ երեխաները յանկարծակի հիւանդանում են կոկորդի սուր բորբոքումով. սկսւում է խիստ հազ, շնչառութիւնը ճնշուած է դառնում, երեխան օդի պակասութիւն է զգում, կարծես խեղդւէր։

Այսպիսի յանկարծակի դէպքերում (որոնք միշտ լաւ են վերջանում), հարկաւոր է երեխային տաք գոլորշի շնչել տալ սամալաթից), ոտները տաք ջրի մէջ պահել կամ մանանեխի սպեղանի դնել սրունքների վրա։ Հիւանդութիւնը տևում է մօտ $^1/_2$ ժամ. երեխան հան-

գտանում, քնում է և միա առաւօտ բոլորովին առողջ ու զուարթ վեր կենում։

13. **Կակիւշը** մանկական հատակի հիւանդութիւն է. վարակիչ է, տեւում է սովորաբար 4—5 շաբաթ և մի անգամ լինելուց յետոյ այլ ևս չի կրկնւում։ Հիւանդութեան սկզբում ջերմ է լինում, որը 38°—38,5° վեր չի բարձրանում։ Հիւանդութիւնը բնորոշւում է ցրնցղուկաւոր հազով, որ սկսւում է բանկումի ձևով, իսկ վերջանալուց յետոյ երեխայի բերանից լորձին է գալիս և յաճախ էլ փսխում է պատահում։ Հազի ժամանակ սուլիչ և վայնասունի նման ձայներ են լինում։ Այսպիսի բանկումները կրկնւում են օրը մօտ 15—30 անգամ, որոնցից յետոյ իւրաքանչիւր անգամ մի առժամանակ դադար է լինում։ Այդ ամենանպաստաւոր միջոցն է երեխային կերակրելու համար. այլապէս բանկումից առաջ կերածը ևս է արտում փսխումով։

Խնամքը։ Յատուկ բժշկութիւն չկայ. առողջներին հարկաւոր է հեռացնել հիւանդներից։ Ջերմը վերջանալուց յետոյ շատ օգտակար է երեխաներին դուրսը պահել մաքուր օդ շնչելու։ Լաւ է ներգործում քինան, որ հարկաւոր է օրը 2—4 անգամ փոքրիկ քանակութեամբ խմացնել։ Երեխայի բերանը ամեն անգամ հազից յետոյ պէտք է մաքրել լորձիւնից։

14. **Հարբուխ** է անուանւում քթախորշի լորձամաշկի բորբոքումը, որ առաջ է գալիս թէ մրսելուց և թէ ուրիշ պատճառներից, օր. փոշուց, ծխախոտ քթիը քաշելուց, ջնասակար գազերից, դանազան հիւանդութիւններից, ինչպէս՝ կարմրուկը, ինֆլուենցան, սեփիլիսը և այլն։ Հարբուխի նշանները ամենքին յայտնի են։

Խնամքի։ Հարբուխի դէմ անային միջոցներով կռուելու համար կարելի է միայն խորհուրդ տալ՝ եթէ հիւանդը մրսած է, տաք դոլորշի շնչել, քինա ընդունել և տաք հագնուել, իսկ այն չերեխից և դեղերից, որ շատերը հարբուխի ժամանակ քթով ներս են քաշում բժշկուելու համար, մենք խստիւ նախազգուշացնում ենք, որովհետև բազմաթիւ են դէպքերը, երբ քթով ջուր քաշելուց բորբոքուելիս է եղել ականջի մէջը և լսողութեան համար շատ վտանգաւոր հիւանդութիւն է առաջ եկել։ Ուստի յամառ դէպքերում, երբ երկար ժամանակ չի անցնում, անհրաժեշտ է բժշկին դիմել, որ և կսովորցնի, թէ ինչ անել հիւանդութեան դէմ։

Ուրիշ պատճառներից առաջ եկած հարբուխը անցնում է, երբ սկզբնապատճառը հեռացւում է և հիւանդը փոխում է իւր կենցաղը։

15. **Ծաւադած** մարդուն անմիջապէս պառկեցնել, գլխաը՝ գօտին, օձիքը և այլն արձակել, երեսին սառը ջուր սրսկել, երեսն ու մարմինը ձեռքերով շփել։ Ուշքի գալուց յետոյ չպէտի յանկարծ վեր կենալ, այլ մի փոքր պառկած մնալ. լաւ է մի քիչ դինի, օղի, թէյ կամ սուրճ խմացնել։

16. **Սառած մարդուն** չերեփել տաք սենեակը, այլ հով տեղում, նախասենեակում

դնել (ճանապարհին աշխատել մարմինը չծանրել, այլ ձիդ պահել)։ Շորերը հանելուց յետոյ, սառը ջրի մէջ դնել կամ ձիւնով տրորել. երբ մարմինը կատքանայ և մղձաւելը կփափկէն, այն ժամանակ հարկաւոր է նրան մի տաք տեղ պառկեցնել և գինի, օղի կամ տաք թէյ խըմացնել։

Սառած մարը կամ ոտը նոյնպէս պէտք է նախ և առաջ սառը ջրի մէջ պահել կամ ձիւնով տրորել և ապա կամաց կամաց տաքացնել. բորբոքուած մասերին քսել ձէթ կամ սապի ճարպ։

17. **Ստամոքսի կատարը** (բորբոքումը) շատ տարածուած ցաւ է, նրա պատճառը գլխաւորապէս անկանոն կենցաղն է։ Հիւանդութիւնը արտայայտւում է նրանով, որ ստամոքսում ծանրութիւն և ցաւ է զգացուում։ Փորը ուռչում է, հիւանդը կորցնում է ախորժակը և զզուանք է զգում ղէղի կերակուրները. յաճախ գլուխ է ցաւում, երբեմն փսխում. փորը լուծում է, բայց աւելի յաճախ կապ է լինում։

Խնամք։ Բժշկուել կարելի է կանոնաւոր կենցաղով։ Ուտելու ժամանակ պիտի դեկավարուել որոշ կանոններով։ Վնասակար է շատ ուտելը. լաւ է օրական 2 անգամ թեթև և 2 անգամ կուշտ ուտել. ուտելիս կերակուրը լաւ ծամել։

Վնասակար են՝ իւղալի, թթու, կծու, աղի կերակուրները, մեծ քանակութեամբ խմորեղէնը ու կարտօֆիլը, ալիւօլը, շատ տաք ու

շատ սառը կերակուրները։ Օգտակար են՝ կաթնեղէնը, ձուն (թերխաշ), բուլիոնը (հաւից և հորթի մսից), հորթի, ճաի և որսի միսը և այլն։ Խմելու համար՝ ջուր, թէյ (ոչ շատ), հացը լաւ է սպիտակ տեսակից և կրակի վրա չորացրած։

Հանքային ջրերն էլ շատ օգտակար են կատարքի համար, բայց նրաց գործածութիւնը պէտք է բժշկի հսկողութեամբ կատարուի, ուրեմն հարկաւոր է դիմել բժշկի։

18. **Փորկապութիւնը** մի հիւանդոտ դրութիւն է, ուստի անհրաժեշտ է կռուել, բայց ոչ լուծողականների միջոցով (որովհետև սոսմոքսը սովորում է այդ դեղին և շատով լուծողականն էլ կորցնում է իր ազդեցութիւնը)։

Խնամք։ Փորկապութեան դէմ ամենալաւ միջոցը կանոնաւոր կենցաղն է։ Առաւօտ վեր կենալիս՝ խմել մի բաժակ սառը ջուր և յետոյ դուրս գալ մի փոքր զբօսնելու. օրուայ մէջ լաւ է ֆիզիքական աշխատանքով կամ մարմնամարզութեամբ պարապել. ուտել մրգեղէն, մեղր, կանաչեղէն և առհասարակ ամէն տեսակ կոպիտ կերակուր և սև հաց։ Մարմինը սառը ջրով շփել, փորին մասաժ անել և որոշ ժամին ամենայն օր դուրս գալ հարկաւորութեան համար, եթէ մինչև անդամ պահանջ չզգացուի։ Լուծողականներից խուսափել և գործածել միայն անհրաժեշտ դէպքերում։

19. **Փչացած օդից** (օր. վառարանը ժամանակից շուտ ծածկելուց) ուշաթափուածին

մաքուր օդը դուրս բերել, մարմինը տրորել ձեռքերով և շնչառությունը դրդռել (տես «Մեղուաձև»):

20. **Ճարպախտ** (քոսը) առաջ է գալիս աչքով դժուար նշմարելի մի մակաբույծից—քոսոզիից, որը կաշու մեջ բնակուելով և այնտեղ շարժուելով, անտանելի քոր է պատճառում։ Կեղտը և հակառողջապահիկ կեանքը նպաստում են հիւանդութեան տարածուելուն։ Վարակիչ լինելով՝ քորախտը երբեմն ընկնում է ընտանիքի բոլոր անդամների վրա։ Հիւանդութիւնը տարածւում է անմիջական շփումից կամ շորերի և անկողնի միջոցով։ Հիւանդութիւնից ազատուելու համար պէտք է, որ բոլոր հիւանդները միաժամանակ սկսեն բժշկութիւնը, եթէ ոչ հիւանդ մնացածները նորից կվարակեն բժշկուածներին։

Խնամք։ Վերցնել 30 գրամ մէկ մաս, վից մաս ճարպ (խոզի կամ ոչխարի), լաւ խառնել և տրորել և քսել այդ օձանելիքով կաշու հիւանդ մասերը 2—3 երեկոյ իրար վրա. յետոյ լուանալ ամբողջ մարմինը ոսպնով ու տաք ջրով, որով և վերջանում է բժշկութիւնը։

Անհրաժեշտ է նոյնպէս լուանալ և մաքրել բոլոր հագնելիքը և անկողինները, որպէսզի մէջը քոսոզիներ չմնան և հիւանդութիւնը նորից չսկսուի։

21. **Ցուրէը** վարակիչ հիւանդութիւն է. սկսւում է ջերմով, կաշին դուրս է տալիս մանր բծեր, որոնք տարածւում են ամբողջ

մարմնի վրա, ապա թողնելով միայն չանը, քիթը և շրթունքները. բուկը ցաւում է, միջի հնչիւնները ուռչում են։ Մի քանի օրից յետոյ ջերմը թուլանում է, իսկ դուրս տուածը անհետանում. 10—12-րդ օրը կաշին սկսում է լայն շերտերով թէփոտուել. 2—3 շաբաթից յետոյ թէփոտումը վերջանում է և հիւանդը կարող է քաղքէշից առողջացած համարուել. սակայն վտանգը դեռ անցած չէ, որովհետև քաղքէշը՝ իբրև հետևանք զանազան հիւանդութիւնների է առաջացնում, շատ յաճախ՝ երիկամունքների բորբոքում։ Այդ պատճառով առողջանալուց յետոյ էլ, 2—3 շաբաթ շարունակ, հիւանդը պէտք է իրան զգոյշ պահէ, չմրսի, որովհետև երիկամունքների բորբոքումը հէնց այդ ժամանակ է յայտնուում։

Խնամք։ Բժշկութեան համար գլխաւորն է մաքրութիւնը և պատշաճ սնունդը։ Բերանը անհրաժեշտ է օրական մի քանի անգամ ողողել կամ ազաջրով, կամ ջրախառն բօրայի թթուտով (борная кислота) 1 թէյի գդալ՝ ջրի մեծ բաժակի համար։ Մաքուր պէտք է պահել նոյնպէս քիթը և ականջները։ Մարմինն քսել տաք ձէթ։ Սնունդի համար վերցնել կաթնեղէնը, որ ամենից ապահովն է երիկամունքի համար։ Միս կամ բուլիոն ամենևին չտալ. խմելու համար հասարակ ջուր կամ լիմոնադ։ Ձեռ միսը կարելի է տալ միայն հիւանդութեան չորրորդ շաբաթից. երբ կաշին սկսում է թէփոտուել, հարկաւոր է հիւանդին 1—2 օրը մի անգամ տաք վաննա

նատեցնել (15—20 րոպէ) և ամէն ջանք գործ դնել, որ տաք ջրից յետոյ հիւանդը չմրսի։ Եթէ քունքէշը առանց բարդութիւնների է, հիւանդը կարող է երեք շաբաթից յետոյ ոտքի կանգնել, իսկ ամենից դուրս գալ կարող է միայն մէկից վերջացնելուց յետոյ։ Քունքէշի ժամանակ առողջ երեխաներին պէտք է որքան կարելի է շուտ հեռացնել, իսկ երբ հիւանդը լաւացել է, նրա շորերը կամ այրել, կամ եփ տալ սապնաջրի մէջ. անհնակը լաւ մաքրել։

22. **Օձի խայթից** կծած անդամը վերից բարձր պինդ կապել, վերքը ծծել, որ թոյնը դուրս գայ և կարմրած երկաթով այրել։ Հիւանդին քրտնեցնել և օղի կամ գինի խմացնել։

Բժ. Լ. Քալանթարեան

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ

Գլխիդ մազերը առողջ պահելու համար, իւրաքանչիւր շաբաթ սապնով և դոլ ջրով գլուխդ լուա, իսկ պատրաստի գիներ մի գնիր և մի գործ գնիր։

Սննդեան գործառնի գաւիթը բերանը լինելով,—պէտք է նորան միշտ մաքուր պահել. առաւօտ և երեկոյ փոշեացրած կաւիճով փոքրիկ խոզանակով առատները մաքրել և ա-

մեն անգամ ուտելուց վերջը բերանը ողողել մաքուր ջրով։

Աւտամեներին վնաս է և շատ սառը և շատ տաքը, մանաւանդ, երբ մէկը անմիջապէս գործ է դրւում միւսից յետոյ։

Տեղակուր հանգիստ կեցէք—քէզ հղիպէս և քէ փիղիքապէս. բարկացած, խռոված արտով ընդունած կերակուրը չէ մարսւում։ Երկար ծամեցէք, որպէսզի դիւրացնէք առաջին մարսողութիւնը։

Ճաղանիք զնացէք գոնէ ամիսը մի անգամ, եթէ անհնար է շաբաթը մի անգամ զբնալը։

Հոգ տարէք ազատ պահել ձեր բնակարանը և ձեր անձը փայտաոջլից, լուից, ճանճից, մանաւանդ մոծակից և այլ այսպիսի միջատներից, իբրև ահաւոր թշնամիներից, որոնցից վերջիններն միջոցով տարածւում է տարատիպ տենդը՝ մալարիան, իսկ առաջիններն միջոցով տիֆը, խօլերան և այլն.

Սառը կամ բռնցող ոտքեր ունեցողը պէտք է նոցա մաքուր պահի, գուլպէքը շուտ—շուտ փոխի և ոտքով շատ շրջի։

Վեներական ախտից պահպանելու համար երիտասարդը պէտք է լինի պահեցող և ողջախոհ։ Ողջախոհութիւնը ոչ միայն ճնշաս չէ կաղմուածքին, այլ և օգտակար է։

Սեռական ողջախոհութեան պատուանդանը հոգւոյ և բարոյական ողջախոհութիւնն է։

Ինակարանը լինի լոյս և ընկնի արև.

ասած է, որ այն ատեն, ուր կայ արև, բժիշկը ոտքը չի դնի։

Դուռ եւ լուսամուտ, ամառ—ձմեռ, բաց պահեցէք, որչափ հնարին է. օդը ամենալաւ միջոցն է վարակիչ հիւանդութիւնների սաղմերը ոչնչացնելու համար։

Անկարասիներդ լինին լայնարձակ. որքան նեղուածք լինի, այնքան աւելի թոքախտը բուն կը դնի։

Ներչարանք արև մտնի,—արեւդ չի խաւարի։

Բժշկապետ Բ. Նաւասարդեան

Ռոստով Դ. Վ.

ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՉՔԵՐԻ ԹԱՐԱԽԱՅԻՆ ԲՈՐԲՈՔՈՒՄԸ

1. Նորածին երեխաներից ոմանք իրանց կեանքի 2—5-րդ օրը երբեմն չափազանց վտանգաւոր հիւանդութիւն են ստանում։ Նրանց աչքերը բորբոքում են։ Կոպերը սաստիկ ուռչում և կոպերի տակից առատ քանակութեամբ թարախ է հոսում։

2. Աչքերի թարախային բորբոքումով հիւանդանում են այն երեխաները, որոնց մայրերի սեռական անդամներից ծնողաբերութեան ժամանակ թարախանիւթ է հոսում։

3. Նորածին երեխաների աչքերի և նրանց մայրերի ծննդական անդամների թարախային բորբոքման գլխաւոր պատճառը այն միկրոբն է, որ հասակաւորների սուսունակն է *) առաջացնում։ Ահա հէնց այդ պատճառով նորածին երեխաների աչքերի թարախային բորբոքումը կարելի է նաև **ապիեր սուսունակային բորբոքում անուանել**։

4. Հէնց որ նորածին երեխայի աչքերը թարախային բորբոքում են ստանում, պէտք է իսկոյն բժշկի օգնութեան դիմել՝ առանց ուշ դարձնելու դայեակների խորհրդի վրա։

5. Եթէ այդ հիւանդութիւնը թողնուի իր բնական ընթացքին, այն ժամանակ աչքի խըմնձորները փչանում են և երեխան ընդմիշտ կուրանում։

6. Դժբաղդ կոյրերի 1/3-ականից աւելին իրանց կուրութիւնն ստացել են սուսունակային բորբոքումից—իրանց կեանքի առաջին օրերում։

7. Նորածին երեխաների աչքերից հոսած թարախը չափազանց վարակիչ է և եթէ մատների, թաշկինակի միջոցով կամ մի այլ ճանապարհով դիպչի առողջ աչքին (ինչ հասակի էլ որ լինի), իսկոյն սաստիկ բորբոքում կառաջացնի։

*) Սուսունակի հիւանդութիւն ունեցող մարդիկ պէտք է չափազանց մեծ ուշադրութիւն դարձնեն, որպէսզի հիւանդութիւնը աչերին չանցնի։ Անհրաժեշտ է միշտ յիշել, որ այս դէպքում նաև ակաւորների աչերի հիւանդութիւնը աւելի ծանր եւ աւելի կորասաբեր է լինում, քան թէ նորածին երեխաներինը։

8. Պարբ կարելուց յետոյ նորածին երեխային խնկոյն պէտք է լողացնել և աչքերը սրբել մաքուր շորով կամ բամբակով, ոչ թէ լողանալու մէջ թրջած։

9. Եթէ երեխայի մէկ աչքը հիւանդացել է, պէտք է միւս աչքը խնամքով նախապաշտպանել վարակուելուց։ Այդ նպատակով խոտիւ արգելւում է առողջ աչքին դիպչելը այն ապունդը, բամբակը կամ ձեռքը, որ դրծ է ածուել ցաւոտ աչքի համար։ Այդ կարելի է անել միայն մաքուր ձեռքերով ու քիչ առաջ եռացրած սառը ջրի մէջ թրջած բամբակով։

10. Եթէ հարկաւոր է երկու աչքն էլ լուանալ, այն ժամանակ պէտք է նաև առողջ աչքը լուանալ և ապա ցաւոտը։

11. Երբեմն թարախը ցաւոտ աչքից հանում է դէպի առողջը։ Այդ կարելի առաջն առնելու համար պէտք է երեխային պառկեցնել հիւանդ աչքի կողմը և յաճախակի—(իւրաքանչիւրը 4—10 րոպէն մի անգամ) քնքշութեամբ սրբել թարախը եռացրած սառը ջրում թրջած բամբակով, որը պէտք է քիչ քամուած լինի։

12. Հարկաւոր է հիւանդութիւնն սկսուելուն պէս սառը փաթեթներ դնել ցաւոտ աչքի վրա, որպէսզի բորբոքումը խուսանայ և կոպերը շատ չուռչին։ Փաթեթները պատրաստւում են հետևեալ ձևով.—վերցնում են 2 կտոր հիդրոսկոպիական բամբակ կամ քաթան, թրջում են չափազանց սառը ջրում, թեթևակի քամում են և ապա դնում մէջքի վրա պառկեցրած երեխայի կոպերի վրա։ Փաթեթները պէտք է իւրաքանչիւրը 1/2—1 րոպէ փոխել, որովհետև 2—3 րոպէից յետոյ փաթեթը արդէն տաքանում է, իսկ տաքացած փաթեթը բորբոքին հակառակ ներգործութիւն է ունենում, այսինքն օգուտի փոխարէն վնաս է հասցնում։

Սովորաբար փաթեթներ դնում են իւրաքանչիւր օր—օրական 4—6 անգամ, իւրաքանչիւր անգամին 1/2—1 ժամ, իսկ ծանր դէպքերում՝ մի քանի ժամ շարունակ անընդհատ։

13. Հաւաքուած թարախի և երկարատև փաթեթների ազդեցութիւնից պաշտպանելու համար, լաւ է կոպերին քիչ վազելին քսել, բայց այնպէս, որ կոպերի ներսի կողմը, աչքերի մէջը չկպչի։

14. Պարզ է, ի հարկէ, որ եթէ չլի կինը մի որ և է ալ ասւորական արտաքորում ունի, պէտք է իր ժամանակին բժշկուի, որ նորածնի երեխայի աչքերի վտանգաւոր բորբոքման առաջն առնի։

15. Միայն բժիշկը կարող է բժշկել նորածնի երեխաների աչքերի բորբոքումը, ուստի որքան շուտ դիմել նրա օգնութեանը, այնքան լաւ է։ Իսկ մինչ այդ, կարելի է օգտուել ապառաջ բերած խորհուրդներով։

Բժշկապետ Տ. Գևորգեանց

ՅՂԻ ԿՆՈՋ ՍՆՆԴԱՐՈՒԹԻՒՆԸ *)

Ցղի կինը սիրած կերակուրներից, մինչև անգամ պանրից, մսից զզուում է և, ընդհակառակը, ամենադժուարամարս կերակուրներ է ցանկանում ուտել, ինչպէս լոբի, մախոխ, չորացրած հուն, տանու թթու դրած բուսական ուտելիքներ (կաղամբ, ծիծակ, բոխ և այլն):

Մեր ժողովրդի մի մասը այնպէս է մտածում, որ յղի կինը ինչ որ պահանջի ուտելու, պէտք է տալ: Այդ սխալ է, և այդ պահանջին չպէտք է միշտ բաւարարութիւն տալ, այլ պէտք է միշտ ի նկատի ունենալ, թէ նա ինչ է պահանջում և նրա մարսողութեան գործարանները ինչ դրութեան մէջ են: Եթէ նա օրական մի քանի վարունգ է ուտում և փքխում, ի հարկէ, պէտք է համոզել, որ չուտէ, որովհետև նա հէնց այդ պատճառով ուրիշ կերակուրներ չէ կարող մարսել: Աւելի լաւ է որ նա ուտի մի սուպ, լաւ եփած պառան կամ հաւի միս, թերխաշ ձու, բրնձով ապուր, թանէ սպաս, թարմ ձուկ, (բայց ոչ չորացրած կամ դաղ, որոնք շատ դժուարամարս են): Եփած կանաչեղէններ, ինչպէս կանաչ լոբի, բազրջան կարելի է ուտել, իսկ կարմիր լոբին, սիսեռը արգելուած են: Մրգեղէններից, այն էլ լաւ հասած, կարելի է գործ ածել հետեւեալները.—կեռաս, սալոր, ձմերուկ, թուզ և խաղող (ի հարկէ կորիզները չպէտք է կուլ տալ): Իսկ ծիրանը, դեղձը և սէրկևիլը բոլորովին արգելուած են:

Մեզանում սովորութիւն է խորոված կամ տապակած միսը գերադասել: Ճշմարիտ է, խորովածը կամ տապակածը աւելի համեղ է և աւելի սննդարար, բայց դժուարամարս է, ուստի, երբ յղի կինը կերածը դժուար է մարսում, պէտք է լաւ խաշած կերակուրները գործածի, մանաւանդ երբ ատամները պակաս են և լաւ ծամել չէ կարող: Ցղի կանայք, որոնց մարսողութիւնը թոյլ է, չպէտք է գործ ածեն ճաշի ժամանակ հում կանաչի, բողկ, վարունգ, որովհետև սրանք դժուար են մարսում, և կանաչեղէնի և մանաւանդ բողկի մէջ գտնուած կծու նիւթերը կարող են աղիքները և երիկամունքները գրգռել: Նոյնպէս արգելուած է կերակուրների հետ պղպեղ, մանանեխ և համեմները գործ ածել:

Ամենալաւ ըմպելիքը ջուրն է, բայց յղի կանանցից ոմ սովորութիւն ունի գինի խմելու, կարող է այդ գործ դնել, միայն չափաւոր քանակութեամբ: Թէյ և սուրճ-թոյլ և, եթէ հնարաւոր է, կաթով խառնած, իսկ արաղ, կամ արաղով պատրաստած խմիչքներ ամենևին չէ կարելի գործ դնել:

Բժշ. Գ. Skr Գրիգորեան

*) Տես 1904 թ. «Առողջ. թերթի» № 6 յաւելուածը:

ԱՏԱՄՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ

Կազմուածքը։ Հասակն առած մարդու 32 ատամ։ Մարդը ծնուում է առանց ատամների և յետոյ 6 կամ 7-րդ ամսում դուրս են գալիս երեխայի առաջին ատամները, որոնք կոչուում են կաթնատամներ, և ատրճանաբար աւելանում են մինչև 2—3 տարեկան հասակը։ 7—9 տարեկան հասակում այդ ատամները թափուում են և նրանց տեղը դուրս են գալիս իսկական ատամները։ Մարդուս ատամները երեք տեսակ են լինում. առաջին ատամները կոչուում են կտրիչներ և 8 հատ են՝ չորսը վերևի ծնօտում, չորսն էլ ներքևի։ Կտրիչների կողքին գտնուում են 4 ժանիքները։ Մնացած ատամները կոչուում են փոքր և մեծ աղանատամներ՝ թուով 20 հատ, այսինքն 5—5 հատ իւրաքանչիւր ծնօտի երկու կողմերում։ Երեխաները մինչև 7 տարեկան հասակը միայն 20 ատամ ունին, իսկ մնացած 12 արմատական ատամները դուրս են գալիս առաջի մշտական ատամների հետ։

Ամենայետին մեծ ատամները, որոնք թուով չորս հատ են, դուրս են գալիս 17—40 տարեկան հասակում և կոչուում են իմաստութեան

ատամներ։ Ուրեմն հասակաւոր մարդու ատամների դասաւորութիւնն այսպէս է։ 5.1.4.1.5

5.1.4.1.5

Այսինքն 4.4 կտրիչ վերևում և ներքևում, 1.1 ժանիք իւրաքանչիւր ծնօտի իւրաքանչիւր կողմում և 5.5 սեղանատամ։

Ատամի տեսանելի մասը կոչուում է պսակ, իսկ այն մասը, որ մենք չենք տեսնում և որը ամրացած է ծնօտի մէջ, կոչուում է ատամի արմատ։

Ատամի պսակը դրսից ծածկուած է փայլուն սպիտակ կարծր նիւթով, որ կոչուում է էմալ։

Մարդու մշտական ատամները

Աչ կողմից երկու կտրիչներ, երրորդ ժանիք, իսկ մնացած 5-ը փոքր եւ մեծ սեղանատամներ։

Էմալի տակ գտնուում է ոսկրային կամ ատամի նիւթը։ Նա այնքան սպիտակ և փայլուն չէ, ինչպէս էմալը։

Ատամի մէջ տեղում գտնուում է փոսիկ, որտեղ տեղաւորուած է ատամի կենդանի։ Դա կազմուած է արեան անօթներից և նեարդե-

բից, որոնք մտնում են առամի մէջ այն անցքից, որ գտնում է իւրաքանչիւր առամի արմատի ներքևի մասում։

Էմալը շատ մեծ նշանակութիւն ունի առամի համար, որովհետև նա պահպանում է նրան փչանալուց և հոտելուց։

Առողջապահութիւն։ Առամի փչանալը սովորաբար առաջ է գալիս նրանից, որ էմալը և ապա առամի ոսկրային մասը սկսում են կամաց կամաց քայքայուել և կոր կոր ընկնել, այսինքն առամն սկսում է փշրուել։

Յաճախ դա առաջ է գալիս այն դէպքում, երբ թուքը որևէ պատճառով քիմուանում է և քայքայում, փչացնում է առամները։

Քանի որ էմալն է փշրուում, առամի ցաւ չենք զգում, բայց երբ բացւում է առամնային նիւթը և սկսում է փշրուել, այն ժամանակ առամը սկսում է ցաւել տաք և սառը ջրից, կերակրից, քաղցրեղէնից, կերակրի մնացորդների ճնշումից և այլն։ Իսկ երբ այդ էլ փշրւում է և բացւում է առամի կակղանը իւր նեարդերով և բորբոքւում, այն ժամանակ ցաւը արդէն շատ սաստկանում է։

Առամները առողջ պահելու համար հարկաւոր է խնամել նրանց հետևեալ կերպով. առամները պէտք է մաքուր պահել, ամեն անդամ ճաշից յետոյ բերանը ողողել և ամեն օր, գոնէ երեկոյեան, մաքրել առամները առամնափոշիով և խոզանակով։ շաբաթը երեք անդամ կարելի է բերանը ողողել հետևեալ միջոցով՝ երկու մաս սալօլ, հինգսուն մաս սպիրտ

և տաս-տաս կաթիլ դաղձի և մեխակի իւղ վերցնել և ողողելու համար լցնել 20—25 կաթիլ ջրով բաժակի մէջ։ Կարելի է նոյնպէս գործածել բօրնի թթուտա կէս թէյի գդալ խառնած 1 բաժակ ջրի հետ, որով ուտելուց յետոյ հարկաւոր է առամները միշտ ողողել։

Առհասարակ բոլոր «ատամնահալ» միջոցները վնասակար են, որովհետև, նրանք աւելի վաճառականական նպատակ ունեն, քան թէ առողջապահական։ Դրա համար չպէտք է գործածել և առնել առանց բժշկի խորհրդի։ Իսկ եթէ մենք մեր առամները չմաքրենք և բերանը չողողենք, այն ժամանակ մեր առամների մէջ կմնան կերակրի մնացորդները, հիմանն և դրանից առաջ կգայ թթուտա, որից էմալը կը փչանայ և առամը կսկսի փշրուել։

Բայց դրանից պէտք է գիտենալ, որ չափազանց տաք և պաղ կերակուրները և խմիչքները շատ վնասակար են առամների համար։ Նամանաւանդ տաք տեղից յանկարծակի ցուրտ տեղ գնալը. դրանից էմալի վրա կարող են առաջ գալ ճեղքուածքներ, որից առամը շուտով կքայքայուի։

Նոյնպէս վնասակար է շատ կաթը բաներ ուտելը, որովհետև առամը կարող է կոտրուել։

Եթէ արդէն առամի վրա փոս կայ, պէտք է դիմել առամնաբուժին և առամը պլոմբ անել, այսինքն փոսը լցնել առ այնպիսի նիւթով, որ պահպանում է առամը յետագայ քայքայումից և ցաւից։ Իսկ եթէ առամը չի կա-

բևի լցնել, այն ժամանակ պէտք է հանել։

Անհրաժեշտ է հոգ տանել առաձինների պահպանութեան վրա նաև այն տեսակէտից, որ միայն առողջ առաձիներով կարելի է կրկակուրը լաւ ծամել, որը մարսողութեան համար անհրաժեշտ է։

Ցաճախ ստամոքսի բորբոքումը (катарръ) արհեստական առաձիներ դնելուց յետոյ անցնում է։

Առաձնաբոյժ Պ. Մակարեան

ԻՆՉՊԻՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼ ԽՕԼԵՐԱՅԻՑ

Երբ մի բաղամ կամ գիւղ լաւ է առնում, որ խօլերան *) մօտենում է, բնակիչները պէտք է հաւաքուին և միասին քննեն իրանց դրութիւնը։ Գրագէտները, օրինակ ուսուցիչները, քահանաները պիտի ժողովրդի մէջ կարդան գրքոյկները խօլերայի մասին և բացատրեն, թէ ինչ օգուտ ունին իշխանութեան և բժիշկների առաջարկած միջոցները։ Իսկ ժողովուրդը պարտաւոր է կատարել այդ բոլոր խորհուրդները և պահանջները, որովհետև ամեն ինչ արւում է ժողովրդի օգտի համար։

Ամեն մէկը պարտաւոր է զգոյշ լինել և

*) Բաղդատիր բժ. Աւծրուկեան «Խօլերա» գրքոյկից։

չընդունել իր մօտ կասկածելի տեղերից եկածներին և առհասարակ չպիտի որևիցէ յարաբերութիւն ունենայ նրանց հետ։

Փողոցները և տները պէտք է մաքուր պահել, ոչ մի չպիտի փողոցը կամ բակը գցի իր անմաքրութիւնները, իր գիբին ու ապրը, այլ պարտաւոր է հաւաքել արկղների մէջ և ամեն օր տանել քաղաքից կամ գիւղից դուրս և թաղել հողի մէջ, նշանակուած տեղերում։

Բնակիչների ունեւոր մասը, իր սեփական օգտի համար, պիտի օգնի ապրած մասին, բայ անելով թէյարաններ, ձրի կամ էժանագին ճաշարաններ, հրաւիրելով բժիշկներ կամ փելդշերներ ժողովրդին ձրի բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Ես ասում եմ «իր սեփական օգտի համար», որովհետև պաշտպանելով ապրանքներին վարակումից, հարուստները դրանով իսկ ազատում են և իրանց։ Ոչնչացնելով վարակի օջախները, հարուստները դրանով իրանց սեփական կեանքն են պաշտպանում։

Խօլերան երբ երեւում է մի տեղ, բնակիչները չպիտի սարսափահար լինեն և փախչեն, ընդհակառակն, ամենքը պիտի խմբուեն՝ ընդհանուր թշնամու դէմ կռուելու համար։

Առաջին գործը պէտք է լինի հեռացնել հիւանդներին իրանց տներից և տանել հիւանդանոցները, յետոյ անհրաժեշտ է ախտահանել նրանց բնակարանները։

Իսկ եթէ այդ տեղում չկայ հիւանդանոց և հիւանդը պէտք է թողնուի տանը, այդ դէպ-

քում պէտք է ձեռք առնել հետևեալ միջոցները։

1. Հիւանդի դուրս գնացածը և փսխածը ոչ մի դէպքում չպէտք է փողոց կամ բակ թափել, այլ պէտք է հաւաքել առանձին ամանների մէջ և թափել առանձին խոր փոսերի մէջ, որոնք փորւում են բակում (ջրհորներից հեռու)։ Ամեն անգամ էլ այս աղտոտութիւնների վրա պէտք է ածել քարտ հանգցրած կիր և չոր հող։ Աւելի լաւ կլինի անմաքրութիւնները տանել քաղաքից կամ գիւղից դուրս, թաղել յատկապէս փորած փոսերի մէջ և նոյնպէս ծածկել կրով և հողով։

2. Ձէ կարելի խօլերայով հիւանդի սպիտակեղէնը և շորերը լուանալ այն գետում, որից բնակիչները ջուր են վերցնում։

3. Անհրաժեշտ է, որ հարևանները ոչ մի յարաբերութիւն չունենան վարակուած տների հետ,—ոչ իրանք գնան այնտեղ, ոչ էլ ընդունեն այնտեղից նկածներին։

Զգուշութիւն։ Հիւանդասենեակի կարելի է և անվնաս է գնալ միայն այն դէպքում, երբ զգուշութեան բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնում։ Այդ միջոցները սրանք են. հիւանդի սենեակից դնացողը նախ մտնելու միջոցին իր շորերի վրայից պիտի հագնի երկաթէ շապիկ (խալաթ), որը պաշտպանում է նրան հիւանդի վարակիչ արտաթորութիւններից։ Դուրս գալու միջոցին շապիկը պէտք է հանել. իսկ եթէ այդպիսի շապիկ չի հագել, պիտի փոխի շորերը։ Ձպէտք է դիպչել ոչ հիւանդին ոչ էլ նրա իրերին։

Հիւանդի մօտից դուրս գալիս պէտք է լուացուել սապոնով և տաք ջրով, ապա և մի որևէ ախտահանող դեղով։

4. Ամեն մէկը պարտաւոր է իր առողջութեան վրա հսկել. հէնց որ մի ամենափոքրիկ տկարութիւն, փսխում կամ փորլուծութիւն ունենայ, պիտի դիմէ բժշկին։

5. Ձպէտք է թոյլ տալ ոչ մի չափազանցութիւն ոչ ուտելու, ոչ խմելու և ոչ էլ աշխատելու մէջ, իսկ միւս բաներում չպէտք է փոխել սովորական առաջուայ եղանակը, եթէ նա կանոնաւոր է եղել։ Կերակուրը պէտք է հեշտ մարսուող լինի և չափաւոր։ Դժուար մարսուող կերակուրները, օրինակ՝ չափազանց իւղալինները, հում ընդեղէնները (բողկ, կաղամբ, շաղգամ, գազար), խոզի միսը, երշիկը (կալբաս) և առհասարակ ապխտած (ծխով չորացրած) մսեղէնները, վատ պանիրը, թթուած կաթն ու մածունը, խմոր հացը խիստ արգելուած են։

6. Հում մրգերը խօլերայի ժամանակ կարելի է գործածել միայն այն դէպքում, երբ լուացուում են մաքուր, եփ տուած և սառցած ջրի մէջ. աւելի լաւ է վերցնել մի թէյի գդալ սալիցիլեան կամ լիմոնի թթուուտ, խառնել մի շիշ ջրի մէջ և դրանով լուանալ մրգերը։ Իսկ եթէ չի կարելի այս զգուշութիւնները գործ դնել, աւելի լաւ կլինի առ ժամանակ մրգեր բոլորովին չուտել։

7. Թոյլատրուած ուտելիքները, օրինակ՝ լաւ պանիրը, կարագը, խոզի ապուխտը պէտք

է պահունն ծածկուած տեղի մէջ կամ փաթաթուած մաքուր թղթի մէջ, որպէսզի ճանճերը վարակի թողնը չտանեցնեն նրանց վրա։ Խորհուրդ ենք տալիս հացը ուտելուց առաջ, մի քիչ դնել տաք վառարանի մէջ կամ թէ նրա կողքերը մի քիչ պահել օջախի կամ տպիրտի լամպայի բոցի վրա. ծայրայեղ դէպքում պէտք է վերցնել վերևի կեղևը ու ճաշացածն ուտել։

8. Ժողովրդի մէջ խօսք կայ, թէ սնուցողը պահպանում է խօլերայով վարակուելուց, ուստի շատերը սխտոր են լցնում իրանց գրպանները և ուտում մեծ քանակութեամբ։ Այս չպէտք է անել։ Այդպիսի քանակութեամբ սխտոր ուտելը մեռա է, որովհետև սխտորը գըրգռում է ստամոքսն ու աղիքները, ծարաւ է առաջացնում և հարկադրում է շատ ջուր խմել։

9. Խօլերայի ժամանակ անհնարաւ խմելիքը եռացրած և յետոյ սառցրած ջուրն է։ Ջրին կարելի է աւելացնել քիչ գինի կամ որևէ թթուառատ (լիմոնի) կամ թթու սերօտ (նռան, հոնի և ուրիշ)։ Ազգային ջրերը (սոդային, սելտէրեան) վնասակար են։ Պէտք է խուսափել շատ սառն խմիչքից, պաղպաղակից, սառը բլուլից (ակրօշկայ) և այլն։

10. Փորն ու ոտները պէտք է տաք պահել։ Չի կարելի քնել խոնաւ տեղ, պառկել խոնաւ հողի վրա։ Խորհուրդ ենք տալիս գործ ածել բրդէ կամ ֆլանելէ փորկապ։

11. Սովորած մարդիկ կարող են լոգանալ գնում տաք եղանակներին, եթէ միայն գնալու չի անցնում քաղաքի վարակուած թաղերի միջով։ Լողանալ կարելի է միայն ուտելուց 3—4 ժամ յետոյ։

Օրինակ բժշկի զրոյց։ Խօլերայի ժամանակ ստամոքսի ամեն տեսակ խանգարուածներ պէտք է լուրջ կերպով բժշկել։ Այս պատճառով ամեն կասկածելի դէպքում խնդրէք բժշկի դիմել։ Մեր կողմից տալիս ենք հետևեալ խորհուրդները.

1. Հիւանդին խնդրէք անկողին պառկեցրէք, փորին մանանեխ (горчичник—sinapisme) դրէք, կամ դրէք կանեփի սերմից փաթեթ կամ թէ չէ մի պարկ, որի մէջ կլցնէք տաքացրած աւազ կամ թեփ (օր. փայտի մանրուքը, որ սղոցելուց է գոյանում)։ Ժողովուրդը սերում է տաքացրած ապուր ու խոտ,—դրանք էլ լաւ են։ Կարելի է նոյնպէս հիւանդի ոտները տաքացրէք ու կողքերին եռման ջուր լցրած շիշեր շարել, որոնք պէտք է փաթաթուած լինեն մաքուր շորով։

2. Եթէ հիւանդը փսխում է կամ լուծք ունի, տուէք խմելու շաքարաջուր լիմոնի կամ նռան հիւթով, իսկ աւելի լաւ՝ ղլիսեր, եթէ խմեցնէք նրան մի բաժակ ջուր, որի մէջ կաթացրէք՝ 10—15 կաթիլ ազաթթուառ (соляная кислота—acidum muriaticum)։ Եթէ փսխելը չի դադարում, կաթ-կաթ սառուց տուէք կուլ տալու, իսկ եթէ այդ էլ չի օգնում և, աւելի ևս, եթէ լուծել է սկսում, պէտք է տաք բօտկինի կամ ինօզեմցեվի կաթիլները (հասակաւորին 20—25 կաթիլ ջրով երկու-երեք ժամը

մի անգամ, և եթէ փսխելը յաճախ է կրկնւում, նոյն իսկ ժամը մի անգամ)։

3. Եթէ հիւանդի ոտերն ու ձեռները ձըգձգւում են (որ մեծ ցաւեր է պատճառում նրան), պէտք է ցաւոց անգամը մեղմել մի կաթ շորով, որ պէտք է թաթախել մանանեխի կամ քաֆուրի սպիրտի մէջ։

4. Շնչարգելութեան ու սրտի բաբախման դէմ գործ են ածում վալերիանի և հոֆֆմանի կաթիլները (15—20 կաթիլ օրական մի քանի անգամ), իսկ նուազութեան և ուշագնացութեան դէմ, բացի այդ, պէտք է նաշատրի ոգիով (нашатырный спиртъ) հոտ տալ քթին։

5. Եթէ հիւանդի անդամները սառել են, պէտք է տաքացնել տաք ջրի շիշերով։

6. Երբէք չպէտք է ականջ դնել հեքիմներին ու պառաւներին, որոնք իրանց տգէտ խորհուրդներով ու վնասակար միջոցներով կորցնում են ժողովրդին։ Օրինակ, նրանք հիւանդից արիւն են առնում, այն ինչ այդ չափազանց վնասակար է, որովհետև աւելի ևս թուլացնում է հիւանդին և ուղղակի կարող է սպանել նրան, քանի որ առանց արիւն առնելու էլ հիւանդը շատ չուր է կորցնում լուծելիս ու փսխելիս և նրա արիւնը արդէն թանձրացած է։

Պէտք է խոյս տալ նմանապէս և զանազան պառաւական բոյսերից ու «քոլերից», որոնցից միայն վնաս կայ և երբէք օգուտ։

Բժ. Վ. Արժուանի

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ *)

Ինչո՞ւ համար են ուսում

Ամենքին յայտնի է, որ երեխաները տարէցտարի աճում են, նրանց քաշը ծանրանում է, մարմնի իւրաքանչիւր անդամը մեծանում։ Բայց արդեօք ինչն է դրա պատճառը։ Ինչն է այդպիսի փոփոխութիւն առաջացնողը...

—Կերակուրը, գուցէ կպատասխանէ մէկը, և դա միանգամայն ճիշտ կլինի։ Լաւ կերակուրը նպաստում է մարդու աճմանը, ուրեմն **երեխաները ուսում են, որպէսզի ապրեն, առնեն-զարգանան։**

Այդ երեխաների ծնողները և ուրիշ հասակաւոր մարդիկ էլ իւրաքանչիւր օր կերակուր են ուտում, բայց չեն աճում-մեծանում. ուրեմն ինչո՞ւ համար են ուտում դրանք։ Պարզինք։

Մեզանից իւրաքանչիւրը շուր է հագնում և գիտէ, որ նա մաշւում և կարկատել ու նորոգել է պահանջում։ Այդ միևնոյն բանը պատահում է մեր մարմնին։ Երբ որ մենք աշ-

*) Տպագրւում է ըստ «Кавказскаго Календаря на 1911 годъ» գրքի։

Ծանօթ. Պաղուածօրէն թարգմանել ենք „Какъ живетъ наше тѣло“ գրքից, որ թարգմանութիւն է անգլիերէն մի յայտնի ժողովրդական գրուածքից։

խաւում ենք, խաղում, մտածում կամ քնում ենք, մեր մարմինը մաշւում է։ Մաշուած շորը նորոգելու համար կարիւտան ենք դնում, կարում ենք թելով. իսկ մարդու մարմինը կազդուրելու համար կերակուր ենք ընդունում։

Ուրեմն մենք կերակրւում ենք, որպէսզի վերանորոգենք եւ կազդուրենք մեր մարմինը։

Կարող ենք արդեօք երկար ժամանակ առանց անդի մնալ։

Ո՛չ. քաղցածութիւնը մեզ վազ կամ ուշ կտիպել ուտելու մասին հոգ տանել։ Եւ եթէ անկարող լինինք իւր ժամանակին մնունդ գտնել, մեր մարմինը հալ ու մաշ կլինի և կարող է նոյն իսկ մահուան պատճառ. **ուրեմն մենք կերակրւում ենք, որպէսզի մեր մարմինը ուժասպառ լինելուց ազատենք։**

Բայց այդ դեռ բոլորը չէ։

Քաղցած մարդիկ ուշիլ շուտ են գոյում գուբաթ, քան թէ կուշտ մարդիկ, որովհետև մնունդը տաքացնում է մարմինը. **ուրեմն մենք կերակրւում ենք, որպէսզի մեր մարմնի մէջ տաք տաքութիւն պահպանենք։**

Ահա այդքան մեծ և բազմազան է մնունդի նշանակութիւնը կեանքում։

Ի՞նչ ենք ուտում

Ժամերը, ի հարկէ, մենք այն կերակուրն ենք գերապատւում, որը ուշիլ տաքութիւն կարող է տալ։ Օրինակ. հետաւոր հիւսիսում ապրող էսքիմոսը ուշիլ ախորժակով ուտում է կէտ ձկան ճարպը, ուշիլ հաճոյքով ճաշակում է ճարպէ մոմը, քան թարմ պտուղներ կամ քաղցր կերակուրներ։ Եւ դա հասկանալի է, որովհետև ձարպոտ կերակուրը տաքացնում է մարմինը։

Բայց այդ դեռ չի նշանակում, թէ պէտք է ճարպ ուտենք։ Դրա փոխարէն կարելի է ընտրել այնպիսի նիւթեր, որոնք ճարպային մասեր ունեն։ Օրինակ. լուղը, միսը, կաթը, ընկոյզը, շագանակը և այլն։

Քաղցր կերակուրներն էլ տաքացնում են մարմինը։ Շատ մրգեր, պտուղներ, բոյսեր ու բանջարներ քաղցր համ ունեն, որովհետև իրենց մէջ շաքար են պարունակում. օրինակ տանձը, խնձորը, խաղողը, ճակնդեղը, տակը, շաքարաբոյսը և այլն։ Հացահատիկները պարունակում են իրանց մէջ մեծ քանակութեամբ կրախմալ և դրա հետ միասին բաւական շաքար։

Դրախմալն էլ տաքացնում է մարմինը։ Այս տեսակի կերակուրներից ամենասովորականը հացն է, գետնախնձորը (կարտոֆիլ) և բրինձը. ուշիլ լաւ է գետնախնձորը ուտել խաշած և ոչ տապակած։

Այսպէս ուրեմն, ձարպը, դրախմալը եւ քաղցր կերակուրները օգտակար են նրանով, որ տաքացնում են մարմինը։

Բայց միատեսակ է շատ ճարպոտ և քաղցր կերակուր ուտելը, անուշադիր մողնելով միւս

նները։ Չէ որ կերակուրը միայն տաքութեան համար չենք ընդունում, այլ և մարմինը կազդուրելու, վերանորոգելու համար։ Ուրեմն չպէտք է մոռանանք սննդարար նիւթերի մասին։

Այդ տեսակ նիւթերից ամենալաւը **կաթն** է։ Երեխան ամբողջ ամիսներ միայն կաթով է կերակրւում և աճում մեծանում։ Պարզ է, որ կաթը իր մէջ պարունակում է մեզ հարկաւոր բոլոր սննդարար նիւթերը՝ ճարպ, շաքար և բոլոր միւսները։ Բայց կաթ գործածելիս ամեն կերպ պէտք է ուշադրութիւն դարձնել, որ նա մաքուր լինի և առողջ կովից կամ ոչխարից։

Հացը մեր կեանքի անհրաժեշտ հիմքն է կազմում, մանաւանդ որ նա իր գնով մատչելի է և հարուստին և աղքատին։ Հացը լինում է սև և սպիտակ։ Բայց աւելի սննդարար և օգտակար է սև հացը։ Սպիտակ հացը հացահատիկների միջուկից է պատրաստւում և համեմատաբար աւելի քիչ սննդարար նիւթ է պարունակում։

Միսն էլ պատկանում է ամենասննդարար նիւթերի կարգին։ Բայց պէտք է զգոյշ լինել. հին փչացած միսը չափազանց վնասակար է։ Տաւարի միսը աւելի սննդարար է, քան թէ ոչխարի կամ հաւի, բայց գրա փոխարէն նա աւելի ուշ և աւելի դժուարութեամբ է մարսւում, քան թէ միւսները։ Ուզի միսը երբեմն վարակուած է լինում, ուստի և կարող է մեծ վնաս հասցնել, նոյն իսկ մահուան պատճառ դառնալ։ Դրա առաջն առնելու համար պէտք է ընտրել նախ առողջ մից և երկրորդ՝ լաւ խաշել կամ տապակել։ Հում կամ կիսաեփ միսը վտանգաւոր է առողջութեան համար։

Լաթին, սիսեռը, ոսպը և առհասարակ բանջարեղէնը նոյնպէս օգտակար նիւթ է, մանաւանդ երբ զգձ են ածում խաղով տապակած։ Նրանք իրենց մէջ պարունակում են մեծ քանակութեամբ սննդարար նիւթեր։

ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ

Դարմանը եւ նրան բժշկելու միջոցները

Դարման կոչուածը մի խիստ վարակիչ հիւանդութիւն է, որ համարեա բոլորովին նման ձևերով յաճախ պատահում է որոճող անասուններն և խոզերի մէջ, իսկ կաթի, լորձունքի, կղկղանքի միջոցով անցնում է նաև ձիերին, թռչուններին և մարդուն։ Ձին սովորաբար շատ քիչ ենթակայ է այս հիւանդութեանը։ Մեծ եղջիւրաւոր անասունները դարձեալ հիւանդանում են երբեմն բերանից, երբեմն կզակներից, երբեմն էլ երկուսից միասին։ Ոչխարների և խոզերի կզակների արտաքինում են միայն վէրքեր դուրս գալիս։ Երբեմն այս հիւանդութիւնը երևան է գալիս նաև մի քանի վայրենի կենդանիների մէջ։

Նախազգուշացուցիչ միջոցները, բժշկելն ու պատուաստելը

Դարպասով հիւանդ կենդանուն շատ հեշտութեամբ կարելի է բժշկել. նա երբէք չի մնայի այս հիւանդութիւնից։

Այս հիւանդութեան առաջն առնելու համար, կարևոր է ամենից առաջ հիւանդ անասուններին հեռացնել առողջներից, դաշտ չուղարկել արածելու։ Եթէ հիւանդութիւնը տարածուել է արդէն գոմի անասունների մէջ, պէտք է առողջներին անմիջապէս հեռացնել նրանց մօտից և հնար եղածին չափ հիւանդներին մատակարարել մաքուր օդ, խմելու և բերանը ողողելու համար մաքուր կամ քիչ աղաթթուտ (солянная кислота) կամ քացախ խառնած ջուր, տակները փռելու համար գործ ածել մաքուր, չոր և փափուկ փուռածք՝ յարդ, հեռացնել այդպիսիներին առջից պինդ և չոր կերը և տալ դիւրամարսը։ Ամենից յարմար է ալիւրից, թեփից կամ ազած բոլոր հացահատիկներից լաւ տալ օրական 5—6 անգամ։ Օգտակար է գործածել նաև խաշած շաղգամի կամ կարտօֆիլի հետ խառնած ալիւր կամ թեփ։ Կարելի է տալ նաև լաւ հիւթալի խոտ և առւոյտ, միայն ոչ շատ։ Ադրը հարկաւոր է շատ շատ դուրս թափել, որ գոմը մաքուր լինի և որովհետև հիւանդութիւնն առաջացնող բակիլները ադրի մէջ կարող են իրենց գոյութիւնը պահպանել 8—14 օր և ոչ աւելի, ետա այս պատճառով պէտք է առողջանալուց այդ-

քան օր չետոյ միայն առողջ անասուններին տանել գոմը։ Որովհետև այդ բակիլները ապրում են ադրի մէջ, այդ պատճառով պէտք է կամ բոլորովին հեռացնել ադրը, գոմը շատ լաւ մաքրել և կամ աշխատել ախտահանել։

Չէնց որ մէկը նկատեց, թէ լուր անասուններից մէկը կամ մի քանիսը հիւանդ են, իսկոյն պէտք է բերանները ողողել մաքուր ջրով։ Աւելի լաւ է այդպիսի դէպքերում մի վեդրօ մաքուր ջրի հետ մի հացի գդալ կամ մի չիշ ջրի հետ 2—3 թէյի գդալ աղաթթուտ խառնել և այդպէս ողողել բերանը (մանաւանդ լեզուն և բերանը) օրական երկու, երեք անգամ։ Օգտակար է համապատասխան նաև քացախաջուրը, որի հետ խառնում են այնքան անհալ մեղր (сотовый медъ), որպէսզի սուացուի մածուցիկ հեղուկ, որը և օրական 3—4 անգամ քսում են բերանի այլ և այլ մասերին։ Պէտք է խմացնել միշտ ազաթթուտ խառնած մաքուր ջուր։ Շատ օգտակար է վերքերը թրջել 5% շիպաջրով և բշտիկները սրաքուելուց յետոյ մնացած վէրքերը, քերծուածքները և կճղակների վէրքոտ մասերը օրական 2—3 անգամ հէնց դրանով կամ կաղնու կամ ուռենու կեղևից պատրաստած եփնաջրով (խաշած ջուր) էլ լուանալ։

Անասունների բերանի և ոտքերի վէրքերը աւելի օգտակար է լուանալ օրական երկու անգամ 2% կապոյտ պիօկտանինով (синій піоктанинъ)՝ լուծելով այդ դեղի երկու մասը 100 մաս պարզ ջրի մէջ։ Փորձերը ցոյց են

տուել, որ այդ արժան դեղը մի երկու օրուայ ընթացքում բոլորովին առողջացնում է վերքերը *):

Գերմանացի յայտնի անասնաբոյժ ուսուցչապետ Դ-ր Վինկլերը խորհուրդ է տալիս այս հիւանդութեան ժամանակ հիւանդ կովերի կաթը լաւ եփելուց յետոյ խմացնել նրանց մօտ եղող բոլոր առողջներին, որով վերջիններս դժուարութեամբ կնթակայ կլինին այդ հիւանդութեան։ Հորթերից, արջառներից և մոլիներից իւրաքանչիւրին հարկաւոր է տալ օրական 2—3 լիտր (4—6 շիշ), իսկ հասակաւոր անասուններին 4—6 լիտր (8—12 շիշ)։ Այս բանը պէտք է կրկնել 8 օր անընդհատ։

Հիանալի և միևնոյն ժամանակ ձեռքի տակ եղած միջոց է համարւում կճղակներին և նրա շուրջն եղած տեղերը մաղիք քսելը (древесный деготь липовый или березовый)։ Վերք եղած տեղերի վրա օրական 1—2 անգամ պէտք է քսել այդ մաղիքից, իսկ եղջիւրների արանքում պէտք է դնել մաղիքի մէջ թաթախած քուլք (паклевый тампонъ), որով վերջը շուտով կառողջանայ։ (Նոյնպիսի բարեյաջող հետևանքներ կունենայ կրիչլինի կամ կրիօզոլինի 3—5% լուծուածքը։ հարկաւոր է օրական 2—3 անգամ լուանալ հիւանդների բերանի խոռոչը, նոյնպէս քսել կճղակներին և դուրս ուռած ատինքին։ Վերջերը 5—8 օրուայ ընթացքում կլժշկուին, իսկ հիւանդները կսկսեն բաւարար չափով կեր ընդունել)։

Կճղակները վնասուելուց յետոյ հարկաւոր է ոտքի մերկացած մասերին քաղցրեր (գլիցերին) քսել, բայց եթէ կճղակը բոլորովին ընկել է և հիւանդութիւնը արդէն հասել է մինչև յօդերը, ի հարկէ, ոչ մի բան չէ կարող օգնել և միակ միջոց մնում է կենդանուն մորթել։

Իսկապէս հիւանդութեան դէմ կռուելու ամենաարդիւնաւոր միջոցը կենդանիների պատուաստումն է, որը շատ հեշտութեամբ կարելի է գլուխ բերել։ Հիւանդութիւնը երևան ելլու հարկաւոր է վերցնել մի մաքուր շորի կտոր կամ աւելի լաւ է սպունգ և հեռանդ կենդանու բերանի մէջ թուքով թրջելուց յետոյ խոկոյն այդ շորի կտորը կամ սպունգը քսել ամբողջ հօտի կամ բոլոր անասունների լեզուին, ընդերքին և շրթունքներին։ Կարելի է նաև այս նպատակով վեր առնել մի փունջ լաւ խոտ, կոխել հիւանդ կենդանու թքոտ բերանը և դուրս հանելուց յետոյ ներս տանել առողջ կենդանիների բերանը։ Երկու երեք օրից յետոյ պատուաստած կենդանիների վրա երևան կգան վարակելու նշանները, և թէպէտ հիւանդութիւնը բաւական արագ ընթացք կունենայ, բայց չպէտք է վախենալ, որովհետև թեթև կանցնի և հիւանդը շուտով (մի երկու օրից յետոյ) կառողջանայ։ Պատուաստումը բացի թեթև և կարճ միջոցով հիւանդութիւնն պատճառելուց, այն մեծ նշանակութիւնն ևս

*) Մի մսխալ պիօկսանին տրւէ 15 կոպէկ. այդ համակութեամբ կարելի է մի հանի հիւանդ բժշկել։

ունի, որ կաթնասուն կենդանիների կաթը չէ պահասում և իրանք էլ չեն նիհարում. բացի սրանից, պատասխանելուց յետոյ հիւանդութիւնը կարճ միջոցում, մէկ կամ երկու շաբաթուայ ընթացքում, բոլորովին վերջանում է և անասունների ոտքերը ազատ են մնում վարակուելուց։

Դ. Ղազարեան

ԱՍՏՂԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Արեւը

(Դօք. Իւնգ)

Արեւի հեռաւորութիւնը։ Անթիւ անհամար են աստղերը. նրանց միլիօնաւոր շարքերում արեգը միայն մի հասիկ կէտ է իր վայելուչ մեծութեամբ ու զօրութեամբ շատ-շատերից աւոր։ «Երկնային բանակում արեգը մի հասարակ զինուոր է»։ Բայց այդ անհամար աստղերից միայն արեգն է բաւականաչափ մօտ երկրին, որպէսզի նկատելի կերպով ազդէ կեանքի վրա։ Դժուար է գտնել մի բան, որով կարելի լինէր զաղափար տալ այդ ազդեցութեան մասին։ Նա ամբողջ կեանքի շարժիչն է։ Քիմիական, մեխանիքական և կենսական բոլոր երեւոյթները նրանից են առնում իրենց ոյժը։ Ոչնչացրէք արեգի ճառա-

գայթները, և երկիրը կմեռնի, կեանքը չդազարի։ Առանց լոյսի և տաքութեան չէր լինի բուսականութիւն. առանց բուսականութեան չէին կարող ապրել կենդանիները ու մարդիկ։

Ահա հէնց դա է պատճառը, որ բոլոր ժամանակների մտածողները խոստովանել և շեշտել են արեգի ազդեցութիւնը նիւթական կեանքում։ Շատերի համար նա նոյն իսկ պաշտամունքի առարկայ է դարձել իրրև աստուածութիւն։

Այդ բոլորից յետոյ զարմանալի չէ, թէ ինչու գիտական աշխարհը այն մեծ հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի այդ երկնային մարմինը, աշխատելով պարզել նրա էութիւնը, կազմուածքն ու ներգործութիւնը։

Հեռաւորութիւնը։ Արեգը մեր աչքին շատ փոքր է երեւում։ Բայց գիտնականները վաղուց արդէն հաստատել են, որ նա մի ահագին մարմին է՝ 1,300,000 անգամ մեծ երկրից։ Նա իր մէջ 330,000 անգամ աւելի նիւթ է պարունակում, քան թէ մեր երկրագունդը։ Այդ ահագին մարմինը մեզ այնքան փոքր է երեւում, որովհետեւ չափազանց հեռու է, չափազանց բարձր։ Երկար տարիների ջանքերով, բազմաթիւ փորձերով գիտնականները հաշուել ու գտել են, որ արեգի հեռաւորութիւնը երկրից կազմում է մի տարածութիւն 149,628,000 կիլօմետր երկարութեամբ։ Այդ ահռելի տարածութիւնը անցնելու համար մարդ պէտք է գոյծ դնէր 6,300 տարի, օրական 64 կիլօմետր գնալով։ Իսկ եթէ երեակայենք, որ երկրագըն-

դից դէպի արևը մի երկար ուղի է շինած, ուր գնացքները ժամը 92 կիլօմետր տարածութիւն են կտրում, այն ժամանակ գիշեր ցերեկ ճանապարհ գնալով կարելի էր արևին հասնել 175 տարուց յետոյ։ Երկրից արձակած թնդանօթի գնդակը միայն 9 տարուց յետոյ կհասնէր արևին, եթէ կարողանար մինչև վերջը շարժուել իր սկզբնական արագութեամբ։

Արևի հեռատրութիւնը աւելի պարզելու համար պրօֆ. Մինդինհօլը առաջ է բերում հետևեալ հետաքրքիր օրինակը։

—Երևակայենք մի երեխայ, ասում է նա, որ իր երկար ձեռքերը դէպ ցնում է արևին և այրում։ Պարզ է, ի հարկէ, որ այդուհետև ցաւի զգացմունք առաջ կգայ, բայց երեխան վազուց արդէն ձերացած կլինի մինչև որ այդ զգացմունքը կհասնի նրա գիտակցութեանը։ Ահա թէ ինչու. Հեռաձոյլի և ուրիշ գիտական սարքերով, նեղվային մի որևէ հոսանք, օրինակ, ցաւի զգացմունքը անցնում է 100 ոտն. տարածութիւն մի վայրկեանում կամ օրական 2,635 կիլօմետր, ուստի և անհրաժեշտ է 150 տարի, որպէսզի արևի կրակից այրուած երեխայի ձեռքը ցաւի զգացմունքը հասնէ ուղեղին։ Ահա այդքան հեռու է արևը մեզանից։

Արեւի մակերեւոյթը։ Դիտել երկրին կանք ուղղ մարմինն—արևի մակերևոյթը—ահա մի հետաքրքիր գործողութիւն։ Բայց ինչպէս. չէ՞ որ սովորական աչքը անզօր է դրա համար, չէ՞ որ մարդկային դիտողութեան ուժից վեր է մի այդպիսի դերը։ Բայց մարդ-

կային խելքը գտել է դրա միջոցը։ Գիտնականները հնարել են այնպիսի հեռադիտակներ (телескопъ), որոնց շնորհիւ կարելի է լուսնի, արևի ու աստղերի մարմինն էլ առարկայ դարձնել։ Եթէ վերցնենք մի այդպիսի հեռադիտակ և նայենք արևին, այն ժամանակ մեր առջև կբացուի մի հետաքրքրաշարժ պատկեր։ Արևի մակերևոյթը միատեսակ, միապաղաղ չէ. նա բազմացած է չափազանց փայլուն հատիկներից, որոնք խումբ-խումբ կամ շերտերով լողում են խաւար միջավայրում։ Հանդարտ չեն այդ հատիկները, այլ շարժուն, տատանուող։ «Արևի ամբողջ մակերևոյթը, ասում է պրօֆ. Իւնգ, իւր տեսքով շատ նման է նկարչական կոպիտ թղթին կամ նոր մակարդուած կաթին»։

Արեւի ամպեր։ Մի շարք գիտնականներ գտել են, որ արևն էլ իր շուրջը ամպեր ունի։ Սակայն այդ ամպերը բաղկացած են ոչ թէ ջրային մանրիկ կաթիլներից, ինչպէս մեզանում է, այլ հալուած մետաղի կաթիլներից. նրանք լողում են արեգակային մթնոլորտում, որը մի այրող բոց է, որ աղմկում է աներևակայելի ուժով և կատաղութեամբ։ Այո, ջրից չեն գոյանում արևին շրջապատող ամպերը, այլ կրակից։ Նրանք կրակէ ամպեր են։

Արեւի բծերը։ Փայլուն ու կրակոտ է արևի մակերևոյթը, բայց միատեսակ չէ այդ փայլը ամբողջ տարածութեան վրա։ Այստեղ կան և մութ կէտեր, խաւար կտորներ, որոնք յայտնի են դարձել «արևի բծեր» անունով։

Ա. ՊԱՏԿԵՐՆԵՐ.

Տպվիճի գիսակաթի նկատած (1883 թ.) լուսնի երեսի ամենամեծ լուսանկարները։

Լուսնի գիսակաթի նկատած (1873 թ.) լիքը։

Դեռ շատ հին ժամանակներում մարդկանց յայտնի էին այդ բծերը։ Չինական աստղագուշակների մէջ են յիշւում նրանց մասին։ Մեր ժամանակներում գիտնականները փորձերով եկան այն եզրակացութեան, որ այդ բծերը փոփոխական են և շատ նման ամպերին։ Նրանք աւելորդաբար բազկացած են լինում երկու մասից՝ խաւար կենտրոն, որ կոչւում է սրունք և քիչ լուսաւոր բոլորակ, որ կոչւում է կիսաստուեր։ Երկար կեանք չունեն այդ բծերը, մէջէն հաշուած 2—3 ամիս։ Բայց շատ անգամ անյայտացող բծի տեղ իսկոյն յայտնւում է մի ուրիշը, նրա տեղ երրորդն և այլն։

Երբեմն արեի բծերը անագին մեծութիւն են ունենում. օրինակ 1858 թ. նկատել են մի բիծ 230,000 կիլոմետր լայնութեամբ։ Նա ծածկել է արեի $\frac{1}{100}$-րդ մակերեսոյթը. նրա տրամագիծ երկարութիւնը 18 անգամ երկար է եղել երկրագնդի տրամագծից։

Մի քանի գիտնականների կարծիքով այդ բծերը բաւական խոշոր աղդեցութիւն ունին երկրային կեանքի վրա, նրանք ազդում են երկրի կլիմայի, փոթորիկների ու անձրևների վրա։ Բայց այդ հարցը դեռ վիճելի է համարւում և կարող է վերջնական լուծում ստանալ միայն հետաքոր փորձերից յետոյ։

Ա. Եւի թագը։ Յայտնի է, որ մեր երկիրը իր լոյսը առնում է արեից և երբ լուսինը մտնում է արեի ու երկրի մէջ տեղը, այն ժամանակ տեղի է ունենում արեի խաւարում։ Ուշադրաւ է բնութեան այդ երեոյթը, մանա-

ամեն այն լուսատուր շերտը, որ երևում է արևի շուրջը. արևի թագ է կոչում նա։ Երբ խավարման ժամանակ երկինքը պարզ է, լուսինը երևում է իբրև սև գունդ, իսկ նրա շուրջը ճառագայթների ցանցից բաղկացած մի պսակ։ Դիտականներին երկար ժամանակ զբաղեցնել էր տալիս այն հարցը, թե որտեղ է գոյանում այդ լուսափայլ պսակը՝ արևի մթնոլորտում, լուսնի մթնոլորտում, թե երկրին մոտիկ։ Երկար վեճերից ու փորձերից յետոյ, վերջապես 1869 թ. պրոֆ. Սօրներ Ասլենսեր և Իւնգը հաստատեցին, որ լուսինն ու երկիրը մաս չունեն այդ գործում. ինքը արևն է իրա համար թագ պատրաստողը։

Լոյսն ու տաքութիւնը։ Վերևում ասացինք, որ արևը երկրային կեանքի շարժիչն է։ Միանգամայն պարզ կլինի այդ իրողութիւնը, եթե աչքի առաջ ունենանք, որ միայն արևն է լոյսի և տաքութեան սկզբնական աղբիւրը։ Եւ որքան մեծ է նրա ոյժը. նրա տուած լոյսը հաւասար է 175,000,000,000,000,000,000,000,000 մոմերի լոյսի, նրա ճառագայթների լոյսի ատիճանը 34 անգամ ուժեղ է, քան թէ ելեկտրական լոյսի ատիճանը։ Հապա տաքութիւնը, Թօդճատի գիտնականի հաշուով արևի մակերևոյթի վրա ձեւսիուսի 10,000° տաքութիւն կայ։ Դա մի այնպիսի ոյժ է, որ մի րոպէում կհալեցնէ 58,2 ոռնաչափ կամ 17,7 մետր հաստութեան սառույցի շերտը։

ՅԻՉԻՐ.

Ի՞նչ է բամի

(Գրօֆևատ Վագներ)

Գամու ճանապարհները։ Երկար, շատ երկար ժամանակ մարդիկ աշխատել են իմանալ, թէ ինչ է քամին, որտեղից է գալիս և ուր է գնում։ Նրանք դիտել են օդի մէջ կատարուող բոլոր փոփոխութիւնները. օրէցօր, ատրէցատրի նկատել են, թէ որտեղ քանի աստիճան ցուրտ կամ տաք է լինում, որքան անձրև ու ձիւն է գալիս, ինչպիսի քամիներ են փչում և այդ բոլորից յետոյ գալ են քամու պատճառն ու էութիւնը։ Այո, գիտնականները այնքան փորձեր են արել, այնքան աշխատել, որ այժմ մարդիկ կարող են հեշտութեամբ իմանալ, թէ երբ և որտեղից քամի պիտի փչէ և ինչպիսի եղանակ նա պիտի բերէ։

Տաք երկրներից նա տաքութիւն է բերում, ցուրտ երկրներից զովութիւն։ Ծովերից նա ջուր է վերև բարձրացնում և ամպեր գարձնում։ Ամպերից անձրև և ձիւն է թափւում։ Առանց քամիների մի տեղ չափազանց տաք կլիներ, մի ուրիշ տեղ ցուրտ, մի տեղ չափազանց չոր, մի ուրիշ տեղ խոնաւ։ Եւ այդպի-

սով ցամաքը կդառնար ամայի անապատ՝ առանց բույսերի և կենդանիների։ Այդքան մեծ է քամու նշանակությունը։ Բայց այդ դեռ բոլորը չէ։

Քամին է, որ զարդարում է երկինքը պէսպէս ամպերով և նրա տեսքին մի առանձին գրաւչութիւն տալիս։ Առանց քամու ցամաքի վրա կլինէր շարունակ կապոյտ երկինք՝ առանց ամպերի, իսկ ծովերի վրա մութ ու մռայլ մառախուղ։

Որտեղից եւ ո՞ւր է փչում քամին։ Ցայտնի օրէնք է, որ որքան շատ լինի ճնշումը, նոյնքան մեծ կլինի դիմադրութիւնը. օրինակ՝ որքան մեծ ճնշման է ենթարկուած, նոյնքան մեծ ուժով կաշխատի լաստանալ-ազատուել ճնշումից։ Եթէ վերցնենք երկու շիշ-մէկը նօսրը ու թեթև օդով, իսկ միւսը խիտ ու ծանր օդով և մի խողովակով միացնենք նրանց, այն ժամանակ երկրորդ շշի օդը արագ հոսանքով կանցնի դէպի միւս շիշը, որտեղ ճնշումը աւելի սակաւ է։ Այդ միևնոյնը կատարւում է և բնութեան մէջ։ Քամին միշտ փչում է այն տեղերից, որտեղ ճնշումը մեծ է, և դէպի այն կողմը, որտեղ օդը աւելի քիչ է ճնշուած։

Քամու վրա ազդող ուրիշ պատճառ էլ կայ։ Օդը տաքանալուց լայնանում է, թեթևանում և երկրից վերև բարձրանում։ Այդպիսով երկրի վրա օդը հետզհետէ թեթևանում է, նօսրանում, իսկ վերևինը ծանրանում։ Վերևի ծանրացած օդը նորից վար իջնել չի կարող, որովհետև նորերից տաքութեան ազդեցու-

թեան տակ շարունակ նորանոր շերտեր են վերև բարձրանում։ Այսպիսով վերևի օդը հոսում է դէպի այն կողմը, որտեղ ճնշումը քիչ է։ Հէնց այդ հոսանքն է քամին։ Նա ծնունդ է առնում վերևում—այնտեղ, որտեղ ամպերն են լողում, որտեղ ճնշում չկայ։

Երկրի երեսին էլ քամի է գոյանում, երբ ցուրտ տեղերից ճնշուած օդը անցնում է դէպի տաք երկիրները։

Այսպէս ուրեմն, քամին փչում է երկրի երեսին՝ ցուրտ տեղերից դէպի տաքը, իսկ երկրի վերևում՝ տաքից դէպի ցուրտը։

Տարափների բանիւեր։ Քամին սովորաբար միատեսակ ուղղութեամբ չէ շարժւում, նա միշտ պտոյտներ է անում։ Բայց այդ պտոյտները չափազանց մեծ են։ Որքան փոքր են պտոյտները, նոյնքան փոփոխական է լինում քամին։ Նա փչում է մերթ մի կողմից, մերթ—միւս։ Երբեմն էլ չարաճճի երեխայի նման խաղեր է անում. հանաքարէի փոշին, ծառերի տերևները, և կլոր սիւն դարձրած փչում—տանում այս ու այն կողմը։ Ժողովուրդը դրան «սատանի քամի» է ասում։ Ամեռը նոյն ձևով նա ձիւնն է բարձրացնում։ Սակայն հեռաւոր երկրներում, անապատներում նա այդպիսի փոքրիկ խաղերով չի բաւականանում, այլ բարձրացնում է աւազի ահագին կոյտեր և փչում տանում է առաջ ու առաջ։ Դա թաթառ քամին է։

Վա՛յ այն մարդկանց կամ անասուններին, որոնք կպատահեն այդ քամու ճանապարհին,

աւազը կլցուի նրա քիթն ու բերանը և մի ակնթարթում կխեղդէ։ Հեռաւոր Արաբիայում և Սահարայում պատահել են շատ դէպքեր,



Ջրհոն միայն տեղ է, ծառ՝ տրտնջացող ցմրուր։

երբ այդ քամին ամբողջ քարաւաններ է կործանել։ Տես պատկեր եր. 196։

Դրանից աւելի սարսափելի են լինում այն փոթորիկները, որոնք պատահում են տաք երկրներում, բայց ծովի վրա։ Այդտեղ տաքացած օդը, ներքևից վերև բարձրանալով, շատ անգամ չի հեռանում, չի ցրւում, այլ մնում է կանգնած, իսկ որոշ ժամանակից յետոյ սարսափելի արագութեամբ վար է իջնում. ներքևից էլ նոյն արագութեամբ վերև է բարձրանում ներքևի օդը։ Այդ ժամանակ ծովը կատաղի կերպով կարծես եռում է, իբրև մի մեծ կաթսայ։ Փրփուրի դէզերը ծածկում են ջրի մակերևոյթը, եղանակը մռայլւում է և մի ահեղ կերպարանք ընդունում։ Երբեմն անդուլ քամին բարձրացնում է ջրախառն փրփուրը, վերևից էլ ամպերն են իջնում ձագարի նման և այսպիսով ամպ ու ջուր՝ մի ամբողջ սիւն դարձած, դոռում-գոչիւնով առաջ են շարժւում, ինչպէս որ պատկերացրած է հետևեալ նկարում։

Բարեբախտաբար գիտնականների կատարած փորձերի շնորհիւ մարդիկ կարող են նախազուշակել այդպիսի քամիների մօտենալը և զգուշութեան միջոցներ ձեռք առնել, օրինակ. փախչել, եթէ հնարաւոր է, նաւերի վրայից թնդանօթ արձակել և հատքուած ամպերը ցրուել, օդի հոսանքը փոխել և այլն։

Պատահում են դէպքեր, երբ այդ միջոցներն էլ չեն օգնում կամ ժամանակին չեն

Թռչուն, համրիճ ծակի ջուրը վերև է բարձրացրել սիեմանմամբ։

հանում և կատարած փոքրիկը անպին ծառաներ է հասցնում։

ԲՆԱԴԻՏՈՒԹԻՒՆ

Բնութեան անեղ երեւոյթները

Բազմաթիւ ու բազմազան են բնութեան երեւոյթները և նրանք ունին իրանց պատճառն ու հետևանքը։ Եթէ վերցնենք իւրաքանչիւրն առանձին և ուզենանք պարզել գիտութեան տուած բացատրութիւններով—այդ մեզ շատ հեռուն կտանէր. ուստի այս անգամ բաւականանանք միայն երկուսով։

Երկրաշարժ եւ հրաբուղխ—ահա այդ երկու անեղ երեւոյթները, որոնք այնքան ծանօթ են հասցնում մարդկութեանը, այնքան ահ ու սարսափ ազդում և նոյնիսկ մնալաշտ հաւատալիքների առիթ տալիս։ Ո՞ւմ յայտնի չէ 1900 թուի երկրաշարժը, որ քարուքանդ արեց Ախալքալաքի ամբողջ գաւառը։ Ո՞վ չի յիշում 1902 թ. երկրաշարժը, որ կատարեալ աւերակ դարձրեց Շամախի քաղաքն իր շրջականերով։ Եւ այդպէս անվերջ օրինակներ կարելի է յիշել նաև օտար երկիրներից, հեռաւոր անցեալից։

Երկրաշարժերի թիւը։—Գիտնականների մէկը պնդում է, որ նրա հաշուով 7 տարուայ մէջ, այսինքն 1850 թուից մինչև 1857 թիւը՝ ամբողջ հողագնդի վրա 4620 անգամ երկրաշարժ է եղել, կամ ուրիշ խօսքով ասած՝

տարեկան միջին թուով 4620;7=660 երկրաշարժ։ Մի ուրիշն ասում է, որ հավիտ թէ մի օր կամ մի ժամ լինի, որ հողագունդ վրա՝ մի որևիցե տեղ երկրաշարժ չպատահի։ Վերջապէս երրորդը համոզուած է, որ երկիրը ոչ մի բոպէ հանդարտ չի մնում, այլ շարունակ տատանւում է, բայց մենք իսկապէս նկատում ենք միայն շատ ուժեղ հարուածները։ Մեզ յայտնի է, որ մեր երկրի $^2/_3$ մասը ծածկուած է ջրով և միայն $^1/_3$ մասը կազմում է ցամաքը։ Մենք սովորել ենք հաշուի առնել միայն ցամաքը տատանող երկրաշարժները, առանց հաշուելու ջրի վրա կատարուածները։ Ուրեմն, 7 տարուայ ընթացքում ոչ թէ 4620 անգամ, այլ աւելի երկրաշարժ պէտք է պատահած լինի։

Ի՞նչեղ են պատճառները։—Եթէ դուք հարցնէք, թէ ամենից շատ ո՞ր երկրներումն են լինում երկրաշարժները, կպատասխանենք.— երկրաշարժն աւելի շատ է պատահում լեռնոտ երկրներում, քան այն տեղերում, որտեղ գրեթէ բարձրավանդակներ չկան և գետինը ներկայացնում է հարթավայր, ինչպէս օրինակ Ռուսաստանում։

Ե՞րբ։—Գիտնականները իմացել են, որ երկրաշարժները պատահում են աւելի յաճախ ձմեռը՝ քան ամառը, գիշերը՝ քան ցերեկը։ Նկատուած է նամանաւանդ, որ անձրևային եղանակին, փոթորիկների և կատաղի քամիների ժամանակ, երկրաշարժը աւելի յաճախ է պատահում։ Գուցէ այս բոլորը շատ էլ հետաքրքիր է, բայց առ այժմ պատճառը յայտնի չէ։

Հրաբուղխ։—Հրաբուղխ կոչւում են այն լեռները, որոնք երբեմն իրանց միջից դուրս են տալիս քուլայ-քուլայ ծուխ և կրակ, այսինքն հուր են բղխում։ Եթէ ցանկանում էք իմանալ, թէ այդ ինչ ծուխ ու կրակ է, լսեցէք հետևեալ պատմութիւնը։

Մի երկրական ծովում, Սիցիլիա կղզու վրա մի հրաբուղխ լեռ կայ՝ Էտնա անունով։

Ամառնային տաք երեկոյ էր. լուսինը լուսաւորում էր կղզու վրա գտնուած քաղաքներից մէկի շրջակայքը և բնակիչների աչքերի առաջ պարզ կերպով սկսեց պատկերանալ Էտնա լերան մռայլ, ալեզարդ կերպարանքը։ Նրա ձիւնապատ գագաթը պսպղում էր լուսնի լուսով և գիզեցկուհի Էտնան սարսափ չէր ազդում դէպի ինքը, այլ սէր։

Բայց յանկարծ գետնի տակ լսուեց մի խուլ գոռոց, որի վրա առաջին անգամ ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց։ Մի քանի րոպէից յետոյ՝ գոռոցը աւելի սաստկացաւ և գետնի տակ մի բան որոտաց. կարծես ապակեայ և չախճապակեայ հազարաւոր ամաններ ընկել էին անդունդը և այնտեղ չարչ ու փշուր դարձել։ Գետինը շարժուեց, նրա տակից դարձեալ լսուեցին որոտմունքներ, դղրդաց խլացնող ձայնիւնը։ Էտնան դողդողաց հիմքից և նրա ձիւնի նման սպիտակ, անադին գագաթը պոկուեցաւ սարից, մռնչելով սլացաւ օդի մէջ, կտոր-կտոր եղաւ և թափուեց գետնին։ Տեղի ունեցաւ երկրորդ հարուածը, ապա երրորդը

Էսկայի հեգուդները—(Սիբիրիա թղթե վրա):

և ժայթքումը պատկերացաւ իր ամբողջ զեղեցկութեամբ։ Մահացու սարսափը պատեց

բոլորին։ Գոլորշու ամբողջ քուլաներ ահագին սիւնի ձեւով բարձրանում էին Էսկայի պատռուած գագաթի վերևը։ Ներքև լանջի վրա երևում էր մի լայն, սև շերտ։ Դա ճեղքուածք էր, որ լերան վրա գոյացել էր սաստիկ երկրաշարժի և գոլորշիների ճնշումից, որոնք ճանապարհ էին որոնում դուրս գալու գետնի հաստ կեղևի տակից. գոլորշիների հետ՝ հրաբուղխի գագաթի վրա գտնուած փոսից սկսեցին դուրս ալծնել գանագան գազեր։ Այդ գազերը ժայթքման մէջտեղ սաստիկ աւերումներ են անում, որոնց հետ միասին սովորաբար լսում է սարսափելի գոռոց, մռնչիւն, ճայթիւն և շչշոց։ Հրաբուղխի գագաթի խորշը, առհասարակ, հասնում է մինչև նրա հիմքը և տակ գնում խորը գետնի մէջ։ Այդ խորշը ձագարի ձև ունի և նրա պատերն էս կազմուած են մեկնոյն նիւթերից, որոնցից բաղկացած է և ինքը լեռը, և որոնք սովորաբար անուանւում են հանիային նիւթեր։

Գոլորշիներից և գազերից յետոյ՝ Էսկայի վերևը մի ահագին ամպ երևաց, որ սկսեց տարածուել լերան գագաթի վրա։ Հրաբուղխի պատերը, որոնք բաղկացած էին ամուր քարից, ճայթելով կոտրւում էին և վերև էին բարձրանում օդի մէջ։ Քարերի խոշոր կտորները սաստիկ մանրւում էին, բարձրանում լերան վերևը և այնտեղից կարկտի նման գետին թափւում։ Դեռ այդ բաւական չէ։ Այդ քարերն ուղղակի փշրւում, փոշի էին գառնում և հէնց այդ փոշին նման էր թանձր և մթին

ամպի, որ ծածկում էր լույսը, առաջացնում էր սարսափելի մառախուղ և ուժգին մեծ երկիւղ ու սարսափ ազդում մարդկանց։ Միևնոյն միջոցին գոլորշիների սիւնը հետզհետէ քարձրանում էր։ Կարծես մի մռայլ ոգի լերան հիմքի տակ թաղնուած՝ անհաւատալի ուժով նրան դէպի վեր էր մղում։ Գիշերը մի տեսակ կարմրութիւն պատեց ամբողջ երկնակամարին։ Հրաբուղխի վրա մի ահագին հրեղէն սիւն էր կանգնած, որի ծայրը կարծես երկնքին էր հասնում։ Դա՝ հէնց այն «վրաձն» էր, որի մասին նոյնպէս միշտ յիշում են՝ հրաբուղխի ժայթքումը նկարագրելիս։

Բայց բանը նրանումն է, որ դա բոլորովին կրակ չէ, քանի որ իսկապէս ոչինչ չի վառւում լերան տակ, քանի որ այդտեղ ոչինչ լոց չկայ և ոչ ուժուր թէ կարող է լինել։ Ուրեմն դա ինչ է։ Դա «լաւան» է, որ եռում էր հրաբուղխի մէջ և դրա տեսքը արտայայտելով լերան գագաթին եղած գոլորշիների մէջ՝ երևում էր հրեղէն սիւնի ձևով։ Բայց ինչ բան է լաւան։ Դա դանազան քարերի և հանքային նիւթերի հալուած զանգուածն է, որ իր արտաքին տեսքով շատ նման է տաքացած հալած երկաթին։ Նոյն զօրութիւնը, որ գետնի խորքում տաքացնում է ջուրը և գոլորշի է դարձնում նրան, ուժգին խորը գետնի մէջ հալեցնում է բոլոր հողախառն և քարոտ նիւթերը և հալեցրած մետաղի նման է դարձնում նրանց։

Հրաբուղխի բերանից երբեմն դուրս էին

թռչում լաւայի խոշոր կտորներ, որոնք օդի մէջ բոլորակ ձև ընդունելով՝ թափւում էին կամ նոյն իսկ հրաբուղխի մէջ և կամ այդ լերան լանջերին։ Հալած քարից կազմուած այդ գնդակները՝ կոչւում են հրաբղխային ռումբեր։ Երբեմն նրանք ունենում էին ահագին մեծութիւն, կշռում էին ամբողջ պուդեր և մինչև անգամ տասնեակ պուդեր։ Բայց լաւան միշտ այդպիսի խոշոր կտորներով չէր դուրս թռչում էնտայի բերանից, այլ մեծ մասամբ օդի մէջ փշրուելով, փոշի էր դառնում, որը անուանւում է հրաբղխային մոխիր։

Եղել են դէպքեր, երբ քամին քշել է հրաբղխային մոխիրը մի քանի հարիւր վերստ հեռու և քաղաքն վերստ տարածութեամբ, երկու սաժէն հաստ շերտով ծածկել է պաշտերը։

Ռումբերի, քարակոյտերի, հրաբղխային փոշու և մոխրի ժայթքումը զգալի կերպով դադարելուց յետոյ՝ լաւան բարձրացաւ մինչև հրաբուղխի բերանը, դուրս եկաւ նրա ափերից և կրակահեղձութիւնը լայն շերտով վայր հոսեց էնտայի լանջերի վրայով։ Այդ ահագին հրեղէն գետը ոտոդեց 14 քաղաք և գիւղ, որոնցից մի քանիսի բնակիչների թիւը 34,000-ից աւելի էր։ Ահա այդքան մեծ էին էնտայի պատճառած վնասները։ Գոկաս աւերմուծ չէն պատճառել Վեզուվը, Արարատը և միւս հրաբուղխները։ Բնութեան այդ սարսափելի ոյժը շատ ու շատ անգամ հողին է հաւասարեցրել



ամբողջ գիւղեր ու քաղաքներ և դոհ է դարձրել բազմաթիւ մարդկանց։Այդքան սարսափելի է բնութեան այդ ահեղ ոյժը։

Վեզուվ հրաբուղխի ժայթքումը 1834 թ.

Հրաբուղխների թիւն ու տեսակները։ *Գուցէ կհարցնէք, թէ արդեօք շա՞տ հրաբուղխներ կան աշխարհիս երեսին, արդեօք յաճախ են լսւում վիժում և թէ սովորաբար որքա՞ն են տեւում այդ ժայթքումները—Բոլոր հրաբուղխ-*



ԱՐԱՐԱՏ (Նկարագրութիւն)

նեբի թիւը աշխարհիս երեսին հաշւում են 709, միայն թէ նրանք բոլորն էլ միանման չեն. նրանցից ոմանք, այժմս էլ շարունակում են վիժել, ոմանք էլ վաղուց մարել են։ Այդ պատճառով առաջիններին անուանում են գուծող հրաբուղխներ, իսկ երկրորդներին՝ մարած հրաբուղխներ։ Գործող հրաբուղխները նոյնպէս երկու տեսակի են բաժանւում։ Դրանց թիւը հասնում է 321-ի։ Նրանցից ոմանք խակապէս վիժում են, այսինքն բացի գոլորշիներից ժայթքում են և՛ լաւայ, իսկ ոմանք ներկայումս միայն «ծխում են» այսինքն գոլորշի ու գազ են արձակում, թէև կասկած չկայ, որ երբեմն—գուցէ շատ և շատ առաջ նրանք վիժում էին և՛ լաւայ, և՛ ռումբեր և՛ մոխիր։

Վեզուվն ու Սարօմբօլին այժմս էլ կարող են գործող հրաբուղխներ համարուել, բայց օրինակ մեր Արարատն ու Արագածը այժմ բոլորովին հանդարտ են և գժուար թէ երբ և իցէ սկսեն գործել։ Սակայն մի ժամանակ այդ գեղեցիկ լեռները ևս, մանաւանդ Արարատը, նմանապէս կատաղաբար ժայթքում էին։ Դա շատ և շատ վաղ էր։ Ասում են, որ Քրիստոսի 341 թուին, այսինքն սրանից 1563 տարի առաջ, Հայաստանի բոլոր լեռները, որոնց թուին պատկանում են և Արարատն ու Արագածը, տարատեսակ երկրաշարժից թնդացին և այդ երկրաշարժը աչնչացրեց շատ ժողովուրդ, և լեռներից «ծուխ» ու «կրակ» դուրս եկաւ։ Մենք այժմ լաւ գիտենք, թէ ինչ **ծուխ** ու **կրակ** է դա։

Երկիրը հարած լաւայ է։—Մեր երկիրը, ասում են գիտնականները, մի ամենախոշոր գունդ է և կոչւում է հողագունդ։ Այդ գունդը սրանից շատ և շատ դարեր առաջ բաղկացած էր ամբողջապէս միևնոյն կրակահեղուկութիւնից, ինչպէս և լաւան, մի խօսքով նա ամբողջապէս հալած լաւայ էր։ Ժամանակի ընթացքում նրա հրաշէկ մակերեսոյթը սկսեց սառչիլ—միաներդ բերէք այն կէտը, որ շատ շուտով ձևանում է լաւայի հոսանքի վրա—և նա ամբողջապէս ծածկուեցաւ պինդ կեղեւով։ Բացի դրանից քանի գունդը սառչում էր, աւելի և աւելի էր հաստանում նրա կեղեւը և հէնց դա է այն վիճակուղը, որի վրա այժմ բնակւում ենք մենք։ Բայց հողագնդի ներսում, նրա թանձր կեղեւի տակ, մինչև այժմ էլ կայ մի ամբողջ հրեղէն ծով, որ բաղկացած է հրաշէկ, հալած լաւայից։ Այդ լաւան գետնի խորքումն է գտնւում, շրջապատւած է կեղեւով, որի հաստութիւնը ամեն տեղ միատեսակ չէ. կան տեղեր, ուր այդ հաստութիւնը 105 վերստ է, և կան տեղեր՝ ուր 130 վերստ է։

Այժմ անշուշտ հասկանալի է, թէ որտեղից է առնում իր սկիզբը և ինչպէս է ձևանում այն լաւան, որ դուրս է ժայթքում հրաբուղխների ճեղքերից և բերաններից թէ ցամաքի վրա և թէ ջրի տակ։ Դա շատ վաղուցուանից գտնւում է գետնի տակ. սոսկերկրեայ ջերմութիւնը չէ թողնում նրան սառչելու և նա ինքը հրաշէկ գրութեամբ ճեպացած լինելով իր

կողմից պահպանում, գուցէ և աստիճանում է սորերկրեայ ջերմութիւնը։

Usorերկրեայ զոլորշին ու գազը։ Ձիշտ էք արդեօք, թէ ինչ ահագին քանակութեամբ գոլորշի ու գազ են արտաշնչում հրաբուղխները ժայթքման միջոցին։ Հետաքրքրական է իմանալ, այդ ինչ գազեր են և որտեղից են առաջանում—ի հարկէ, ծովերից ու ովկիանոսներից։ Բոլոր հրաբուղխները գտնուում են կամ կղզիների վրա և կամ ծովերի ու ովկիանոսների ափերին, այսինքն ծովային ջրից շատ մօտիկ։ Ուրեմն, ոչինչ այնքան հեշտ չէ, որքան այդ ջրի թափանցումը ափերի և ծովային յատակի պատառուածքների միջով դէպի հրաբուղխի պատուանդանը։ Ի՞նչ է անում ծովային ջուրը հրաբուղխ լերան ներսում։ Շատ բան. նա գոլորշի ու գազ դառնալով՝ կազմում է այն ոյժը, որ ժայթքումի ժամանակ մահացու սարսափ է ղգում մարդկանց վրա։ Տեսել էք, ինչպէս է վեր-վեր թռչում ինքնաեռի վրա դրուած թէյանոցի խուփը, երբ չահիլ տանտիկինը խօսքի բռնուելով հիւրերի հետ, մոռանում է իր ժամանակին վայրէ բերել նրան։ Ինչից է առաջանում դա։—Նրանից, որ թէյը եփ էր եկել և գոյացած գոլորշինները՝ ուզենալով դուրս պրծնել, ուժով բարձրացնում են թէյանոցի խուփը։ Դրէք արևի տակ խցանով լաւ փակուած մի շիշ լիմոնադ և շիշը կճայթի, կամ թէ խցանը ուժով կթռչի նրա բերանից։ Լցրէք փամփուշտը օդով և դրէք վառած վառարանի մէջ և նա կճայթի։ Վերցրէք մի մեծ, հաստ ափերով կաթսայ, կիսով չափ մէջը ջուր ածեցէք, փակեցէք նրան այնպէս, որ գոլորշին բոլորովին չկարողանայ միջից դուրս գալ և դրէք թէյ կրակի վրա։ Գուցէ նա էլ չդիմանայ և ճայթի այն օդով լցրած փամփուշտի նման, որ գուք դրել էիք վառարանի մէջ։

Դժուար չէ երևակայել, թէ որքան ահագին ոյժ պէտք է ունենան և որքան ջնամներ կարող են տալ այն գոլորշիներն ու գազերը, որոնք ահագին սիւնի նման դուրս են պրծնում հրաբուղխների բերանից։

Հրաբուղխի եւ երկրաշարժի պատճառները։—Ծովի ջուրը ճեղքուածքների միջից մտնում է խորը՝ հրաբուղխների տակ և հաղորդակցւում է այդտեղ գտնուած կրակահեղուկի լաւայի հետ։ Այդ ջուրն արագութեամբ տաքանում է և արտադրում ահագին քանակութեամբ գոլորշի և գազ։ Դրանք աստիճանաբար ճնշում են հրաբուղխին մի քանի անգամ և գտնի տակ թնդիւն է առաջանում, որից յետոյ հրաբուղխն այլևս չի դիմանում այդ ճնշմանը. նրա գագաթը պոկւում է, գոլորշիներն ու գազերը իրանց համար ճանապարհ են բաց անում, իսկ լերան լանջերի վրա գոյանում են ահագին ճեղքեր։ Այժմ նրանց դուրս գալու ճանապարհը բացուած է, կապանքները խորտակուած են և գոլորշիներն ու գազերը սկսում են իրանց աւերումները։ Նրանք սուլելով ու աղմուկով դուրս են պրծնում և իրանց ճանապարհի վրա քանդում

են հրաբուղխի խորշի պատերը. գոլորշինների ու գազերի զօրութեամբ քարի ահագին կտորներ պոկուում են հրաբուղխի խորշից և փշրի են դառնում։ Լաւագի ամբողջ կտորներ և ամենամանր ցայտուածքներ տանում են նրանք վերև, շատ վերև և դառնում են հրաբղխային ռումբեր և մոխիր. բոլոր լաւան յագենում է գոլորշիով ու գազով, որոնք սաստկապէս ճնշում են նրան, բարձրացնում են մինչև հրաբուղխի ափերը և երբ նա թափւում է ափերից, ներքև են քշում նրան՝ լերան լանջերի վրայով։

Եթէ դուք լաւ հասկացաք, թէ ինչից են առաջանում հրաբուղխների վիժումները, այն ժամանակ ես կարծում եմ, որ հեշտ կհասկանաք երկրաշարժի պատճառները։

Դուք գիտէք, որ հողագնդի ներսում կայ կրակահեղուկի լաւայի մի ամբողջ ծով։ Եթէ դա ծով է, ուրեմն, նա էլ ուրիշ ծովերի նման կարող է փոթորիկներ ու ալեկոծութիւններ ունենալ։

Եւ ահա այդ փոթորիկների ու ալեկոծութիւնների ժամանակ այդ հրեղէն ալիքները դիպչում են երկրի կեղևին և սաստիկ ցնցում նրան։

Ահա ձեզ երկրաշարժի մի ուրիշ պատճառ էլ։ Հրաբղխային վիժումների ժամանակ՝ գոլորշիները ու գազերը, որոնք դուրս գալու ճանապարհ են որոնում, ուժով խփում են հրաբուղխի ստորոտին և տատանում են ոչ

միայն հրաբուղխը, այլ և նրանից հեռու գտնուած գետնի մեծ մասը։ Հէնց այդ տատանումն ահա՛ երկրաշարժն է։

Վ. Լուկիվիչ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Լաւ կովի նշանները

Լաւ կովերի մարմնի բոլոր մասերը պէտք է քնքոյշ ու փափուկ լինին, ինչպէս որ յատուկ է էգերին։

Առաջին անգամ նայելիս, պէտք է ուշադրութիւն դարձնենք, որ կովը մեծ և աչքի ընկնող պակասութիւն չունենայ։

Պարտաբուկն։—Եթէ մի կով վաղուց է ցամաքել՝ կաթից կարուել և մաել է ծնելու շրջանը—նա պէտք է պարարտ լինի. եթէ նիհար է—այդ վատ նշան է. այդ նշանակում է, թէ կովը կամ հիւանդ է կամ քիչ անուղղ է տառնում։

Կաթնատու կովի նիհար լինելը վատ նշան չէ, մանաւանդ եթէ նա ամեն օր առատ կաթն է տալիս. ընդհակառակը՝ դա մի լաւ նշան է, որ ցոյց է տալիս, թէ նրա բոլոր կերածը կաթ է դառնում։

Կաշին եւ մազը։—Կովին առաջին անգամ մի լաւ նայելուց յետոյ, պէտք է մօտենալ և տեսնել թէ ինչպէս է նրա առողջութիւնը։

Լաւ կաթնատու և առողջ կովի մազը հարթ, ողորկ և քնքոյշ է լինում և ոչ թէ կոշտ ու վեր ցցուած. կաշին էլ նուրբ և քնքոյշ է լինում։ Մի ցեղի կովերից ամենալաւ կաթնատուն նա է, որի կաշին ամենից նուրբ է ու քնքոյշ։

Տարիքը։—Կովի տարիքը կարելի է որոշել առաջներից և եղջիւրներից։ Եթէ մի քիչ լաւ նայենք կովի եղջիւրներին, կտեսնենք, որ նրանց արմատի մօտերքը, ներքի մասի վրա, խորդուբորդ փորուածքներ կան, որոնք իրար վրա շարած օղակների նման են։ Առաջին օղակը կազմւում է կովի երեք տարեկան հասակում, երկրորդը՝ չորս և երրորդը՝ հինգ տարեկան ժամանակ. դրանից յետոյ տարին մի օղակ է աւելանում, այնպէս որ կովի տարիքը կարող ենք իմանալ՝ եթէ օղակները հաշուենք և տասից թուին աւելացնենք երկու։

Բնութիւնը (խասիաթը)։—Կովի մարմինը շօշափելուց կարելի է իմանալ նրա բնութիւնը։

Լաւ կովերը նրանք են, որոնք քաղցր և հանդարտ բնութիւն ունեն և սիրով են թոյլ տալիս, որ մարդիկ իրանց մօտենան ու գուրգուրեն։

Բոլորովին հասկանալի է, որ շուտ գրգռւող կովերի կաթը առատ չի լինում. նրանց վատ բնութիւնը կարելի է լաւ խնամքներով ուղղել։

Ականջներ։—Կովի ականջները պէտք է լայն լինեն և խիտ մազով ծածկուած. մեծ նշանակութիւն ունի, երբ ականջի ներսի կողմը բաւական ծածկուած է լինում մի տեսակ ճարպոտ նիւթով, որին ասում են ականջաղ կամ ամոկ։ Որքան շատ լինի այդ ճարպը, այնքան էլ կովի տուած կաթը պարարտ ու կարագոտ կլինի։

Առատ կարագ տուող կովերը մի ուրիշ նշան էլ են ունենում, այդ նրանց մորթի գոյնն է։ Այն կենդանիները, որոնց կաթի մէջ շատ կարագ կայ—մուգ դեղին գոյնի մորթ են ունենում։

Ուսեր։—Մսաթափ ուսերով կովը չաղանալու ձգտում չի ունենում, այլ աւելի նիհարում է. այդ նշանակում է, թէ ստացած սննդանիւթը նրա մարմնի մէջ ճարպ չի դանւում, այլ կաթ. ուրեմն ուսերի այդպէս լինելը անուղղակի կերպով ցոյց է տալիս, թէ կովը լաւ կաթնատու է։

Բայց այս մի բացարձակ բան չէ. անպատճառ հարկաւոր չէ, որ կովը նիհար ուսեր ունենայ՝ լաւ կաթնատու լինելու համար։

Ետևծոր զարգացած ու խոշոր պիտի լինի։

Փոր։—Կուրծքի նման փորն էլ պէտք է խոշոր լինի, որ սննդական գործարանները լաւ զարգանալ կարողանան և կենդանին ախորժակով ուտի, որ շատ կարևոր է լաւ կովերի համար։

Ողնաշարը կազմուած է իրար շատ մօտիկ գտնուող հատիկներից, որոնց ասում են ողներ։ Երկու ողների արանքում եղած պա-

բաղ տեղերին կամ ակօսներին ասում են կաթի վերին դուներ կամ ապրեստներ։

Այս կաթի դռները թէև ամեն ցեղի կով չունի, բայց եթէ պատահեց, որ կովը ունեցաւ—լաւ նշան պէտք է համարել։

Սոճը։—Անպայման հարկաւոր է, որ կովի կոնքը լայն լինի և ընդարձակ, որ ազդրերը իրարից հեռու լինեն և նրանց մէջը մի ընդարձակ բաց տեղ մնայ։

Ծծերն իրանց խոզովակներով այդ տեղն են բռնում, դրա համար էլ, որքան տեղն ընդարձակ լինի, այնքան էլ ծծերը լաւ կկազմուեն, լաւ կդարգանան։

Պոչը։—Երկար պոչը լաւ նշան է համարւում։

Ծծերը։—Յայտնի է, որ կաթը ծծերումն է պատրաստւում, դրա համար էլ շատ հասկանալի է, թէ ինչու այն կաթնատուն են լաւ համարում, որի ծծերը մեծ ու զարգացած են լինում։

Շատ անգամ թէև ծիծը մեծ է երևում, բայց և այնպէս կովը քիչ կաթ է տալիս. պատճառն այն է, որ այդ տեսակ ծծերի մէջ դեղձերի վրա զարգացած են իւղային մասեր, որոնք թէև ծծերը մեծ են ցոյց տալիս, բայց արգելում են շատ կաթ պատրաստելուն. այդ տեսակ ծծերին ասում են տաս ծծեր։

Շատ հեշտ է մատ ծծերը ճանաչելը. նրանց ծաւալը չի փոքրանում կթելուց յետոյ. փոխանակ սեղմելիս սպունգի նման հուլ գալու, նրանք թուում են պինդ և ուռած։

Ծծերի երակները։—Ծծերից դուրս եկող երակների զարգացումը մեծ նշանակութիւն ունի։

Որքան այդ երակները լայն լինեն, այնքան էլ նրանք շատ գործ կկատարեն, այնքան էլ կովի կաթը առատ կլինի։

Երակների քննութիւնը բոլոր նշաններից աւելի կարևոր է, որովհետև նրանք հաստատ և ապահով նշաններ են։

Կաթնանիւթ։—Կովը հարկաւոր է դիտել քամակի կողմից, դրա համար պէտք է պոչը բարձրացնել, որ յետակողմի բոլոր մասերը լաւ երևան։

Ուշադիր դիտելով այս մասերը, մենք տեսնում ենք, որ սրանց մազերը միշտ միևնոյն ուղղութեամբ չեն գնում։

Ծածից վերև գնացող մազերը աւել կամ պակաս տարածւում են ծծի յետակողմի մասերի և միջնապի վրա. այստեղ նրանք կազմում են զանազան ձևի պատկերներ, որոնց ասում են կարնաւիճ։

Ընդհանրապէս ամենից յարգուած են այն կաթնանիշները, որոնք տարածւում են ծծի ներքևի մասերի վրա։

Դ. Մհծատուրեան

ԻՆՉՈՎ ՊԷՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԿՈՎԵՐԻՆ, ՈՐ-ՊԷՍԶԻ ԼԱՒ ԿԱԹ ՍՏԱՑՈՒԻ

Որքան շատ մանդարար կեր տրուի անասուններին, այնքան աւելի շատ կաթ կստացուի և աւելի թանձր կլինի. ընդհակառակը, որքան կերը վատ լինի, այնքան աւելի պակաս քանակութեամբ և ջրալի, թոյլ կաթ կըստացուի։ Անասուններին ամառը խոտով կերակրելիս՝ պէտք է խոտի ընտրութիւն անել, որովհետև գիւղատնտեսութեան մէջ սա մեծ նշանակութիւն ունի։ Նկատուած է, որ ամենալաւ տեսակի կաթ կստացուի այն ժամանակ, երբ անասունները արածել են չոր արօտներում, ուր կան թիթեռնաձև և քաղցր հասակաւոր ու հոտաւէտ խոտեր։ Կաթի յատկութեան վրա նոյնպիսի շատ լաւ ներգործութիւն են ունենում այնպիսի խոտերը, որոնք ժողովուած են լինում բարձրավանդակ տեղերից։ Ցածր հարթութիւնների վրա բուսած մի քանի տեսակ խոտերը, ինչպէս են ազռաւածաղիկները (осока), եղեգները, կատուագի (хвощи) կոչուած բոյսերը, ընձախոտերը (лютики), ճահճային խոտերը (калужницы), վայրի եղինճները (сердечникъ) և ուրիշները կաթի վրա վնասակար ներգործութիւն են ունենում։ Անասուններին այդպիսի

բոյսերից բաղկացած խոտերից կերակրելիս նրանցից ստացուած կաթից չի կարելի ոչ համով կարագ և ոչ պանիր պատրաստել։ Կաթի համար աւելի շատ վնասակար են համարւում օշինդրը (полынь), վայրի սոխը և ապիկոց խոտը (сурѣпка)։ Արմատապտուղներից ճակնդեղը և գազարը կաթի յատկութեան վրա խիստ լաւ ներգործութիւն են ունենում։ Կարտօֆիլը, մանաւանդ, եթէ գործ է ածուած մեծ քանակութեամբ և հում, նմանապէս և կովակաղամբը (брюква), շաղգամը փչացնում են կաթը և իւղին մի տեսակ անհաճոյ համ են տալիս։ Կաթի յատկութեան վրա վատ ազդեցութիւն է ունենում նմանապէս և անասուններին մեծ քանակութեամբ կաղամբով կերակրելը։ Պէտք է միշտ մաքուր և հոսող ջուր խմացնել։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Երկրագործը ինչ յատկութիւններ պիտի ունենայ

Երբեմն սխալմամբ կկարծէին թէ՝ առանց երկրագործական ուսման և կրթութեան կարելի է լաւ երկրագործ ըլլալ։

Անշուշտ երկիրը մշակողը պէտք է կարճիճ և լաւ բանւոր ըլլայ, բայց պէտք է իր կատարած գործողութիւններուն վրա ալ աղէկ

դատելու և տրամաբանելու կարող ըլլայ։ Եթէ ոչ՝ սովորամոլներու հինգերուն նման՝ պիտի աշխատի, առանց գիտնալու և հասկանալու— ըրածն ու թողածը։

Երկրագործութեան ամենէն կարևոր հարցն է ջրոյի ևնուցանումը, որու մասին չսորվող երկրագործները տեղեկութիւն ընու չունին. բոլոր անոնք, որ ճշմարիտ և յաւուրմէ ծանօթութիւններ չունին այս հարցին վրա, կմշակեն բոյսերը առանց ճշմարտապէս գիտնալու ինչ ընելին, չեն գիտեր, թէ ի՞նչու ադբ և պարարտներ կզործածեն և այլն։ Ուրեմն լաւ երկրագործական կրթութիւնը անհրաժեշտ է երկրագործին համար։ Բայց երկրագործութիւնը քազմաթիւ ճիւղերու բաժնուած բարդ գիտութիւն մ'է և երկրագործ մը հազիւ թէ բոլոր ճիւղերուն վրա հմտութիւն ունենայ։ Բնական է, որ յաճախ շատ մը կարևոր խընդիրներ լուծելու համար պիտի շուարի և դժուարութեանց պիտի պատահի. այս պարագային՝ պէտք է դիմէ մասնագէտներու, խորհուրդ հարցնէ և միշտ կարդայ երկրագործական դրքեր ու թերթեր *)։

*)Ծանօթ. Պ. Մեծատուրեան հրատարակում է «Գութան» երկրագործական եւ գիւղատնտեսական հանդէսը, որը նպաստում է մեր երկրագործ հասարակութեան առաւելագիտական զարգացմանը։

Պ. Մեծատուրեան ձեռնարկել է նաեւ գիւղատնտեսական եւ գիտական մի մատենադարանի հրատարակութեան, որը պիտի բաղկանայ բազմաթիւ հատորներից եւ պիտի լրացնէ մեր գրականութեան ամենամեծ պակասներից մէկը։ Թէ «Գութանը»եւ թէ մատենադարանի հատորները գնել ուզողներին

Դործունէութիւն։ Երկրագործական աշխատութիւնները գնդագան և շատ տեսակ են. պէտք է ճշտութեամբ կատարուին, որոշ եղանակներու ու ժամանակներու մէջ. Եթէ միայն քանի մը օր ուշ ձեռն կատարուելիք գործերը՝ կրնան կարևոր կորուստներու պատճառ դառնալ։

Յաճախ անբարեխառնութիւնները, օրի վատութիւնները կխանգարեն երկրագործի ծրագիրները, այդ պատճառով պէտք է շատ զգուշանալ ըլլայ, օրը օրին կատարէ աշխատութիւնները և այսօրուայ ընելիք գործը վաղուան չի ձգէ։

Կարգ—կանոն։ Երբեմն ծրագիրներ կշինէ երկրագործը, մեծ և կարևոր աշխատութիւններու կուզէ ձեռնարկել, որոնք երկար ժամանակի կկարօտին և այլն։ Բոլոր այս գործողութեանց միջոցին մշակը պարտի կարգով ու կանոնով գործել։ Կարգ ու կանոնը լաւ հոգագործի ամենագլխաւոր յատկութիւններէն մէկն է։ Անոնկա պէտք է իւր բոլոր ծրագիրը կարգապահութեամբ պատրաստէ և ըլլա միշտ կարգապահ իւր բոլոր աշխատութեանց, գնումներու, վաճառմանց և ծախսերու ժամանակ։

Խնայողութեան ակր։ Հողագործը այնպէս պէտք է կարգադրէ իւր ծախսերը, որ ըլլան հարատութեանը համեմատ։ Մեծ շահ չի ըներ անիկա, բայց մեծ ծախսեր ալ ընե-

«Լոյսի» խմբագրութիւնը կարող է տալ ամեն տեսակ պիտուրիւններ։ Խմբ.

լիք տեղեր չունի. իր ցորենը ալիւրի կվերածէ, իւր պարտիզէն կքաղէ պտուղներ ու բանջարեղէններ, հանուցէն կսանայ ձուկը և վաճիկներ, տաւարէն ալ միս ու կաթ։ Երկրագործը եթէ խնայողութեան սէր չունենայ, իր ըրած շահը շուտով ալ կսպառի։

Խնայողական սնդուկները մեծ ծառայութիւն կմատուցանեն երկրագործին, ուր կրնայ իւր դրածն ու օգուտը առանալ, քիչ և ոչ մեծ, բայց ապահով։

Գնել եւ վաճառել գիտցայ։ Շատ պարագաներու մէջ երկրագործը միաժամանակ առևտրական է, կգնէ կենդանիներ, սերմեր, երկրագործական գործիքներ, մեքենայներ և այլն. կվաճառէ հատիկներ, կենդանիներ, դանազան բերքեր և այլն։ Պէտք է ուրեմն, որ անիկա ունենայ առևտրականի բոլոր յատկութիւնները, այսինքն պէտք է յառ գնելու եւ յառ վաճառելու կարող ըլլայ։

Խոհեմութիւն։ — Հողագործը անխոհեմ ցանկութիւն ունենալու չէ մեծ ծախքով իր հողը բարեկարգել կամ իր ագարակին մէջ նորութիւններ մտցնել։

Պէտք է **cաs խոհեմաբեամբ** հաշուէ և որևէ բարենորոգումն չի կատարէ իր հողերուն վրայ, եթէ չպղողութեանը մօտաւորապէս վստահ և հաստատ համոզմունք գոյացուցած չըլլայ։

Եւրոպական խոհեմ երկրագործները կապահովին իրենց անգործակալին շենքերը, բերքերը, ամբարները՝ կրակի դէմ, ցանկերը՝ կարկուտի, այնպէս որ չնչին ապահովագինով մը բոլոր արկածներու դէմ ապահովուած կըլլայ։

Գարեգին Մեծատուրեան

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

1 **Մեղրաբեր բոյսեր։** Մեղրաբեր են կոչուում այն բոյսերը, որոնցից մեղուները կարողանում են հաւաքել մեղր պատրաստելու համար նեկտար, ծաղկափոշի, ակնամոմ։ Այդպիսի բոյսեր բնութեան մէջ շատ կան, բայց մեղրաբերութեան տեսակէտից տարբեր են լինում. մի քանի բոյսերից մեղուները հաւաքում են վերոյիշեալ 3 նիւթերից ևս, միւսներից երկուսը, իսկ ոմանցից միայն մէկը։ Բոյսերի մեղրաբերութիւնը խիստ շատ պատճառներից կախումն ունի, բայց գլխաւորապէս եղանակից և տեղի աշխարհագրական դիրքից։ Կարելի է ցոյց տալ մեծ քանակութեամբ բոյսեր, որոնցից ստացուում է շատ չնչին բերք։

Մեղուները մեղմում գարնանը առատ պաշար են հաւաքում պղտատու ծառերից և դաշտային խոտերի ծաղիկներից։ Ամառը լաւ պաշար են տալիս բանջարանոցի բոյսերը և լեռներում արքայամօրին և այլն։ Աշնանը մե-

դուները պաշար են հաւաքում դաշտային ծաղիկներից և մասամբ էլ բանջարանոցի բոյսերից։

Պաղատու ծառերից ամենից աւելի մեղրաբեր է ճանաչուած խնձորենին, պակաս չէ նաև բալենին, դեղձին, տանձենին, ծիրանին և այլն։ Բանջարանոցի և պարտէզի բոյսերից մեղուներին մեղր պատրաստելու համար առատ պաշար են տալիս. սեխը, վարունգը, մեխակը, սալաթը, աստղածաղիկը, լոբին, սիսեռը, ոլոռը, մեղուախոտը, աւելուկը, բողկը (բ֊դիսկա), կաղամբը, կոտեմը, շուշանը, ծնեբեկը, սխտորը, զաֆրանը, շահպրակը, մաղտանոսը, դեղին սոեպղին, գազարը, խաղողը, ռադիան, կամ֊սամեթը և այլն։

Բացի սրանցից մեղուանոցի շրջակայքը հարուստ պէտք է լինի միամեայ և բազմամեայ մեղրաբեր բոյսերով, այդպիսիներիցն են միամեայ խոտերից՝ յափրուկը (резеда), ապիկոց խոտը (сурепица), եղնայեղուս, թուրինջ խոտը, խաչխաշը, հնդկացորենը (гречиха), եղիցուկի ծաղիկը և այլն։ Մեղրաբեր են ճանաչուած հետեւեալ բազմամեայ խոտերը. մեղրածուծը (донашка), մարտոյտ կամ ասպատը (медунка), կաթնածաղիկ կամ սատանի ջահրան (одуванчикъ), դարատիր կամ հաղի դեղը (материкъ или мать и мачеха), խուլ եղինջը (глухая крапива)։

Եթէ մեղուանոցի շրջակայքը լինչ֊լինչ պատճառներով աղքատ է լինում մեղրաբեր բոյսերով, այդպիսի դէպքում անհրաժեշտ է

մեղրաբեր բոյսեր ցանել։ Այդպիսի բոյսեր կարելի է ցանել շատ ազատ մնացած հողերում, արտերի միջհատներում, առուների ափերին և այլն։ Մեղրաբեր բոյսերի կարգին են պատկանում նաև այնպիսիները, որոնք ցանւում են իբրև կեր անասունների համար. այդպիսիներիցն են՝ առւույտի (люцерна) բոլոր տեսակները, կունգան և այլն։ Այդ բոյսերը, որոնք ցանւում են յատկապէս մեղուների համար, հետեւեալներն են. հովտաց շուշանը, եղնալեզուն, սարաթոռ կամ Երուսաղէմի անանուխը, ծովային բազուկը, շանլեզուն, վայրի ծնեբեկը, թուրինջ խոտ կամ պատրինջը, եղեսպակը, տարատերև կամ հացի դեղը և այլն։

II **Մեղր պահելու միջոց**։ Փոքր քանակութեամբ մեղր պահելու համար սովորաբար գործ են ածւում ապակեայ, կաւեայ և լաւ արծնապակեայ անօթներ։ Ինչպէս սրանք, նոյնպէս և ուրիշները չպէտք է ուռուցիկ լինեն, այլ գլանաձեւ, որպէսզի բիւրեղացման և առէլելու դէպքում ծաւալով մեծանալիս՝ ամանը չպատռի։ Մեղրով լի ամանները պէտք է ծածկել թաց մագաղաթով և դնել չոր տեղ։ Մեղր լաւ պահելու ամենագլխաւոր պայմանը չորութիւնն է։ Մեծ քանակութեամբ մեղր պահելու համար խորհուրդ ենք տալիս գործ ածել թեղուի փայտից (буковое дерево) շինած տակառներ։ Միայն տակառները պէտք է անպատճառ լաւ չորացրած փայտից շինած լինեն, որովհետեւ մեղրը փայտի ծակոտիկներից ամբողջ ջուրը դուրս քաշելու յատկութիւն ունի, որի պատճառով և

երկաթէ օդակները կարող են թուլանալ և մեղրը ծորել։ Ահա այս պատճառով, նախ քան փայտէ ամանների մէջ մեղր լցնելը, հարկաւոր է երկաթէ օդակները լաւ ամրացնել, հագցնել նրա վրա, որպէսզի պատերը պինդ գրկած և մահերը իրար հետ լաւ միացած լինեն։ Մեղր պահելու համար կարող են գործ ածուել նամանաւանդ և ապխտակ թխեղէից պատրաստած արկղիկները, որոնք շատ ծանր չլինելու պատճառով յարմար են տեղափոխութեան համար։

Գ. Ղազարեան

ԹՌՉՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Ճուտեր հանելը։ Ընտանի թռչուններից մեծ մասի մէջ ճուտեր հանելու ցանկութիւնը երեան է գալիս գարնանը մեծ քանակութեամբ ճուտեր ածելու շրջանից յետոյ։ Ճուտեր հանելու կամ ինչպէս ժողովուրդն ասում է թուխս նստեցնելու ցանկութիւն ունեցող հաւի փորը մերկանում է, վերայի փետուրներն ու ազուամազը թափւում են, սովորաբար ինքը թռչունն է դուրս քաշում և փռում բնի մէջ իւր փետուրները և ինքն էլ այնտեղ ծռում։ Թուխս նստող հաւը մի առանձին տեսակ կոկորդային ձայն է արձակում—կըրխտում է։ Հաւի մէջ թուխս նստելու ցանկութիւն զարթեցնելու համար,

դնում են մի քանի ձու բունկալ և նստեցնում են այնտեղ թուխսը։ լաւ կլինի եթէ այն թուխսանոցը տաք (դան, զառթ) հաւ լինի, որ ուրիշ անգամ ևս ճուտեր է հանել։ Յորհուրդ են տալիս նոյնպէս թռչուններին կանեփ և եղինջի սերմեր տալ։ Այս ցոյց տուած միջոցներով թուխս նստելու ցանկութիւնն աւելի յաջող է գարնում հնդուհաւերի մէջ։ Եթէ մեկը կամենում է որ թուխս ընկած հաւը թողնի իւր թուխս նստելու ցանկութիւնը, պէտք է օրեկան մէկ-երկու անգամ լողացնել ջրում և փակել աքաղաղի հետ միասին մի այնպիսի տեղ, ուր ոչ մի յարմարութիւն չլինի թուխս նստելու։ Երբ հաւերն անժամանակ ցանկութիւն են յայտնում թուխս նստելու, դորա առաջն առնելու համար, պէտք է փակել նորան մի մութ, սառն տեղ և թողնել այդտեղ 2—3 օր քաղցած։ Թուխս դնելու ձուերը պէտք է գրեթէ միաժամանակ ածած լինեն, որովհետև թարմերից աւելի շուտ ճուտեր դուրս կըգան և պէտք է պահել մի զով տեղ (1—12° Ր.), բայց ոչ լուսաւոր տեղ, և պաշտպանած պէտք է լինի փոշուց։ Թուխսի համար ամենալաւ ձուն համարւում է 1—2 շաբաթուայ ածած ձուերը, երբէք երկար շաժաքաւանից հէնց չլինի. որքան թարմ, այնքան լաւ։ Պէտք է ընտրել այնպիսի հաւի ձուերը, որոնք խոշոր և ծանր են, ունեն զարգացած կուրծք։ Այսպիսի ձուերից դուրս եկած ճուտերը աւելի կլինեն, մինչդեռ մեւս տեսակ ձուերից կառացուին թուլակազմ ճուտեր, որոնք շատ անգամ դժուար

կմեծանան։ Թռչնի տակ դնելիք ձուերը պէտք է կարծր, կեղևի վրա կոճիճներ չունեցող ձուեր լինեն։ Ցանկալի է, որ թռչունների տակ միայն բեղմնաւորուած ձուեր դրուեն, բայց դժուար է, որովհետև չէ կարելի այնպիսի ձուերը միւս տեսակ կամ հոտած ձուերից որոշել։ Ձուերից դժուար է որոշել նաև ապագայ ճուտերի սեռը։ Սովորաբար թռչնի տակ պէտք է դնել այնքան ձու, որքան կարող է նա տեղաւորել իր տակը։ Հաւի, բադի խայտահաւի (цесарка) տակը կարելի է իրենց ձուերից տեղաւորել մօտաւորապէս 15 հատ, սագի տակ իր սեռի կան ձուերից կարելի է դնել 10 հատ. իսկ հաւի տակ սագի ձուաններից միմիայն 4-ը կարելի է դնել։ Տարբեր թռչուններ տարբեր չափով են նստում իրանց ձուերի վրա։

Հաւը	21 օր	Փասիանը . . .	27 —
Հնդուհաւը . .	28 —	Սագը	29 —
Խայտահաւը . .	27 —	Սիրամարգը . .	30 —
Բադը	29 —	Աղաւնին . . .	18 —

Բայց այդ ժամանակամիջոցները քիչ կարող են փոխուել ձուերի քաշմութեան աստիճանի և թռչնի տակ եղած ժամանակ նոցա ունեցած տաքութեան համաչափութեան պատճառով։ Ձուերից ճուտեր դուրս գալու ժամանակամիջոցը կախուած չէ այն բանից, թէ թռչնը ինչ տեսակի թռչուն է. այսպէս օրինակ (հաւ է թէ հնդուհաւ, այդ միևնոյն է) հաւի ձուերի վրա 21 օր միայն կարելի է նստել, որից յետոյ դուրս կգան ճուտերը։ Ընտանի թռչուններից հնդուհաւը ճանաչուած է

իբրև ամենալաւ թռչնի հաւի ձուերից ճուտեր հանելու համար։ Թռչնի նստած ժամանակ ընից ոչ հեռու պէտք է լինի ջրի և կերակուրի պաշար, նաև մի փոքրիկ կոյտ չոր աւազ, որտեղ թռչունը կկարէ փորփրել։ Թռչնի նստած ժամանակ թռչունը պէտք է շատ հանգիստ լինի, այդ պատճառով բունը պէտք է տեղաւորել ընդհանուր թռչնաբնից հեռու և տգատ պէտք է լինի շոգերից և պայծառ արեգակից։ Եթէ թխսաբները (արկղները) թեև քիչ են, պէտք է բաց թողնել, բայց եթէ շատ են, պէտք է ծածկել և օրական երկու անգամ հանել կերակրելու համար՝ առաւօտ և երեկոյ, մէն մի անգամ 10 րոպէ։ Կերակրելիս մանաւանդ առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել հնդուհաւերի վրա, նմանապէս և թռչնի նստելու վերջին օրերում ընից դուրս գալուն, երբ սովորաբար սագի համար թռչնի այդպիսի կարճ ժամանակուայ բացակայութիւնները օգտակար է։ Թռչունին ընից վերցնելիս պէտք է նայել, որ ամեհի միջատներ չլինեն և թռչնի տակ կոտրուած կամ ջախջախուած ձուեր չլինեն։ Կարևոր դէպքում կեղտոտուած բունը պէտք է փոխարինել մի ուրիշով։ Եթէ պատահարար թռչնը սատկի, կարելի է ձուերը դնել մի ուրիշի տակ, միայն այդ փոխադրութիւնը շատ շուտ պէտք է կատարել, որովհետև նոյն իսկ առաջին երկու շաբաթում ձուերը միայն մի քանի ժամ հագիւ կարողանում են պահպանել իրանց կենսունակութիւնը, նոյն իսկ ոչ չոր բարեխառնութեան մէջ։ Եթէ

թուխսը երկար ժամանակ բացակայի, ձուերը կարող են անմիջապէս սառչել։

Արհեստական եղանակով ձուեր հանելը։ Վերջերս բելգիական մի գիւղատնտես առաջարկում է կենդանիների աղբի միջոցով արհեստական եղանակով ձուերից ճուտեր հանել։ Սա մի շատ հասարակ միջոց է և յիշեցնում է անտեսի ասելով խիստ գործնական։ Պէտք է վեր առնել սպիտակ թիթեղից ոչ շատ խորը մի աման։ Յատակն և կողքերը պէտք է ծածկել բրդե ցնցոտիներով և ձուերը համաչափ կերպով պէտք է դասաւորել այդ ամանի մէջ։ Այս բոլորից յետոյ ամանը պէտք է ծածկել թիթեղեայ կափարիչով կամ բարակ քարէ տախտակով, միայն ծածկոցի և ձուերի մէջ եղած տարածութիւնը մի սանտիմետրից պակաս չպէտք է լինի։ Վերջապէս հարկաւոր է աղբի մէջ փորել մի փոս կէս մետր խորութեամբ, որի մէջ պէտք է դնել ձուանեղով ամանը և յետոյ վերևից զգուշութեամբ ծածկել աղբով։ Աղբի տաքութեան ազդեցութեան տակ սաղմերը սկսում են զարգանալ։ Քանի-որ օրը պէտք է բաց անել ամանը և տեսնել, թէ արդեօք ձուերը կճեպը չեն ծակել։ Եթէ ոչ, մի օր սպասել և յետոյ նորից նայել, մինչև որ ճուտերը դուրս գան։ Արհեստական եղանակով ճուտեր հանելու համար կատարած փորձերը ցոյց են տալիս, որ այս եղանակը միւս բնական եղանակի հետ համեմատած առաւելութիւններ ունի։ Երբ ձուերը դնում են հաւի տակ, շատ անգամ ճուտերը

սատկում են փոփոխական բարեխառնութիւնից, երբ թուխսը երկար ժամանակ հեռանում է բնից, մինչդեռ աղբի մէջ միակերպ բարեխառնութիւն է տեղի ունենում։ Ճուտեր հանելու այս արհեստական եղանակը չպէտք է անուշադրութեան թողնել, պէտք է անպատճառ փորձեր կատարել, որովհետև անյաջողութեան դէպքում, բացի ձուերի փչանալուց, ուրիշ վնաս չի կարող տեղի ունենալ։ Եթէ այս եղանակով ճուտեր հանելը բարեյաջող հետևանքներ ունենայ, անկասկած շուտով մեծ ծաւալ կստանայ։

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՍՊԱՌՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ

Ո՞ւմ յայտնի չէ, թէ որքան դժուար է գոյութեան կռիւը, ով չգիտէ, թէ որքան ծանր է օրական ապրուստ ձեռք բերելը։ Եւ այդ դժուարութեան ու ծանրութեան լծի տակ անքում են հազարաւոր ու միլիօնաւոր մարդիկ, անքում է ժողովրդի մեծամասնութիւնը։ Ի՞նչ անել, ումից օգնութիւն խնդրել, որտեղ փրկութիւն գտնել։ Մեր ժամանակներում հրաշքներ չեն կատարուում, երկնքից մանանայ չի թափւում, ունևոր մարդիկ էլ չափազանց քարասիրտ են, չափազանց հասկան։ Ի՞նչ անել։

Ահա մի ծանր հարց, որի լուծումը կարելի է գտնել միայն համերաշխությամբ, փոխադարձ օգնությամբ։ Ի զուր չէ ասուած, թէ «թշուառին միշտ թշուառն է կարեկից», և փորձերը ցոյց են տալիս, որ միացած ոյժերով կարելի է շատ բաներ իրագործել, շատ բարիքներ առաջացնել։ Այն, ինչ որ անհնարին է անհատի համար, շատ հեշտ իրագործելի է ասոցիացիայի խմբերի, հատուկեան ոյժերի համար։

Ահա հէնց դա է պատճառը, որ քաղաքակիրթ երկրներում, զարգացած ժողովուրդների մէջ, այնքան աճում բազմանում են պէս-պէս կազմակերպութիւնները պէս-պէս նպատակներով։

Այդ տեսակ կազմակերպութիւնների շարքին են պատկանում և սպառող ընկերութիւնները, որոնք կամաց կամաց զարգանում են նաև Ռուսաստանում, հովանաւորութիւն գտնելով կառավարութեան կողմից։

Սպառող ընկերութիւն *)։—Դա մի կազմակերպութիւն է սեփական խանութով, որ ձգտում է իր անդամներին էժան գնով լաւ ապրանքներ մատակարարել՝ ուտելիք, հագնելիք և այլ հարկաւոր առարկաներ։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ Նա ապառում է իր անդամներին վաճառականների շահագործումից և հնարաւորութիւն է տալիս փոքրիկ խնայողութեամբ սեփականատէր դառնալ։ Սակայն այդ-

*) Այդ մասին աւելի մանրամասն գրել ենք «Մշակ» լրագրում եւ անցեալ տարուայ «Լոյսի» էջերում։

քան գեղեցիկ դեր կատարելու համար սպառող ընկերութիւնը պէտք է կազմակերպուած լինի կենսունակ հիմքերի վրայ, խելացի ձևով, նպատակայարմար միջոցներով։ Հակառակ դէպքում սա կարող է հիասթափեցնել իր հիմնադիրներին։

Սպառող ընկերութիւնը պէտք է լինի հանրամատչելի։ Այդ պատճառով պէտք է բաժիններից (պայից) էժանագին անել—օրինակ 3—5 րուբլի և գումարը վերցնել ոչ թէ միանուագ, այլ մաս-մաս։ Անգլիայում ընդունուած է բաւական խելացի մի ձև. այդտեղ սպառող ընկերութեան անդամ դարձող իւրաքանչիւր անդամ սկզբում վճարում է միայն մի շիլլինգ, այսինքն 40—50 կոպ., իսկ մնացածը մաս-մաս, ամէն-ամիս։ Շատ դէպքերում էլ յետագայ վճարումները դուրս են գալիս անդամին հասանելիք շահից—դիվիդենտից. այդպիսով միայն 40—50 կ. վճարով մարդ կարող է սպառող ընկերութեան անդամ, խանութի բաժնետէր դառնալ։

Ընկերութեան բոլոր անդամները պէտք է ունենան հաւասար իրաւունքներ, որպէսզի դրանով զարգացայ ընկերական համերաշխութիւնը և վերանայ նրա դասակարգային նախանձն ու տարբերութիւնը։

Կանայք էլ պէտք է հաւասար իրաւունքներ վայելեն տղամարդկանց հետ, որովհետև նրանց ձեռքին է տան ամբողջ տնտեսութիւնը, գլխաւորապէս նրանք են հարկաւոր նիւթեր գնողը կամ գնել ուղղը, հե-

տևապէս նրանք աւելի շատ գործնական օգուտ կարող են տալ, քան թէ տղամարդիկ։ Իբրև ապացոյց կարելի է վերցնել Անգլիան, ուր կանայք անգլին դեր են խաղում ապառող ընկերութիւնների գործերում։

Եղար ապրանքները հատասար ձայներ պիտի ունենան, չնայելով բաժնետէրերի քանակութեանը։ Եթէ դրա հակառակը լինի, այսինքն եթէ շատ բաժին ունեցողը շատ էլ ձայն ունենայ, այն ժամանակ ընկերութեան գործերը վերջ ի վերջոյ կկենդրոնանան մի քանի հարուստների ձեռքում. միւս անդամները կկորցնեն իրանց հետաքրքրութիւնը. առաջ կգան դժգոհութիւններ, որոնք կարող են նոյն իսկ քայքայման ենթարկել ընկերութիւնը։

Ջուտ արդիւնքը պէտք է բաժանել զրնած ապրանքի բանակի հետ համեմատ, այսինքն արդիւնքից որոշ գումար պէտք է յատկացնել պայերէն իբրև դրամագլխի տոկոս, մի մասը պահեստի գումար դարձնել, իսկ մնացորդը բաժանել այնպէս, որ ընկերութեան խանութից շատ ապրանք գնողը շատ էլ փող ստանայ։ Օրինակ, եթէ անդամներից մէկը տարեայ ընթացքում 100 ր. ապրանք է գնել, իսկ միւսը 50 ր.—այդ դէպքում առաջինը երկու անգամ էլ աւելի բաժին պէտք է ստանայ գուտ արդիւնքից։

Ապրանքը պէտք է ծախել միայն կանխիկ փողով, վարձով (կրեդիտով) կամ ուրիշ խօսքով ասած նախ առած ապրանքը կոտած պէտք է համարել, եթէ չկայ վստահելի

երաշխաւորութիւն։ Եթէ ապառող ընկերութիւնը այդ ճանապարհի վրա կանգնի, շուտով իրա ունեցածը կբաժանէ սրան-նրան և ինքը կմնայ առանց դրամագլխի, որով և սոխպուած կլինի իր գոյութեան վրա խաչ դնել։

—Իւրաքանչիւր ապառող ընկերութեան խանութի վրա, իրաւացի կերպով նկատում է պրոֆ. Օզերով, պէտք է նշանագրուած լինի հետևեալ նշանաբանը.

—Վարկով առուտուր անելը կարող է կործանել ընկերութեան գոյութիւնը։

***

—Գեղեցիկ, դուցէ բացականչէն ընթերցողներից շատերը, բայց գործի հէնց սկզբում հարկաւոր է դրամագլուխ. որտեղից ձեռք բերել, հարկաւոր է իշխանութեան թոյլատուութիւն—ինչպէս և ուժից ստանալ։ Այո, իրաւացի հարցեր են դրանք, բայց հեշտ լուծելիք։ Նախ մարդ որքան էլ որ աղքատ լինի կկարողանայ շաբաթական մի քանի կոպէկ խնայել և 3—5 րուբլի դրամագլուխ կազմել և երկրորդ՝ համերաշխ ընկերակցութեամբ կարելի է առանց դրան էլ գործը գլուխ բերել։ Ահա թէ ինչպէս. ապառող ընկերութիւն կազմել ցանկացող մարդիկ, պայմանաւորուում են մի կամ մի քանի վաճառականների հետ, որպէսզի դրանք սովորականից պակաս գնով բաց թողնեն իրանց ապրուստի համար անհրաժեշտ պիտեղէնները, իսկ իրանք պարտաւորւում են պայմանաւորուած ժամանակի ընթացքում

սպառել այդ ապրանքները, կառուցել և մաս-մաս վճարելով համապատասխան արժէքը։ Հենց այդ գաղջի գումարն էլ պառակում է նրանց սեփական խանութի սկզբնական դրամագլուխը։ Այսինքն պայմանաւորուած քանակութեամբ ապրանքներ սպառելուց յետոյ ընկերութեան անդամները վաճառականի մօտից վերցնում են համապատասխան գողը և գրանով բաց անում սեփական սպառողական խանութը։

Այդ ձևը գործադրել են չատ ընկերութիւններ և դրական հետևանքի հասել։ Հետևում չգնանք, օրինակը վերցնենք հէնց Ռուսաստանի կեանքից։ Մոսկուայի «Փոխադարձ օգնութիւն» ընկերութիւնը այդ ձևով մի տարուայ ընթացքում տուգել է 3000 րուբ. գեղջ։ Նոյն ճանապարհով է հիմնուել Պետերբուրգի «Միասնութիւն» անունով սպառող ընկերութիւնը, որը այնքան արագ կերպով զարգացրել է իր գործունէութիւնը։

Առաջ բերածից պարզ երևում է, որ բարի ցանկութիւնն ու համերաշխութիւնը կարողն հարթել փոդային հարցի դժուարութիւնը։ Մնում է ուրեմն պատշաճաւոր թոյլատուութիւն ստանալը։

Դրա համար ընկերութեան հիմնադիրները հատուկ ստորագրութեամբ տեղական նահանգապետի միջոցով խնդիր են տալիս ներքին գործերի մինիստրի անունով՝ հաստատութեան ներկայացնելով իրանց մշակած կանոնադրութիւնը *)։ Գործը հեշտացնելու և արագացնելու համար աւելի լաւ է ներկայացնել արդէն հաստատուած մի կանոնադրութիւն՝ ապագային թողնելով նրա ցանկալի փոփոխութիւնները ու լրացումները։

Այդ ճանապարհով, հաստատութիւն ստանալուց յետոյ, ընկերութիւնը կարող է սկսել գործը, բայց միշտ բարձր պահելով հաւատարմութեան և համերաշխութեան վեհ դրօշակը։ Դրանք են եղել ընկերութեան հիմնաքարը, դրանք էլ պէտք է դառնան նրա գոյութեան շարժիչն ու ոյժը։

Ե. Թոփչեան

Ի՞ՆՉ ՊԻՏԻ ԱՆԷ ԿԻՆԸ

Կեանքի պայմանները հետզհետէ աւելի ու աւելի դժուարացնում են ապրուստը, աւելի զօրեղ, աւելի լարուած մրցում են պահանջում մարդկանցից, ուստի կինն էլ, իբրև մարդկային հասարակութեան անդամ, պէտք է նախապատրաստուի գոյութեան կռուի համար։

Այդ կռուում միշտ էլ յաղթող հանդիսանում են աւելի ուժեղները, ընդունակները ու ճարպիկները, իսկ թոյլերը յետ են մնում,

*) Ցանկացողներին կարող ենք ցպատել, ուղարկելով թէ խնդրագրի եւ թէ կանոնադրութեան օրինակներ։

նեղութիւն կրում և տարիական կեանքի ենթարկւում։ Երկար դարերի ընթացքում այդպէս է եղել կինը։ Հասարակական որոշ պայմանների շնորհիւ նա յետ է մնացել ազատութիւնից, զրկուել է ազատութիւնից, կորցրել է շատ ու շատ արտօնութիւններ և դարձել գլխաւորապէս սեռական հաճոյքի առարկայ։ Բայց այժմ, երբ գիտութիւնը իր լուսաւոր ճառագայթները սփռել է ամեն կողմ, երբ առաջադիմութեան ու ազատութեան տենչը այնքան զօրեղացել է հասարակութեան բոլոր խաւերում, կինը պէտք է ձգտի ջախջախել իր դարաւոր ստրկութեան շղթաները, պէտք է դիմէ դէպի ազատութիւն։

Այդ նպատակին հասնելու համար նա պէտք է աշխատի տնտեսապէս անկախ վիճակ ստեղծել։ Մինչև այժմ մեզանում տիրապետող կարծիքն այն է, թէ կնոջ ապրուստի գլխաւոր ճանապարհը ամուսնութիւնն է։ Եւ ահա մի կողմ հոգի համար տեղի են ունենում բոլորովին անհամապատասխան ամուսնութիւններ, որոնց հետևանքն է լինում ընտանեկան անվերջ փոթորիկներ, զժբաղդութիւն ու զժուութիւն։ Անհրաժեշտ է օր առջ դրա առաջն առնել և այդ հարցում աւելից շատ աշխատողն ու բողոքողը կինը պէտք է լինի։

Բայց ի հարկէ, դատարկ բողոքը արժէք չունի, եթէ դրա հետ կապուած չեն գործնական միջոցներ։ Կինը ինքը պէտք է լինի իր զբաղութեան մասին հոգացողը, իր վիճակը բարւոքողը, ուստի հենց դեռ մանկական հասակից

պէտք է նախապատրաստի տնտեսապէս անկախ կեանք վարել, նա չպէտք է խորշի աշխատանքից, միշտ աչքի առաջ պէտք է ունենայ, որ ամուսնութիւնը փոխադարձ ազատ սիրոյ հետևանք է և ոչ ապրուստի միջոց, որ ամուսինները հաւասար չափով ընդունակ պէտք է լինեն միմեանց հասկանալու և օգնելու, որ ընտանեկան երջանկութեան հիմքը՝ փոխադարձ սէրը օգնութիւնն ու համերաշխութիւնն է։ Հենց այդ տեսակէտից անհրաժեշտ է, որ կինը ձգտի րէ իր զբաղութիւններով, թէ գիտութեամբ եւ թէ գործունեութեամբ յետ չլինի տղամարդուց։

Մեզանում կանանց դաստիարակութիւնը դեռ սխալ հիմքի վրա է դրած։ Նա շատերը համոզուած են, որ կինը միայն տղամարդու հաճոյքի համար է ստեղծուած, որ նրան պէտք է դաստիարակել այդ հաճոյքի պահանջների համեմատ։ Ահա այդպիսի սխալ համոզմունքն է պատճառը, որ շատ ընտանիքներում աւելի լաւ են համարում իրանց ազջիկներին գեղեցիկ չարժուել ու հագնուել, լաւ պարել ու նուագել սովորեցնել, քան թէ մի օր և է դրական գիտութիւն, որ կարող է պէտք գալ գործնական կեանքի սև օրերում։

Իսկ եթէ չի աջողւում տպատած ամուսնութիւնը կամ մի օր և է զժբաղդութիւն է պատահում աշխատաւոր տղամարդուն, ինչ անէ կինը, ինչով կերակրուի և կերակրէ իր զաւակներին։ Այդ ժամանակ բաց են նրա առաջ կատարեալ թշուառութեան դռները, եթէ

Նա ընդունակ չէ աշխատելու, ապրուստ հայթայթելու։ Ուրեմն իւրամանչիւր կին ամենից առաջ պէտք է աշխատի այդ ընդունակութիւնը ձեռք բերել, եթէ չի ուզում պատահարների դէպքում թշուառութեան սառը վիճակին ենթարկուել։

Ինութիւնը պարգեւել է կնոջը մի այնպիսի կոչում, որից զուրկ է տղամարդը։ Նա գաւակներ է աշխարհ բերում և նրանց կրթում մեծացնում։ Նրա ձեռքի տակով է անցնում մանուկ սերունդը, ապագայ մարդկութիւնը։ Ուրեմն անհրաժեշտ է, որ նա նախապատրաստուած լինի այդ կոչման համար։ Դպրոցական ուսուցիչներից մենք պահանջում ենք մանկավարժական ընդունակութիւն, կրթական ցնդ, իսկ մայրերից ոչինչ։ Նրանց առաջ նոյն իսկ փակում ենք գիտութեան դռները. շատ անգամ նոյն իսկ հասարակ գրագիտութիւն սովորելը շռայլութիւն ենք համարում։

Ահա այդ հակասութեան, այդ անարդարութեան դէմ պէտք է զինուել բոլոր ոյժերով և այդ դիմադրող շարքերում ամենից առաջ պէտք է կանգնեն իրանք կանայք։ Նրանք ամեն կերպ պէտք է աշխատեն յայն գիտութիւն ձեռք բերել եւ դրանով արժանաւոր կերպով ծառայել մայրական կոչմանը։

Կինն էլ տղամարդու նման որոշ ազգութեան անդամ է, ուրեմն նա պէտք է ընդունակ լինի իրագործել իր պարտաւորութիւնները այդ ազգի վերաբերմամբ։ Նա պիտի իմանայ իր ազգի անցեալն ու ներկան, ցաւերն

ու կարիքները եւ ամեն կերպ ձգտի նրան օգնութեան հասնել։

Բացի դրանից կինը իբրև անհատ պատկանում է այն մեծ ընտանիքին, որի անունն է մարդկութիւն։ Նա ունի բարոյական որոշ պարտաւորութիւններ այդ ընտանիքի վերաբերմամբ, ուստի շարունակ պէտք է հետաքրքրուի ընթացիկ հասարակական խնդիրներով եւ իր ջանքը գործ դնի մարդկային ընդհանուր առաջադիմութեան համար։

Մի խօսքով, կինը իբրև մարդ—արարած տղամարդու հետ համահաւասար չափով պէտք է կատարելագործէ իր ոյժերն ու ընդունակութիւնները, պէտք է ձգտի դէպի առաջադիմութիւն և անկախութիւն։

Իսկ այդ բոլորի համար անհրաժեշտ է տոկունութիւն և անդուլ գործունէութիւն։ Իր դրութիւնը բարւոքելու համար կինը ամենադլխաւոր զէնքը պէտք է դարձնէ ինքնօգնութիւնը՝ միշտ հաւատացած լինելով, որ խելացի ինքնօգնութիւնը հրաշքներ կարող է գործել։

Ե. Թումչեան

ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆ

(Հայկ. տառերի գիւտի 1600-ամեակի առիթով)

Զարմ հարիւր երեսուն էին Թուսկանի ձմեռն էր։ Հայոց Մեհեկան ամիսը նոր էր մտեներում իր կէսին և Արարատեան մեծ դաշտի վրա դեռ տիրում էր սառնամանիքների մեռելութիւնը։ Բայց մարդիկ ցուրտ և անբզդայ չէին բնութեան պէս։ Նրանց մէջ սաստիկ յուզմունք էր նկատուում։ Պատահել էր մի սխալ դէպք։

Վերջին տասը տարիների ընթացքում հայ ժողովուրդը մեծ մեծ կորուստներ էր ունեցել։ Կորցրեց թագաւորութիւնը, վերջացաւ Արշակունիների տոհմը, կաթողիկոսական իշխանութիւնը խլուեց Գրիգոր Լուսաւորչի տոհմից, յանձնուեց պատ և արտաքսուեց օտարազգիներին։ Վեց ամիսը դեռ նոր էր անցել, ինչ Խորին վշտի մէջ մեռել էր գահից հեռացրած հայոց կաթողիկոսը, Սահակ Պարթեւը, որի հետ վերջանում էր Լուսաւորչի հռչակաւոր տոհմի հոգևոր տիրապետութիւնը։ Իսկ այժմ այս կորուստը, վերջինը, որ տանում էր իր հետ գեղեցիկ յիշատակներ։ Զգում էին, որ հայ աշխարհից վերանում է մի աստղ, մի նուիրական բան։ Հաւաքուել էին մարդիկ, մտածում էին, թէ Հայաստանի մէջ ուր պիտի



Ծաղկոցի «U. Ulanուց» հնչեցիկը։

«ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» 1905 Թ.

որոնել այն մի ափ հողը, որ այդ մարմինը իր ծոցում ամփոփելու պատիւն ունենայ։

Եւ այդքան սիրուած և յարգուած հանգուցեալը իշխանաւոր չէր, մեծատուն մի առնմից չէր վարում իր ծագումը, պատերազմի հերոս չէր կամ հարուստ մի կալուածատէր, աշխարհ կառավարող, հրամանատար չէր եղել, ոչ իսկ այս աշխարհի հզօրներից մէկն էր։ Մօտ ութսուն տարեկան մի ծերունի վարդապետ — վարդապետ և ոչ իսկ եպիսկոպոս,— հասարակ գիւղացու որդի—Մեսրոպ Մաշտոցն էր նա, առաջին հայ ուսուցիչը, որ գործել էր երեսուն և հինգ տարի և այժմ, երբ մահը թել էր նրա ձեռքից խլուդին ու գրիչը, հայոց աշխարհը, առաջին անգամ իր պատմութեան սկզբից, գլուխ էր իջեցնում այդ նոր, մինչև այդ չեղած գործչի առջև։

Բացուել էր փետրուարեան օրը, բայց էին և վաղարշապատի դռները։ Մարդկային գլուխների մի ամբողջ ծով դանդաղ, յորձանքներ տալով, դուրս է թափւում։ Շարժւում էր ծովացած, լուրջ և մտախոհ ամբոխը։ Պլպլում էին ճրագները ու ջահերը, եկեղեցական երգեցողութիւնը տիրապէս ծաւալւում էր պաղ օդի մէջ։ Ճանապարհին գիւղական խմբեր էին միանում հանդիսին։

Առաջին հայ ուսուցչի դագաղը շրջապատել էին նրա աշակերտները։ Դրանք էին ամենից շատ վշտացած, դրանք էին վէճ բացել թաղման տեղի մասին։ Վահան Ամատունին էլ այս աշակերտներից մէկն էր։ Բնական էր, որ

նա կամենար իր սեփական կալուածում թաղել իր սիրելի ուսուցչին։ Իսկ նրա կալուածը այդ դաշտից քիչ բարձր էր գտնւում—Օշական ամրոցը։ Հայոց հազարապետը թաղման հանդիսի գլուխն անցաւ. նրա հետ էր այն ժամանակուայ առաջնակարգ և ազդեցիկ ազնուական տան ներկայացուցիչը՝ Համազասպ Մամիկոնեան—Վարդանի եղբայրը։

Դաշտը տեղ տուեց քաղքարոտ բլուրներին. Արագածի շղթայի առաջին ոտներն էին։ Բազմութիւնը հասաւ ամենամեծ բլրի գլուխը, իջաւ քառասուն գետի մեծ ձորը, նորից դէպի բարձր դիմեց։ Օշականն էր։ Այդտեղ իջեցրին դագաղը, այդտեղ եկեղեցին հրաժեշտ տուեց իր վարդապետին, իսկ ժողովուրդը վերջին անգամ երկրպագեց իր ուսուցչին։

Գերեզմանը փակուեց։ Եւ այն օրից Օշականի հողը պահում է իր ծոցի մէջ ս. Մեսրոպին *)։

***

Անցան դարեր։ Ժամանակը քայքայեց Վահան Ամատունու շինած տաճարը, ուսոի Փիլիպպոս կաթողիկոսը 1639 թուին ձեռնարկեց նրա նորոգութիւնը։ Գէորգ կաթողիկոսն էլ իր կողմից հիմնական վերաշինութեան ենթարկեց այդ նուիրական տաճարը, որը և իր այժմեան տեսքն ընդունեց։

*) Տե՛ս Կորիւն. Լէօ, հՍ. Մեսրոպ եր, 1—7, 1904 թիւ։

Օշական—հասարակ գիւղ չէ դա, այլ մի նուիրական վայր, որովհետև այնտեղ է հայութեան առաջին ուսուցչի գերեզմանը։

Օշականի եկեղեցի—սովորական տաճար չէ դա, այլ մի մեծ սրբատեղի, որովհետև նրա ծոցումն է հանգչում ս. Մեսրոպը՝ որ հայկական այրուբենն հնարեց և դրանով քաղաքակրթութեան մի նոր դուռ բացեց։

Մեծ էր նրա կատարած գործը, մեծ պէտք է լինի և յիշատակը։ Մեծ ու անմոռաց։

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱԲՐԻԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՑՎԱԶՈՒՍԿԻՑ

(Մահուան 25 ամեակի առիթով)

Ղրիմ թերակղզու գեղատեսիլ անկիւնում ապրում էր մի ընտանիք Այվազովսկիյ անունով։ Ընտանիքի հայրը կաթոլիկ էր, իսկ մայրը լուսաւորչական։ Ահա այդ ամուսնութիւնից ծնան հինգ զաւակներ, որոնցից երկուսը իրանց հանճարով մեծ անուն հանեցին և փառք ու պատուի արժանացան՝ մէկն իբրև աշխարհահռչակ ծովանկարիչ, իսկ միւսն իբրև գրական գործիչ և հոգևորական։

Յովհաննէս Այվազովսկիյ—ահա առաջին անունը, որը միշտ էլ պարծանքով է յիշւում ամեն մի հայի կողմից։

Գաբրիէլ Այվազովսկիյ—ահա երկրորդ անունը, որի հետ կապուած են հայ գրականութեան ու անցեալի քաղցր յիշողութիւնները։

Մի այլ—պատշաճաւոր առիթի թողնելով Յովհաննէս Այվազովսկու կենսագրութիւնը, վերցնենք այժմ նրա եղբօրը և տեսնենք, թէ նա ինչ պայմաններում կրթուեց և ինչպէս նախապատրաստուեց այն գերչը, որը տուեց մեզ Կրիլովի առակների գողտրիկ թարգմանութիւնը։

Այվազովսկին ծնաւ 1812 թ. մայիսի 12-ին։ Նրա ծննդեան անունն էր Ալէքսանդր։ Փոքրիկ Ալէքսանդրը դեռ 5 տարեկան էր, երբ նրան Հայոց ծխական դպրոցն ուղարկեցին գրագիտութիւն սովորելու։ Բայց ծխական դպրոցի ուսումը չէր կարող բաւարար համարուել, ուստի հոգատար հայրը 12 տարեկան Ալէքսանդրին տարաւ Ղարասու Բազար և աշակերտութեան առաջարկեց ս. Էջմիածնի միաբան Մանուէլ վարդապետ Կիւմուշխանցու մօտ, իսկ երբ վերջինս մեռաւ, տարաւ Մխիթարեան միաբան Մինաս Վ. Բժշկեանի մօտ, Այդպէս երկու տարի ծնողաց յետոյ Ալէքսանդրին 1826 թ. ուղարկում են Վենետիկ ս. Ղազարի վանքի դպրոցում սովորելու։

Մինչև 30 տարեկան հասակը Այվազովսկին մնում է այդտեղ և Մկրտիչ Աւգերեանի նման հմուտ ուսուցիչների ղեկավարութեամբ

Գաբ. արհեպ. Այվազովսկի

լայնացնում է իւր մտաւոր հորիզոնը, հարբատացնում է իւր գիտութեան պաշարը։ Միջնակարգ ընդհանուր ուսումը վերջացնելուց յետոյ նա նուիրւում է աստուածաբանական բարձրագոյն գիտութեան և բացի դրանից հիմնովին իւրացնում է երբայերէն, պարսկերէն, իսկ նոր լեզուներից՝ իտալերէն, ֆրանսերէն, ռուսերէն և թիւրքերէն. կարդում ու հասկանում էր նաև գերմաներէն ու անգլիերէն։

Այդպիսի բազմակողմանի կրթութիւնը մի մեծ գրաւական էր նրա բեղմնաւոր գործունէութեան։ Նա կուսակրօնութիւն է ընդունում Գաբրիել նոր անուան տակ և 1842 թուականից մինչև 1848 թ. Մխիթարեան միաբանութեան ամենահռչակաւոր, ամենագործունեայ անդամ դառնում։ Նա Մխիթարեան դպրոցում աւանդում էր արեւելեան և եւրոպական լեզուներ, աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն. 1843 թուին հիմնում և խմբագրում է «Բազմավէպ» ամսագիրը. բացի այդ բոլորից նա աբբահօր 6 խորհրդականներից մէկն էր և ընդհանրական առենադպիր։ Պարզ է, ի հարկէ, որ նա այդպիսի դիրք ու նշանակութիւն ստացել էր ոչ յանկարծ, այլ աստիճանաբար, մատուցած ծառայութիւնների համեմատ։ Նա դեռ 1836 թ. հրատարակել էր իր առաջին աշխատութիւնը՝ «Պատմութիւն Ռուսաց», իսկ 1841 թուին «Պատմութիւն Օսմանեան պետութեան» նշանաւոր գրուածքը։

Այվազովսկու կեանքում մի նոր շրջան է

սկսում, երբ 1848 թ. օգնական է նշանակում Փարիզի Մուրադեան վարժարանի տնօրէն՝ Ս. Վ. Թէոդորեանը։ Վերջինս տեսնելով իր օգնականի արտակարգ ընդունակութիւններն ու պատրաստութիւնը, ամբողջապէս նրան է յանձնում դպրոցի տնօրէնութիւնը, իրան վերապահելով միայն տնտեսական բաժինը։ Եւ Այվազովսկին լիուլի չափով արդարացնում է իր վրա դրած յոյսերը։ Վարժատունն օրէցօր առաջադիմում է, նրա հռչակը բարձրանում. նոյն իսկ լուսաւորչական հայերը այդտեղ են ուղարկում իրանց զաւակներին։

Բայց ահա սկսում են դաւանաբանական նեղ խնդիրները։ Մխիթարեանների աբբահայրը Հռոմի դրդմամբ հրամայում է, որ Մուրադեան վարժարանի լուսաւորչական սաները կամ դաւանափոխ լինեն կամ հեռացուեն դպրոցից։ Տեսուչը հրաժարւում է այդ անարդար պահանջին իրազօծելուց, աւելի լաւ համարելով թողնել պաշտօնը և նոյն իսկ հեռանալ միաբանութիւնից։

Բայց եռանդուն գործիչը հանգիստ կեանքի սովոր չէր։ Նա սիրում էր եռուն գործունէութիւնը, ուստի և 1855 թ. Փրկանիայի մայրաքաղաքում նա հիմնում է «Մասեաց Աղաւնի Աւետարեր Հայաստանի» պատկերազարդ հայերէն և ֆրանսերէն հանդէսը։ Շուտով Մխիթարեան միաբանութիւնից բաժանւում են և երկու ուրիշ վարդապետներ՝ Սարգիս Թէոդոսեան և Ամբրոսիոս Գալֆայեան, որոնք և դառնում են Այվազովսկու ամենամօտիկ աշ-

խատակիցներն ու գործակիցները։

Դրանք երեքով որոշում են ուժեղ մրցում սկսել Մուրադեան վարժարանի դէմ, ուստի և Փարիզում հիմնում են մի նոր դպրոց՝ «Հայկազեան բազմալեզուեան վարժարան» անունով։ Բայց նորահաստատ դպրոցը աջողութիւն չունեցաւ, որովհետև սուղ էին նիւթական միջոցները, որովհետև Կ. Պոլսի հայերը և պատրիարքարանը չէրականացրին իրանց տուած առատ խոստումները։

Այդ փոթորկալի ժամանակամիջոցում, երբ կաթոլիկ միաբանութեան և հեռացած վարդապետների մաքառումը հետզհետէ աւելի ու աւելի սուր կերպարանք էր առանում, հայր Այվազովսկին իր ձիրքերի շնորհիւ մի նոր միտք է յղանում—այն է՝ վերադառնալ հայրենիք և Հարաւային Ռուսաստանում ապրող հայերի համար մի նոր դպրոց հիմնել։ Այդ մասին նա դեսպանատան միջոցով նախօրօք հաւանութիւն է առանում ռուսաց կառավարութեան կողմից և ապա ճանապարհ ընկնում դէպի Պետերբուրգ։

Ծանր ժամանակներ էին։ Ախճանուհի էր ներսէս Աշտարակեցին. թափուր էր Ծիացեղ Էջմիածնի գահը։ Շատ տեղերում հովիւ չկար, և եկեղեցական գործերը խճճուած վիճակի մէջ էին։ Բայց ռուս կառավարութիւնը ամենից շատ Հարաւային Ռուսաստանի հայերի մասին էր խնամք առնում, ուստի և նախապէս համաձայնութիւն կայացնելով Էջմիածնի Սիմեոնի հետ՝ Այվազովսկուն Բեսարաբիայի և նոր-

Նախիջևանի թեմի կառավարիչ է նշանակում։

Սկսում է գործունեության նոր շրջան։ Հայր Գաբրիելը կաթ միջոցում հաշտեցնում է Նոր-Նախիջևանի 2 կուսակցություններին՝ Հայրապետականներին և Մալիսեանցներին, ձեռք է բերում եկեղեցական գրամները և Մալիսեանի օգնությամբ Թէոդոսիայում հիմնում է Մալիսեան դպրոցը և տպարանը։ Այդտեղ էլ նա շարունակում է «Մասեաց Աղաւնու» հրատարակությունը։ Նոր շրջանը, նոր գործունեությունը նոր պահանջներ ու հանգամանքներ է առաջ բերում։ Սկսում են հալածանք Այվազովսկու դէմ։ Հալածանք թէ մամլոյ միջոցներով և թէ հրապարակախօսական ձևով։

«Մասեաց Աղաւնու» դէմ են՝ Ս. Նազարեանցի «Հիւսիսափայլը», Թիֆլիսի «Մեղու Հայոց»-ը և Կ. Պօլսի «Մեղուն», բայց Այվազովսկին անվհատ կերպով շարունակում է իր գործը, առակներով ու սրամիտ ձևով պատասխանելով հակառակորդներին։

Այվազովսկու գործունեությունը Մալիսեան դպրոցում շարունակում է ընդամենը 7 տարի (1858—1865)։ Նա հեռացավ այդ պաշտօնից, երբ արձակուեց թեմակալութիւնից։ Նրան առաջարկեցին կառավարել Երևանի թեմը, բայց նա չընդունեց այդ առաջարկը և ուզի դերազան համարեց ապրել Թէոդոսիայում— ազգականների մօտ և ամբողջապէս նուիրուել գրական գործունէութեան։

Այդ շրջանում նա հաւաքագրեց և հրատարակեց Կրիլովի առակների ղողարիկ թարգմանութիւնը, որ մինչև այժմ էլ անգերազանցելի գործ է մեր գրականութեան մէջ։ Այվազովսկին թէև ակզբունքով հակառակ էր աշխարհաբարին, բայց գործնականապէս նրա մշակողներից առաջինը դարձաւ, տալով.

Հոդիդ սիրես, կեանաւր,
Անուշ ըրէ, հրաւէն կեր...
(Թարուլի գալաձոյ)

և այլ նմանօրինակ ժողովրդական դարձուածքներով թարգմանութիւնները։

***

Այվազովսկու կեանքում մի նոր շրջան է սկսում, երբ 1867 թուին կաթողիկոսական գահն է բարձրանում Գէորգ IV-ը։ Նա սկզբից վերաբերմունք է ցոյց տալիս դէպի հալածական վարդապետը, նոյն թուին եպիսկոպոս է ձեռնադրում և Սինոդի անդամ կարգում։ 1875 թ. նշանակում է նա էջմիածնի նորաբաց ճեմարանի տեսուչ և միևնոյն ժամանակ ստանում է Վրաստանի և Իմերեթի թեմակալութիւնն ու արքեպիսկոպոսութեան կոչումը։ Ճեմարանի դեկը նա յանձնում է մի ոմն Գալըստեանցին, իսկ ինքը տեղափոխում է Թիֆլիս՝ ընդարձակ թեմը կառավարելու։ Դրժուար էր այդքան հեռու տեղից հսկել դպրոցի վրա, նշանակուած կարգապահն էլ անհամապատասխան էր իր պաշտօնին, ուստի 1878 թ. բռնկուեց առաջին աշակերտական խառնակութիւնը, դրան հետևեց երկրորդը, ո-

րոնք և պատճառ դարձան Այվազովսկու հրաժարուելուն։

Ահա այդքան ալեծածան է եղել Այվազովսկու կեանքը, ալեծածան և մաշող։ Մի կողմից ծերութիւնը, իսկ միւս կողմից կեանքի այդպիսի սուր եւ ևկէզնները վերջապէս քայքայում են նրա առողջութիւնը։ 1880թ. ձմեռը նա հիւանդանում է և ապրիլի 8-ին վախճանւում Թիֆլիսում։

Գուժարերը լուրը կայծակի արագութեամբ տարածւում է քաղաքում։ Բազմաշխատ գործչի մահը ցնցում է հայ հասարակութեանը և նա հազարներով խմբւում է, որպէսզի արժանի յարգանքը մատուցանէ նրա յիշատակին։

Ապրիլի 13-ին Այվազովսկուն թաղում են վանքի բակում։

Քան և հինգ երկար տարիներ են անցել այն օրից, մեր գրականութիւնը համեմատաբար ծաղկել և բարգաւաճել է, մեր կեանքը առաջադիմել է, բայց և այնպէս դեռ թարմ են մնացել Այվազովսկու գործունէութեան հնձաքերը։ Ընդհանուր առմամբ արդիւնաւէտ է եղել այդ գործունէութիւնը թէ դպրոցական և թէ գրական ասպարէզում։ Բացի երկու պարբերական հրատարակութեան («Բազմավէպ» և «Մասեաց Աղաւնի») հիմնադիր—խմբագիր լինելուց, նա գրել է մօտ 20 զանազան աշխատութիւններ («Ուրուաց պատմութիւն», «Օսմանեան պատմութիւն», «Մանզարմունք հայերէն լեզուի», «Ճօճն խօսք առ աղայս», «Լսարանք կենցաղօգուտ դիտելեաց»,

«Նախակրթարան հայերէն լեզուի», «Առակք Կրիլովի», «Հազար և մի առակաւոր բանք» և այլն), որոնք իրրև «անձեռնադրծ մի արձան» միշտ վառ, միշտ կենդանի կպահին իրանց հեղինակի յիշատակը։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓԱՀԱՆԱՑ ՇՄԱՒՈՆԵԱՆ

(Հայ լրագրութեան 110-ամեակի ատիթով)

—

«Լրագիրը, ասում է մի յայտնի գիտնական, հասարակութեան վերաբերմամբ նոյն դերն է կատարում, ինչ որ երակները մարմնի վերաբերմամբ։ Նա իրրև մատուռ օդակ կապում է հասարակութեան անդամներին, մնունդ է տալիս մարդկանց մտքին ու սրտին և մատչելի է դարձնում փոխադարձ շփումն ու հաղորդակցութիւնը»։

Քաղաքակրթութեան այդ նշանաւոր գործօնը դեռ ասանհինգերորդ դարի վերջերում մուտք է գործել Եւրոպա, իսկ հայերս, իբրև արևելցի մի փոքրիկ ազգ, ուշի ուշ կնք օգտուել նրա բարիքներից։ Միայն 1794 թուականին լոյս է տեսնում հայ լրագրութեան մայրը՝ առաջին հայերէն թերթը՝ «Ազդարարը», և այն, ոչ թէ բուն Հայաստանում, այլ Հնդկաստանի հեռաւոր անկիւնում—Մադրաս քաղաքում։

Ահա այդ նշանաւոր դէպքի հարիւր տասնամեակն էր, որ լրացաւ անցեալ 1904 թուականին։

Բայց ո՛վ էր նրա սկզբնապատճառը, ո՛վ էր հայ լրագրութեան հիմնադիրը։

—Մի համեստ քահանայ՝ Յարութիւն Շմաւոնեան, որի անձնաւորութեան մասին, զժբաղդաբար, մանրամասն տեղեկութիւններ չունենք։

—Շմաւոնեանը, ասում է պ. Լէօն *), Պարսկաստանի Շիրազ քաղաքից էր, ծնուել էր 1750 թուականին և 1784-ից Մադրասի եկեղեցու քահանան էր։ Այդտեղ նա իր աշխատանքով, իր սեփական ծախսով հայերէն տառեր է պատրաստում, որոնց նա անուանում է «որդի վշտաց», ակնարկելով, երևի, իր այն չարչարանքները, որոնք հասկանալի և անխուսափելի էին այդ դէպքում, երբ ամեն ինչ ինքը պիտի պատրաստէր։

Նրա տպարանի առաջին պտուղն է «Պատմութիւն Մարիամէ կուսին» անունով վկայաբանութիւնը, որ սկսեց տպագրուել 1789 թուականին և որ արտատպութիւն էր Կ. Պոլսում տպած մի օրինակից։

Երկրորդ դէպքը արդէն ուրիշ բան է— «Ողբ Հայաստանեայց», հեղինակութիւն Զուզայեցի Թադէոս քահանայ Սօղինեանցի, արտատպած 1791-ին։ Թէ ինչ էր պարունակում իր

*) Տես «Հայկական տպագրութիւն» հատ. II եր. 596—608։



Յար. Թադ. Շմաւոնեան

«ԼՈՒՅՍ» 1905 Թ.

մէջ այդ «Ողբը», մենք չգիտենք։ Նրան հետեւում է արդէն շատ անգամ դանագան տեղերում տպագրուած և հայերի մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող «Ցիտուս Որդին», Ներսէս Շնորհալու հոգիոր բանաստեղծութիւնը։

1793-ին Շմաւոնեանը արտի բերկրութեամբ, իբրև հնութիւնից մնացած մի թանկագին նշխար, տպագրում է յոյն փիլիսոփայ Պորփիւրի «Ներածութիւն ի գիրսն Արիստոտելի» գործը, Դաւիթ Անյաղթ փիլիսոփայի վերագրուող մի հին թարգմանութիւն։ Բայց այսպիսի գործերով Մադրասի հայոց աւագերէցը շատ բան չէր լինի աւելացրած իրանից առաջ եղած տպագրութիւնների վրա։ Դաւիթ Անյաղթի խրթին թարգմանութիւնները չգիտի կարդալու Հնդկաստանի վաճառական հայերը։ Իսկ տպած գրքերի տարածելը անհրաժեշտ էր նախ և առաջ այն պատճառով, որ տպարանը նոր գործեր էր պահանջում. նա չէր կարող պարապ մնալ, մանաւանդ առանց ծախսերի չէր գործել։ Այդ պահանջը բարեբախտութիւն էր մեզ համար։ Հետևեալ 1794 թուականին գտնուած էր նրան բաւարարութիւն տալու միջոցը, որ և անմոռանալի դարագլուխ է բաց անում մեր գրականութեան մէջ։

Օգոստոսի 7-ին երևան է գալիս մի տպագրուած թերթ, ուղղած «Բարեբաշտ Պարոնաց և Մաքրակենցաղ Տիկնաց Մադրասին Հայոց»։ Այդտեղ Յարութիւն քահանան յայտնում էր,

թէ դիտաւորութիւն ունի ամէն ամսի վերջում իր տպարանից լոյս հանել մի տետրակ, որի անունը կլինի «Ազգապարզ» և որից ընթերցողը կիմանայ նոյն ամսուայ անցքերը, քաղուած թէ զանազան «փաղէթներից», թէ զանազան քարտէներից և թէ զանազան գըրքերից, նոյնպէս և հարկաւոր ու քաղցրալուր բաներ. տետրակի վերջում կարուի հետևեալ ամսի օրացոյցը, որի մէջ կլինին օրերի տօները, լուսնի ծնունդեան և լրման օրերը»։ Ցայտարարութիւնը վերջանում էր նրանով, որ եթէ այդ տետրակին գրւոդները լինին, հրատարակութիւնը շուտով կսկսուի։ Երկու ամիս չանցած, 28 բաժանորդներ կան, և Յարութիւն քահանան հրատարակում է իր «Ազգապարը», առաջին հայերէն պարբերական հրատարակութիւնը։

Դործը կազմակերպուած է կանոնաւոր կերպով. կայ խմբագրութիւն, կան աշխատակիցներ։ Յարութիւն քահանան գնում է Մադրասում մի քանի «ուրախակից երիտասարդներ», որոնք յանձն են առնում աջակցել առաջին հայ լրագրին։ Այդ աշխատակիցները կոչւում են վերակացուներ։ Շմաւոնեանը միանձնեան տէր չէ, իւրաքանչիւր գրուածք նախ և առաջ պիտի վերակացուների կամ, խօսելով այժմեան լեզուով, խմբագրական մարմնի հաւանութիւնն առնայ և ապա միայն ուղարկուի տպարան։ Եկեղեցու զանգակատան տակ մի արկղ է դրուած, որի մէջ ամէն մէկը կարող է գցել իր այն գրութիւնը, որ նշանակուած էր «Ազգապարի» համար։

Ազգապարը 18 ամիս ապրեց, կանոնաւոր հրատարակութեամբ մինչև 1796-ի մարտը։ Ամբողջ այդ ժամանակամիջոցում հայ ընթերցողը ունէր մի թերթ, որ ընթացիկ կեանքի պատկերն էր ներկայացնում, որքան միջոց և կարողութիւն ունէր։ Մի կողմից ֆրանսիական յեղափոխութեան լուրերն էին տեղ գըտնում այդ լրագրի մէջ, միւս կողմից Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի նամակները Պետերբուրգից, որոնց մէջ պատմուած էին 1791-ի ռուս-թիւրքական պատերազմի անցքերը, հայերի գաղթականութիւնը։ Թէև «քերթողական արհեստին» հմուտ չէր Մադրասի անդրանիկ հայ խմբագրութիւնը, բայց և այնպէս, նրան աջողւում էր մի կենդանի գործ կատարել։ Այդպէս է եղել մեր լրագրական պատմութեան մէջ համարեա միշտ. «քերթողական արհեստին» հմուտ հայերը չէին գործ կատարողները, այլ նրանք, որոնց լեզուագիտութեան վրա ծաղրում էին այդ հմուտները։ Այսօր էլ «Ազգապարը» տալիս է մեզ շատ ապացոյցներ թէ իր ժամանակի հանդամանքներին ու հասկացողութիւններին նայած՝ նա շատ մեծ պատուով է տարել պարբերական մամուլի պարտաւորութիւնները։

1796 թուականից յետոյ Յարութիւն քահանային մենք այլ ևս չենք տեսնում գրական և հրատարակչական ասպարէզում։ Բայց նա երկար ապրեց և, ինչպէս ասում են, շատ դժբախտութիւններ տեսաւ իր ընտանեկան

կեանքի մէջ։ Այդ դժբախտութիւնների պատճառը գլխաւորապէս այն էր, որ նրա տղիկին ու փեսան Հնդկաստանի փչացած և անբարոյական վարքի տէր հայերից էին։ Այդ ընտանիքի պատճառով էլ մեր առաջին խմբագիրը վատնում է եկեղեցական և ազգային գումարներ, գառաստանի տակ է ընկնում և մնում է մի շատ ցաւալի մահով 1827 թուականին։

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆ

(Մահուան 25-ամեակի առիթով *)

Երբ 1865 թուականին Յիսիանովը մօտենայ Արեքսի հովտին և աւազաց գօրքերը պաշարեցին Երևանը, Խոյի և Սալմաստի կողմերից մի հայ գաղթականութիւն եկաւ, անցեալ աւազաց հողը, որպէսզի ազատ լինի պարսկական տիրապետութիւնից. գաղթականների մէջ էր Խոյեցի Եսայի քահանայ Նազարեանցը, որ բնակուեց Թիֆլիսի Հալաբար թաղում։

1812 թ. սեպտեմբերի 12-ին այդ քահանայի ընտանիքում ծնուեց չորրորդ զաւակը, որին տուին Մաթեոս անունը։ Նրանից ա-

*) Մեծ չափով օգտուել ենք Լէօի «Ա. Նազարեան» աշխատութիւնից։

Ստեփանոս Նազարեան

«Լոմա» 1905 թ.

ամէ ծնուել էին Դիմիթրիոսը, Հռիփսիմէն և Մարիրոսը։

Տէր Եսային իւր ժամանակի լաւ հոգևորականներից մէկն էր։ Դոնէ գիտէր գրել, կարդալ «բաւական ընտիր հայկաբանութեամբ»։ Ինչպէս երեւում է, նախապէս նա ինքն էր դաս տալիս իր երեխաներին։ Լինելով իրրև հայր սրտաբաց, սիրող, քնքշասիրտ խնամակալ, նա խստապահանջ էր, նոյն իսկ անգութ՝ ինչպէս ուսուցիչ։ Մանկավարժական այդպիսի սխեմայի բոլոր բարիքները վայելել է Յոհաննոսը, նախ քան դպրոց մտնելը։

Տանը ստացած կրթութիւնը, ի հարկէ, այրուբենն էր, Սազմոսը և ապա կտակարանը։ Յոհաննոսը անգիր էր անում սրբազան գրուածքները, բայց բոլորովին մեքենաբար, չհասկանալով անգիր արածի միտքը։

Չգիտենք, թէ որքան ժամանակ Նազարեանցը գրագիտութիւն սովորեց իւր հօր մօտ։ Այսքանն է յայտնի, որ հայրը նրան և Մարիրոս որդուն յանձնեց Պօղոս վարդապետին, որ Ներսէս Աշտարակեցու բացած նոր դպրոցի գլխավորն էր։ Այստեղ Նազարեանցը սովորում է հայկաբանութիւն Զամչեանի քերականութեան վրայ։ Նազարեանցը իր դասընկերների հետ վերջացրեց 1824 թ. տարափոխում է իսկական Ներսիսեան դպրոցը։

1827 թ. փետրուարի 24-ին նա հեռացաւ Ներսիսեան դպրոցից, վերջացնելով ուսումը։ Սակայն ուսումն աւարտելուց յետոյ էլ Նազարեանը յաճախում է դպրոց՝ պրօֆ. Շահան

Ջրպետից ֆրանսերէն սովորելու համար։ Վերջապէս Նազարեանին յաջողւում է գնալ Դօրպատ բարձրագոյն կրթութիւն ձեռք բերելու նպատակով։ Ութ տարի տևեց նրա դօրպատեան կեանքը։ Համալսարան մտնելու համար պէտք էր պատրաստուել, քննութիւն տալ, և եթէ մենք յիշենք, թէ որքան խեղճ ու թերի պաշարով էր նա գնացել Դօրպատ, հասկանալի կլինի, թէ ինչ հսկայական աշխատանք պիտի նա գործ դրած լինի՝ համալսարանական ուսանողին անհրաժեշտ գիտական պատրաստութիւնը ձեռք բերելու համար։

Դօրպատում Նազարեանը աւարտեց իւր ուսումը 1840 թուականին։ Այդտեղ նա նշանուեց գերմանացի մի օրիորդի հետ, ապա գնաց Պետերբուրգ, ուր ծնաց երկար և վերադարձաւ նորից Դօրպատ՝ ամուսնանալու համար։ Ամուսնացել է, ինչպէս երևում է, 1842-ին։

Պետերբուրգում, պատճառ վիսերի ազդով, Նազարեանը ուսումնասիրում էր արևելեան լեզուները։ Նա ձգտում էր Մօսկուայի Լազարեան ճեմարանի ուսուցիչ դառնալ, բայց այդ ձգտումն անկատար մնաց։

Այդ միջոցին Կազանի համալսարանում բացում են հայերէնի դասեր և մինիստրը Նազարեանին նշանակում է ուսուցիչ՝ տարեկան 2300 ր. ռոճիկով։

1843 թ. Նազարեանը պրօֆէսորական մի շրջանում կարդում է մի դասախօսութիւն հայոց հին գրականութեան մասին՝ «Бѣглый взглядъ

на исторію Гайканской Литературы до конца 13-го столѣтія» վերնագրով։ Ցաջորդ տարին այդ աշխատութիւնը տպւում է համալսարանի պաշտօնական օրգանի մէջ։

Անցնում է երեք տարի և Նազարեանցը հայ-պարսկական դպրութեան մագիստրոսի աստիճան ստանալու համար համալսարանին իբրև դիսերտացիա ներկայացնում է յիշեալ աշխատութեան երկրորդ մասը՝ հայոց գրականութեան պատմութիւնը 14-րդ դարի սկզբից մինչև 1840 թուականը։ Սակայն մագիստրոսի աստիճանն էլ չի բաւականացնում աշխատասէր գիտնականին։ Նա ձգտում է աւելի բարձրը։ Եւ ահա 1849 թ. նա ներկայացնում է մի նոր դիսերտացիա պարսկական բանաստեղծութեան մասին—(Ֆերդուսի և նրա «Շահնամէին»)—և սառնում է գիտօրի աստիճան։

Սակայն այդ բոլորը բաւարարութիւն չէ տալիս Նազարեանին. նրան քաշում էր հայկական իրականութիւնը. նա հայ հասարակութեանը ծառայելու էր ձգտում։ Եւ ահա միմանց յետևից լոյս են տեսնում հայերէն գրուած աշխատութիւնները։ Դեռ 1843 թ. նա պատրաստել էր «ընդհանուր պատմութեան անցքերի համառօտութիւնը» *), իսկ 1847 թ. «Ցաղագս փորձական հոգեբանութեան ճառ»-ը, որի մէջ աւելի նշանաւորը առաջաբանն էր, քան բուն հոգեբանութիւնը։ Այդ առաջաբա-

*) Այդ աշխատութիւնը տպագրուեց միայն 1851 թ. Լազարեանների օգնութեամբ։

նում Նազարեանը կրակոտ լեզուով խօսում է հայ գրականութեան ու առաջադիմութեան մասին։

Դրանից յետոյ լոյս է տեսնում «Վարդապետական կրօնի» գրուածքը, որ Նազարեանի առաջին աշխարհաբար աշխատութիւնն է և չափազանց մեծ ազդուկ հանեց հակառակորդների շրջանում։ Բայց Նազարեանցը հակառակորդներից վախեցող չէր։ Նա ունէր որոշ համոզմունք ու նպատակ և դրանց թելադրած ճանապարհով առաջ էր գնում։ 1853 թ. լոյս է տեսնում նրա մի այլ աշխատութիւնը՝ «Առաջին Հոգեղէն Կերակուր», որ առաջին աշխարհաբար քարոզիրքն է մեզանում։ Այդ էլ դեռ բոլորը չէ. 1857 թ. լոյս է տեսնում Նազարեանի զարմանալի աշխատասիրութեան արդիւնքը «Հանդէս նոր Հայախօսութեան» հսկայական գործը՝ երկու մեծ հատորներից հակացած, որ պարունակում են 1005 մեծադիր երեսներ։ Դրանից յետոյ լոյս է տեսնում Բէրնարդէն կը Սան Պիէռի «Պաւլոս և Վիրգինիա» վէպի թարգմանութիւնը՝ «Հնդկական Մուղը» փոքրիկ պատմուածքի հետ միասին և վերջապէս Սապի նշանաւոր «Գիւլիստանի» թարգմանութիւնը ռուսերէն լեզուով։

Բայց այդքան բազմաթիւ և բազմազան գրուածքները չէին Նազարեանի անուան անմահացնողը, այլ հրապարակախօսական գործունէութիւնը, որի արտայայտիչն էր «Հիւսիսափայլը»։

«Հիւսիսափայլ»—ով չէ լսել այդ անունը, ով չգիտէ, որ նա մեր մտաւոր վերածնութեան առաջին կոչնակն էր, որ իւր շուրջը խմբեց ժամանակակից լաւագոյն և ազատամիտ ոյժերին։ Այդտեղ են սկսել գրել Բաֆֆին, Դամառ-Բաթիկա, Սմբատ Շահազիզը, Սագաթեանը և ուրիշները։ Այդտեղ է իր վաւերական գրչի ոյժն այսայսական Միքայէլ Նալբանդեանը, որը Նազարեանի ամենամօտիկ աշխատակիցն ու գործակիցն էր։

Բայց ինչպէս գոյութիւն առացաւ այդ նշանաւոր ամսագիրը։ Տեսնենք։ Նազարեանը 1849 թ. մի անգամ ևս փորձում է բաղդը՝ Ռաչտաուր Լազարեանից պաշտօն խնդրելով Լազարեան ճեմարանում։ Բարեբաղդաբար այս անգամ փորձը աջողութեամբ է պսակւում և Նազարեանը տեղափոխւում է Մոսկուա։ Ահա այստեղ, Ռուսաստանի մտաւոր կենտրոնում, նա ձեռնարկում է «Հիւսիսափայլի» հրատարակութեանը 1858 թ.։

Գործը դժուար էր և մաշող աշխատանք պահանջող, բայց Նազարեանը դժուարութիւնից ու աշխատանքից վախեցող չէր։ Նա համարձակ կերպով ասպարէզ է մտնում և մի առանձին թափով քարոզում արդարութիւն, ազատութիւն ու ճշմարիտ առաջադիմութիւն։ Նա ասում է, որ հայ հոգևորականութիւնը կարօտ է բարենորոգման, որ գրաբարի փոխարէն պէտք է ժողովրդին մատչելի աշխարհաբար լեզու գործածել, որ պէտք է վերանորոգել այն ամենը, ինչ որ հին է և անպէտը,

ինչ որ խոչընդոտ է ազգային առաջադիմութեան։

Սակայն այդ համարձակ պահանջները մեծ իրարանցում են առաջացնում պահպանողականների շրջանում։ Օրեցօր աւելանում են «Հիւսիսափայլի» հակառակորդները, սաստկանում է թշնամութիւնը և վերջապէս գործը մատնութեան ու սորութեան է հասնում։ Բարեբաղդաբար Նազարեանը կարողանում է պաշտպանել իր իրաւունքները, և «Հիւսիսափայլը» շարունակում է լոյս տեսնել, թէև ոչ երկար։ Նրա բաժանորդների թիւը հետզհետէ նուազում է, նիւթականի կարիքը ուժեղանում, ուստի և 1862 թ. գադարում է այդ հրատարակութիւնը, 1864 թ. նորից վերականգնում և նոյն թուականի նոյեմբեր ամսին դադարում ընդմիշտ։

Դա զգալի կորուստ էր գիտակցող հայերի համար։ Բայց շատ քիչ էր այդպիսիների թիւը և նրանց ձայնը կորչում էր խաւարի մթնոլորտում, իբրև «ձայն բառաոոոյ յանապատի»։

«Հիւսիսափայլի» դադարումից երեք տարի անցած Նազարեանը թողնում է ուսուցչական պաշտօնը Լազարեան ճեմարանում։ Նա ուզում էր լինել հայ ժողովրդի հետ, աչքով տեսնել նրանց ցաւերը, ականջով լսել նրանց հառաչները, ուստի և 1869 թ. ուրախութեամբ յանձն է առնում Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնը, որ և շարունակւում է միայն երկու տարի։

1876 թ. նա ճանապարհորդութիւն է կատարում Եւրոպայում, իսկ 1879 թ. հիւանդանում և վախճանւում Մոսկուայում, ապրիլի 26-ին։ Տեղական հայ հասարակութիւնը ցրնցումով լսում է այդ բոթարեր լուրը և մեծ հանդիսով կատարում իւր հերոս-մշակի թաղումը։ Իզուր չէր նրա դագաղի վրա բանասեղծ Շահազիզն ասում.

Անձնուագործ դու մահարձան ըզ կանգնեցիր,
Ոչ հողանիւթ, որպես երկաթ որմաքար.
Հըզօր գրչով, սուրբ վաստակով ու անմահ գիր,
Զոյնչ կենդանի եւ յետ մահուան դու թողիր. .

—Նազարեան, իրաւացի կերպով նկատում է պ. Լէօն, դա մեր հերոսն է, նա մարմնացրեց մի նոր, մեզանում դեռ չտեսնուած, տիպ, հասարակութիւնը առաջնորդող տիպը։ Նրանով գրական գործիչը հասատատուն, պատուաւոր տեղ գրաւեց մեր հասարակութեան մէջ։ Մինչեւ Նազարեանը կային գրողներ, բայց չկային գրական հանատակներ։ Առաջ գրում էին սոսկ զուարճանալու համար, իսկ Նազարեանցը պատերազմում էր գրելով...

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԵՄՔԵՐ

Լ. Լ. Օ

(Առաքել Բաբախանեան)

(Ծնունդեան 45-ամեակի առիթով)

Շուշի քաղաքի յետ ընկած մի թաղում ապրում էր զերձակ Գրիգորը։ Նա ծանրաբեռնուած էր հոգսերով և հազիւ էր կարողանում ընտանիքի օրուայ պարէնը հայթայթել։ Ծանր ու մաշող էր նրա աշխատանքը, բայց անշահաւէտ։ Նա կարում էր գիշեր-ցերեկ, բայց զարձեալ ազքատ վիճակի մէջ մնում։ Ընտանեկան ծանր հոգսերը սպասում են նրան վերջապէս փոխել պարագմանքը։ Նա թէ և հազիւ գրել-կարդալ գիտէր, բայց շատ գրասէր և եկեղեցասէր էր, ուստի և որոշում է ժամկոչ դառնալ, եկեղեցուն սպասաւորել և այդ ճանապարհով իր ապրուստն հայթայթել։ Նրա կինը՝ եղիսաբէթը գիւղացի էր և անգրագէտ, ուստի և անկարող էր բացի ընտանեկան գործերը կատարելուց ուրիշ կերպ էլ օգնել ամուսնուն։

Ահա այսպիսի չարքաշ ծնողներից 1860 թ. ապրիլի 6-ին ծնւում է մի զաւակ. դա Առաքելն էր։ Աղքատութեան ծանր լծի տակ է անցնում նրա մանկութիւնը. հոգսերով է ծանրաբեռնուած մանկութիւնը։ Նորածին հետաքրքրութիւնները ցոյց են տալիս, որ արհեստական ձեով կարելի է էլէքտրականացնել ամպերը և անձրև տատնալ կամ մաքրել մթնոլորտը ծխից ու մթնոլորտից։

Ի՞նչպէս տուգել բազմապատկումը գումարման միջոցով։ Բազմապատկման գործողութիւնը տուգելու համար սովորաբար գործ է ածւում բաժանումը, բայց աւելի հեշտ և տարբ կերպով կարելի է տուգել նաև գումարման միջոցով։ Դրա համար հարկաւոր է բազմապատկելիի բոլոր թուանշանները գումարել. եթէ տացուի երկու կամ աւելի թուանշանից բազկացած թիւ՝ նորից գումարել և այդպէս շարունակել, մինչև որ վերջում տացուի մի թուանշան։ Նոյն ձեով պէտք է վարուել նաև բազմապատկիչի հետ և այդ երկու թուանշանները միմեանց վրա բազմապատկել։ Դրանից յետոյ պէտք է գումարել արտադրեալի թուանշանները և եթէ այդ հետևանքը հաւասար լինի վերևի երկու թուանշանների արտադրեալին, այն ժամանակ գործողութիւնը ճիշտ է կատարուած։

Ահա օրինակ. $15,432,617 \times 114,581 = 1,768,284,688,477$։ Այդ գործողութիւնն տուգելու համար գործադրելով նկարագրած միջոցը, կստանանք հետևեալը. բազմապատկելիի թուանշանների գումարն է $1+5+4+3+2+6+1+7=29$, $2+9=11$, $1+1=2$. բազմապատկիչ-

չինը՝ 1+1+4+5+8+1=20, 2+0=2։ Այդ երկու թուանշանը բազմապատկելով կստանանք 2×2=4։ Այժմ վերցնենք արտագրելի թուանշանները 1+7+6+8+2+8+4+6+8+8+4+7+7=76, 7+6=13, 1+3=4։ Ուրեմն գործողութիւնը ճիշտ է կատարուած, որովհետև 4=4։

ՕԳՏԱԿԱՐ ԴԻՏԵԼԻՔՆԵՐ

Մեղուի խայթոցի դէմ լաւ ազդում է սխտորը կամ սոխը։ Դրա համար հարկաւոր է խայթած տեղի վրա կաթեցնել այդ բոյսերից մէկի հիւթը, որը շուտով կմեղմացնի ցաւը և կոչնչացնի ուռոյցը։

Փտեցած սմերը երէկ մաքուր լուանանք, չորացնենք, ծածկենք այրած ու մանր փոշիացրած շիլով (квасцы), ապա հագնենք մաքուր գուլպաներ և այդ միջոցը կրկնենք մի քանի անգամ, քրտինքը հեռացնեն կնուազի և վերջը բոլորովին կոչնչանայ։

Ջրից հասող արիւնը կանգնեցնելու համար պէտք է ձեռքերը վերև բարձրացնել, ճակատի վրա դնել սառը փաթեթներ և շուտ շուտ փոխել։ Օգտակար է նաև բերով դոլ ջուր ներս քաշելը։

Կաթը չպիտի է խմել ջրի նման մի անգամից մեծ քանակութեամբ, որովհետև այդ դէպքում նա ստամոքսում շուտով թթում—լուծ է դառնում և մեծ դժուարութեամբ է մարսուում։ Աւելի օգտակար է խմել կամաց-կամաց, քիչ-քիչ։

Հարբուխից ազատ մնալու համար լաւ է առաւօտեան և երեկոյեան քթի մէջ քաշել ջուր։ Այդ ջուրը կարելի է պատրաստել թանկանքը, կոչնչացնել ներս մտած փոշին և կանխապահպանել մրսելուց։

Ոսկրացաւ ուռեցքների վրա շատ լաւ է ազդում իւրաքանչիւր օր մարմինը սառը ջրով տրորելը։ Բացի դրանից պէտք է որոշ դիէտա պահպանել՝ գինի և գարեջուր չխմել և ուտել գլխաւորապէս ձկնեղէն, ձու և թոչունների միս։

Այրուածքի ցաւերը մեղմացնելու համար պէտք է մի բաժակ ջրի մէջ լցնել մի գդալ սոդա. այդ լուծուածքով քրջել քաթանի կտորը և դնել այրուած անդամի վրա և ապա փոխել մի քանի անգամ։ Եթէ բշտիկները են գոյացել—լաւ է վրան ցանել սոդայի և կաթոփների ալիւրի խառնուրդ—փոշի։

Ականջացաւ դէմ լաւ միջոց է համարուում, անգլիացի բժիշկների ասելով, հետևեալը։ Երեսսրբիչի մի ծայրը թրջել ջրով։ պահակէտս դնել ծոծրակի վրա և ծածկել երեսսրբիչի չոր ծայրով, որպէսզի թացութիւնը շուտով չգոլորշիանայ։ Այդ միջոցը լաւ ներգործում է մանաւանդ լարուած մտաւոր աշխատանք, վիշտ կամ մտածմունք ունեցողների վրա։

Լուծողականի հասը շաոերին զգուշանք է պատճառում։ Դրա առաջն առնելու համար պէտք է բաժակի մէջ լցնել քիչ կօնեակ և ապա դառարկել ու անմիջապէս լցնել լուծողական և վրայից էլ մի բաժակ կօնեակ։ Կոնեակի հոտն ու համը բոլորովին կոչնչացնէ լուծողականի անախորժ ներգործութիւնը։

Ձաղ մարդիկ Եիսարել կարող են որոշ դիէտ պահպանելով։ Նրանք չպէտք է ուտեն վեռչինա, խոզատ միս, հում սեր, շաքար, կարտօֆիլ, բրինձ և առհասարակ ալիւրեղէն կերակուր։ Աւելի լաւ է ուտել գլխաւորապէս ձկնեղէն, ձու, թռչունի միս, կանաչեղէն և թարմ մրգեղէն։ Ամենքներից պրպտուում է կաթը, գարեջուրը և քացդր գինին։ Թէյ, սուրճ և կակաօ կարելի է խմել միայն առանց շաքարի ու կաթի։ Հանքային ջրերը օգտակար են։

ԳԻՏԱԿԱՆ ԶՈՒԱՐՃԱՆԻՔ

Ինչպէս պատրաստել բենզալեան կրակներ։ Դրա համար անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ նախ և առաջ հետևեալ պայմանները. բոլոր նիւթերը պատրաստել, պահել ու վառել մեծ զգուշութեամբ. ծեծել չափազանց մաքուր հաւանքի (ступка) մէջ, պահել չափազանց չոր տեղում և իրար խառնել փայտե գդալով և ոչ ձեռքով։ Ջանազան գոյների համար պէտք է վերցնել և զանազան բաղադրութիւն, այն է,

Սպիտակ.—12 մաս բորակ (селитра), 4 մաս ծծումբ, 3 - ալիւր և 1 մաս ծծմբային սիւրմա (сърнистая сюрьма)։

Դեղին.—20 մաս ազոտաթթուային բարէօն (азотокислый барій), 2 մաս բերտօլէտեան աղ (бертолетовая соль), 1 մաս փայտածուխ և մի քիչ ամբրայի փոշի (порошокъ амбры)։

Կանաչ. 2 մաս օպիրմենտ, 3 մաս ածուխ, 5—բերտօլէտեան աղ, 13—ծծումբ և 80—ազոտաթթուային բարիօն։

Կարմիր.—20 մաս ազոտաթթուային ստռոնցիյ (азотокислый строній), 6 մաս ծծումբ, 5 մաս բորակ, 2 մաս ծծմբային սիւրմա և 1 մաս (կամ աւելի քիչ) ածուխ։

Կապոյտ.—60 մաս բորակ, 16—ծծմբային սիւրմա, 8—ծծումբ, նոյնքան վառօդ, 4 մաս օպիրմենտ և 1 մաս նարդոսի իւղ (лавантуловое масло)։

Կրակ ստանալու համար խառնուրդ փոշին լցնում են երկաթի թիթեղի կամ քարի վրա և այրում։

Մաստակի օդի մէջ։ Վերցրէք թելը, թաթախեցէք բանձր աղաջրի մէջ և կորացրէք, ապա նոյն գործողութիւնը կրկնեցէք մի քանի անգամ, որպէսզի այդ աղը լաւ ծծուի թելի մէջ։ Դրանից յետոյ թելը ամրացրէք մի օգակից կամ մեխից և ներքևի ծայրին կապեցէք մի թեթև մատանի։ Եթէ թելը այրէք, մատանին կարձեալ կախուած կմնայ օդի մէջ, որովհետև թելի մէջ ծծուած ապանիւթը կպչողական օրէնքի ուժով կպահէ մատանին և թոյլ

չի տայ, որ ընկնի։ Պարզ է, ի հարկէ, որ գազանիքը չմտցնող ականատեսներին այդ խաղը մեծ զարմանք կարող է պատճառել։

Հասարակ օդաչուի։ Օդի մէջ կատարվող գանազան փոփոխութիւնները գուշակելու համար կարելի է գործածել հետեւեալ հասարակ միջոցը։ Պէտք է վերցնել հաւասար չափով քաֆուրի (камфора), սելիտրա և նաշատիր, հալեցնել մաքուր օդիով, հեղուկները լաւ խառնելով լցնել մի սրուակի մէջ և բերանը պինդ փակել ու վրան քսել մեղրամոմ։ Դրանից յետոյ սրուակը պէտք է կախել դէպի հիւսիս ուղղուած լուսամուտի առաջ։ Եթէ սրուակի միջի հեղուկը մաքուր ու պարզ է, դա նշան է, որ լաւ եղանակ կլինի. եթէ պղտորւում է՝ անձրեւ կգայ. եթէ հեղուկի վրա փոքրիկ ամպանման գոլորշի է գոյանում—դա փոթորկի նշան է. եթէ թիւերը են գոյանում—քամու նշան է. եթէ սովորական ամպեր են գոյանում—փոփոխական կամ խոնաւ եղանակի նշան է։

Ցամաքների կեանք պատրաստելու համար պէտք է վերցնել մօտ 6 վերշոկ երկարութեան մի ձող, ներքևի ծայրին կպցնել մեխ կամ օղակ և կախել մի որևէ ծանրութիւն (քար, երկաթ և այլն), որպէսզի ջրի մէջ դրած ժամանակ ձողի $^2/_3$-ը սուզուի։ Ձողի միւս ծայրին պէտք է կպցնել կարտոնի մի փոքրիկ կտոր. ապա պէտք է վերցնել մի բանկայ ջուր, մուրաբայի ջրով լցնել և մէջը դնել յիշեալ ձողը։ Այդ բոլորից յետոյ եթէ ձողի կարտոնի վրա դնենք մի լօա, նա վար կիջնի և մենք

կկարողանանք ջրից հանելով որոշել այդ քանը՝ դանակով պիծ քաշելով։ Եթէ 2 լօա դնենք, աւելի խոր կսուզուի, և մենք կկարողանանք այդ էլ դծով որոշել։ Այդպէս կարելի է մի քանի ասելիանները նշանակել և հարկաւոր դէպքում նամակը քաշելով որոշել, թէ նա քանի լօա է քաշում և քանի նամակատոմս է պահանջում։

Հ Ե Տ Ա Ք Ր Ք Ր Ա Կ Ա Ն

Թզուկների ազգարանը գտնւում է Ափրիկայում՝ Կօնգօ, Արուվիմի և Սիմլեկի գետերի շրջակայքում։ Երկիրը ծածկուած է հրաշալի անտառներով։ Ահա հէնց այդ անտառների մէջ են ապրում թզուկները՝ միայն 3—4 ոտնաչափ հասակ ունեցող մարդիկ։

Ճանապարհորդ Հայլի ասելով, դրանք բոլորն էլ գինուած են թունաւոր նիզակներով, որոնց թոյնը մեքսանի ժամից յետոյ մահ է առաջացնում։ Կերակրւում են գլխէ՛ք բացառապէս մսով և ապում են գիւղատնտեսական աշխատանքը։ Միայն որսորդութիւն է նրանց զբաղմունքը։

Ա.Հնոցի եւ անմահ մարդը։ Ի՞նչեր չի անում մարդկային հնարագիտութիւնը։ Շատ անգամ ասում են, թէ նա միայն մարդ ստեղծել չի կարող, բայց դա էլ ճիշտ չէ։ Ապացոյց վերցնենք Ամերիկայի կեանքից։ Այդտեղ վերջին ժամանակներս գործածութեան մէջ է մի մեքենայ, որ իր արտաքինով բոլորովին չի

տարբերում մարդուց։ Այդ մեքենայ-մարդը հագնում է վերջին մոդայով և ամբողջ օրերով թափառում է փողոցների ասֆալտաներն վրա, աչքերը շարժելով և մերթ ընդ մերթ ձեռքերը թափահարելով։ Նրան շարժողը մի էլէքտրական գործիք է, որ թաղցրած է փորի մէջ։ Բաւական է լարել այդ գործիքը և մարդը կսկսէ քայլել։ Բայց այդ դեռ բոլորը չէ. նրա ներսում դրած է մի ֆոնոգրաֆ, այնպէս որ մարդը երբեմն-երբեմն կանգ է առնում և բարձրաձայն զուարճանում այս կամ այն փերմային, այս կամ այն ապրանքը։ Մի խօսքով նա կատարեալ մարդ է, բայց չունի ո՛չ հոգի և ո՛չ միտ։

Այդ անհոգի մարդուն ամերիկացիները գործ են ածում րեկլամի համար, այսինքն նա մի բնորոշ գործիք է հորինութիւնները յայտարարելու կամ մի բան գովաբանելու համար։

Ի՞նչ արժէ բնաւորի մի կատուածք։ Մի թղթաօթի, որի խորհրդակիր լսնութիւնը հաւասար է 12 մատնաչափի, իր բոլոր պատրաստներով արժէ մօտ կէս միլիօն րուբլի։ Այդպիսի թղթաօթը կարող է արձակել 27 պուդ ծանրութեան գնդակը—17 վերստ հեռաւորութեան վրայ։ Իւրաքանչիւր այդպիսի գնդակ արժէ 2000 րուբլի։ Թղթաօթը 200 հարուածից յետոյ փչանում է անպէտքանում է, ուրեմն իւրաքանչիւր հարուածին գալիս է

500,000 —2500 ր. մաշուածք, ուրիշ խօսքով
200 — ասած՝ ոգպիսի հակատակա-

թղթաօթի իւրաքանչիւր հարուածն արժէ 2000+2500 ր.—4500 րուբլու։

Գեագէտ ձին։ Անցեալ տարի յունիս—օգոստոս ամիսներին Բելգիոնում մեծ հետաքրքրութիւն գրգռեց Ջօն-Օասէն ազգանունով մի պարոնի ձի, որը կանոնաւոր կերպով գրում—կարդում է և կատարում է թուաբանական չորս գործողութիւններ ամբողջ և կոտորակ թուերով։ Սկզբում այդ լուրը անհաւատալի էր թւում, բայց երբ մի քանի գիտնականներ և նոյն իսկ լուսաւորութեան գործերի մինիստրը-Շառուդը այցելեցին Հանսին (այդպէս է ձիու անունը)—և տեսան նրա արտակարգ հնարքը, այն ժամանակ հետաքրքրութիւնն ուելի սաստկացաւ։ Բոլորն էլ ուզում էին տեսնել զրագէտ ձիուն, լսել նրա խօսքերը... Եւ ահա մի քանի օրում Հանսը համաշխարհային հռչակ է ստանում և մեծ եկամուտների աղբիւր բաց անում իր տիրոջ համար։ Նրա համն մի շարժումից, մի հնչիւնից երևում է, որ օժտուած է արտակարգ ընդունակութիւններով, ունի լաւ յիշողութիւն ու հասկացողութիւն. նա այժմ 8 տարեկան է։ Նրա ուսումը տևել է մի քանի տարի և այն ձևով, ինչպէս դպրոցներում, որ շատ սիստեմով ու ծրագրով։

Վառարանի փախարէն ջուր։ Հիւսիս. Ամերիկայում կայ մի փոքրիկ քաղաք Բօյդէ անունով և 15000 բնակիչներով։ Այդտեղ ձմեռները սարսափելի ցրտեր են լինում, մինչև—28° Ռէօմիւրի։ Այդ պատճառով էլ վառարան-

Ներ տաքացնելը անպակն ծախս էր նստում։ Բայց անա մարդկային խելքը օգնության է հասնում։ Դեմմինդ անունով մի գնդապետ յանձն է առնում փրկել հայրենի քաղաքը այդ ծանր ծախսից։ Նա փորել է տալիս գետինը և 1000 ոտնաչափ խորության վրա Բէօմիլբի 40° տաքության ունեցող ջուր է գտնում. աւելի խորը՝ այն է 1250 ոտնաչափի վրա 50° տաք ջուր և վերջապէս 2000 ոտնաչ. վրա—83°։ Այդ ջուրը հաւաքում են ջրամբարներում և տալա խողովակներով անցկացնում խանութնալի ու բնակարաններն մինչև. բացի դրանից փողոցներն էլ ջրում են այդ ջրով, որով և մեղմանում է օդի բարեխառնութիւնը։

Անա այդպիսով տաքրեկրկայ ջուրը բերում է վառարանների տեղը և 5 անգամ պահպանում ժողովրդի ծախսերը։

Վ Ր Զ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0109867